# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 31 (1581) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 2012
VOLUME 32, NO. 31 (1581) SATURDAY, SEPTEMBER 1, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՆ ՄԱԹՈՍԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐ

*Դամասկոսի Ճոպար թաղամասի մէջ անծանօթ պայմաններու տակ Օգոստոս 28-ին սպաննուած են երեք հայեր: Այս մասին կը յայտնէ «Արմենփրես» գործակալութիւնը, յղում կատարելով Դամասկոսի Հայոց առաջնորդարանին: Առաջնորդարանէն յայտնած են, որ սպաննուած են 49-ամեայ Պետրոս, 46-ամեայ Գէորգ եւ 22-ամեայ Լեւոն Մաթոսեանները: Առաջնորդարանը կը ջանայ անոնց դիերը հակամարտութեան տարածքէն հանել:*

*Դամասկոսի հայերը կը տեղեկացնեն, որ սպաննուած հայերու մարմինները հակամարտութեան տարածքէն դեռ չեն հանուած: Արդէն 48 ժամ է սպաննուած հայերու անկենդան մարմինները փողոցի մէջ են, սակայն հայ համայնքի ներկայացուցիչները կարելիութիւն չեն ունեցած մօտենալու անոնց:*

*Անցնող շաբաթավերջին, Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ ինկած հրթիռի մը բեկորներէն սպաննուած է Ալին Մխճեան անունով հայ երիտասարդուհի մը:*

*Ընդդիմադիրներու եւ կառավարական զօրքերու միջեւ Սուրիոյ մէջ սկսած բախումներու հետեւանքով մինչեւ այսօր զոհուած Հայերու թիւը հասած է 14-ի:*

*Մեծ թիւով սուրիացիներ կը լքեն երկիրը եւ կը յայտնուին այլ երկիրներու մէջ՝ փախստականի կարգավիճակով: Վերջին շրջանին երկիրը կը լքեն նաեւ տեղի հայ համայնքի անդամները:*

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ Է 60 ՄԻԼԻՈՆ ԵՒՐՕ

*Եւրոպական Միութիւնը Հայաստանին 60 միլիոն եւրօ պիտի տրամադրէ՝ երկրէն ներս դատաիրաւական բարեփոխումներու, տնտեսական համագործակցութեան եւ Եւրոպայի Միութեան ու Հայաստանի միջեւ համագործակցութեան համար:*

*Եւրոպական յանձնաժողովը Արեւելեան գործընկերութեան ծրագիրի շրջագիծէն ներս ընդունած է 2012 թուականի համար Հայաստանի տարեկան գործողութիւններու ծրագիրը, որ պէտք է արագացնէ երկրէն ներս դատաիրաւական բարեփոխումները եւ Եւրոպայի Միութեան հետ երկկողմ յարաբերութիւններու զարգացման, քաղաքական եւ տնտեսական աւելի խոր համագործակցութեան համար պարարտ հող ստեղծէ:*

*«Նոր աջակցութիւնը ներառէ ազգային կարեւոր հաստատութիւններու համար վերապատրաստման կարելիութիւններ, մասնագիտական խորհուրդներ, իրաւաբաններու, դատաւորներու եւ դատախազներու դպրոցներու հիմնում, ինչ որ իր վերջնական արդիւնքով պէտք է ստեղծէ անկախ, թափանցիկ արդարադատութիւն, որ պէտք է ծառայէ հայ ժողովուրդին»,-*

*Շար.ը էջ 2*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՄԷՋ

*Այս ուսումնական տարուայ ընթացքին Ֆրանսայի միջնակարգ դպրոցներու պատմութեան եւ աշխարհագրութեան դասագիրքերը օժտուած են նոր ծրագիրներով, որոնց մէջ լայնօրէն ներկայացուած է 1915-16 թուականներու Հայոց ցեղասպանութիւնը:*

*Գիրքերուն մէջ տրուած են մանրամասն տեղեկութիւններ Օսմանեան կայսրութեան կառուցուածքի, ցեղասպանութեան սկզբնաւորման, գործադրման, այդ իրադարձութեան մէջ պատերազմի դերի, ինչպէս նաեւ երիտթուրքերու կառավարութեան, թրքական ազգայնականութեան վերաբերեալ: Օգտագործուած են աքսորեալներու կարաւանները ներկայացնող լուսանկարներ, արխիւային փաստաթուղթեր եւ քարտէզ մը, ուր նշուած են զանգուածային կոտորածներու շրջաններն ու աքսորի ճանապարհները:*

*Այս առթիւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը ուսումնասիրութիւն սկսած է Ֆրանսայի մէջ դպրոցական դասագիրքերու մէջ Հայոց ցեղասպանութեան փաստը ներառելու առնչութեամբ: Նման ուսումնասիրութիւն կատարելու յանձնարարական տրուած է Փարիզի մէջ Թուրքիոյ դեսպանութեան:*

*«Հուրիյէթ» օրաթերթին տուած հարցազրոյցի ընթացքին, Ֆրանսայի մէջ Թուրքիոյ դեսպան Թահսին Պուրճուօղլու ըսած է, որ նախորդ դասագիրքերու ուսումնասիրութիւնները իրենք ունին եւ այժմ պիտի ուսումնասիրեն նոր դասագիրքերը: Աւելի ուշ անոնց հիման վրայ զեկոյց կը կազմուի:*

*«Անկէ ետք պիտի որոշենք, թէ ինչպէս պէտք է վարուիլ»,- ըսած է Պուրճուօղլու եւ աւելցուած է, որ իրականութեան մէջ նման խօսակցութիւններ եղած են տակաւին 2001-ին, երբ Ֆրանսայի խորհրդարանը պաշտօնապէս ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը:*

*«Պէտք է նկատել, որ պատմութեան դասագիրքերու մէջ երկիրներու հանդէպ թշնամանք պէտք չէ ըլլայ: Նման օրինակ մը եղաւ Յունաստանի պարագային, եւ մենք պատմութեան դասագիրքերէն հանել տուինք ատելութիւն եւ գրպարտութիւն պարունակող արտայայտութիւնները: Սակայն Յունաստանը դեռ այդ քայլին չէ գացած: Դպրոցական դասագիրքերու մէջ ատելութիւն եւ քէն պէտք չէ ըլլայ»,- յայտարարած է դեսպանը:*

*Ըստ թուրք մեկնաբաններու, պաշտօնական Անգարան, որ Ֆրանսուա Օլանդի՝ Ֆրանսայի նախագահ ընտրուելէն ի վեր Փարիզի հետ յարաբերութիւններու վերականգնման մեծ յոյսեր կը կապէր, չի կրնար դժգոհ չըլլալ՝ Հայոց ցեղասպանութիւնը պատմութիւնը դասագիրքերու մէջ ներկայացնելու՝ Օլանդի կառավարութեան ընդունած որոշումէն:*

*Ֆրանսայի նախագահը անցած ամիս յայտարարած էր, որ պիտի կատարէ ընտրարշաւի իր խոստումը՝ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրէնքի ընդունման վերաբերեալ:*

## ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՆԱՊԷՍ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ




Սուրիոյ տագնապը եւ անոր անմիջական հետեւանքով ստեղծուած սուրիահայութեան տագնապալի առօրեան կ՚ահազանգէ ողջ հայութիւնը, զայն մատնելով մտատանջութեան:

Պատմութիւնը, իր ողջ էութեամբ, կը յուշէ ժողովուրդներու անցեալի ու ներկայի ճակատագիրը, իսկ անցեալի հետքերով ենթադրութիւնները կը տանին անորոշութեան ու անձկութեան գիրկը, որուն համար անմիջական հաստատակամութեամբ ու ծառայական ոգիով պէտք է դիմել գործնական քայլերու:

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի հայկական գաղութի երեք յարանուանութեանց, կուսակցութեանց եւ բարեսիրական միութեանց ներկայացուցիչները, ըլլալով արթուն հովիւն ու պահակը շրջանի հայութեան, սրբազան դերով մը համախմբուեցան եւ որոշեցին յառաջացնել ,Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմինը մը, որպէսզի կազմակերպչական եւ անմիջական դրամահաւաքի աշխատանքներով գաղութը լծուի գործի, շուտափոյթ կերպով տեղ հասցնելու հանգանակուած գումարները, որոնք պիտի ծառայեն կեանքեր փրկելու եւ բարոյական ու հոգեկան ապահովութիւն ներշնչելու Սուրիոյ տարածքին դժուարին պայմաններու մէջ ապրող մեր քոյրերուն եւ եղբայրներուն, ազգային հաստատութիւններուն:

*Շար.ը էջ 5*

## ԹՈՒՐՔԻԱ «ՊԱՏՐԱՍՏ Է ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԴԵՐ ՍՏԱՆՁՆԵԼ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԾՈՎ

*Թուրքիա պատրաստ է միջնորդական դեր ստանձնելու ղարաբաղեան հարցի լուծման գործով: Այս մասին յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Դաւութօղլու:*

*«Մենք պատրաստ ենք Իսթանպուլի մէջ բանակցութիւններ կազմակերպելու՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, կ՚ուզէինք նաեւ, որ Սուրիոյ շուրջ բանակցութիւնները եւս ընթանային Թուրքիոյ տարածքին», - ատրպէյճանական «Թրենդ» գործակալութեան համաձայն ըսած է Դաւութօղլու:*

*Ի պատասխան այս յայտարարութեան, Հայաստանի արտաքին գործոց փոխնախարար Շաւարշ Քոչարեան ըսած է. - «Եթէ Թուրքիայի արտաքին գործերի նախարարը իրապէս ցանկանում է նպաստել հակամարտութեան կարգաւորմանը, ապա Թուրքիան չպէտք է փորձի խեղաթիւրել ղարաբաղեան խնդրի էութիւնը, այն է՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրականացումը, որին ի պատասխան Ատրպէյճանի իշխանութիւնները դիմեցին Լեռնային Ղարաբաղի բնակչութեան դէմ էթնիկ զտումների քաղաքականութեան եւ ինքնորոշուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ լայնածաւալ ագրեսիայի իրականացման: Խնդրի կարգաւորման համար արդիւնաւէտ կը լինէր, եթէ Թուրքիան կարողանար դրդել Ատրպէյճանին բանակցել հակամարտութեան իրական կողմի՝ Լեռնային Ղարաբաղի հետ: Թուրքիան առնուազն պէտք է չշարունակի սատարել Ատրպէյճանի «ամէն ինչ կամ ոչինչ» դիրքորոշումը եւ բանակցային գործընթացը Մինսկի խմբի շրջանակներից դուրս բերելու փորձերը, որոնք ուղղուած են միջնորդների ջանքերը տապալելուն»:*

# ՍՏԻ ԼԻՄԻՏԸ ՍՊԱՌՈՒԵԼ Է

*ԿԱՐԷՆ ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆ*

*Շուտով նախագահական ընտրութիւններն են՝ Իշխանական դաշտից առաջադրուելու մտադրութիւն ունի Սերժ Սարգսեանը: Կայ տեսակէտ, որ ինչ-ինչ գործոնների ազդեցութեան տակ նա կարող է չառաջադրուել, բայց հաշուի առնելով այն հանգամանքը, որ ՀՀԿ ղեկավարը երկու անգամ յուշագիր է ստորագրել, որով պարտաւորուել է աջակցել ինքն իրեն, կարծում ենք, որ Սարգսեանն այդուհանդերձ կ'առաջադրուի:*

*Առաջադրուել-չառաջադրուելու հարցը թողնելով ժամանակի քննութեանը՝ հետաքրքիր կը լինէր իմանալ, թէ ինչի՞ց է խօսելու Սերժ Սարգսեանը որպէս նախագահի թեկնածու եւ ի՞նչ երեսով է հանրութեանը դիմելու: Գաղտնիք չէ, որ մինչեւ այժմ նա ինչ ասել է եւ ինչ խոստում տուել է, չի կատարել՝ Իրան-Հայաստան երկաթգիծ, Նոր ատոմակայան, Հիւսիս-հարաւ մայրուղի, Դիլիջանը միջազգային ֆինանսական կենտրոն, Ջերմուկը՝ առողջարանային կենտրոն, Գիւմրին՝ տեխնոպարկ (դիւրահաւատների համար՝ ծով), հայ-թրքական սահմանի բացում եւայլն: Սրանք այս իշխանութեան տուած խոստումների մի մասն էին, որոնք չեն կատարուել: Չի կատարուել նաեւ տնտեսական ճգնաժամից խուսափելու խոստումը՝ Մի խօսքով, ոչ մի բան չի կատարուել:*

*Միակ բանը, որը չէր խոստացուել, բայց կատարուել է՝ պետական կառավարման համակարգում բանսարկութեան եւ «մուտիլովկաների» չեշտակի աճն է, ինչպես նաեւ տպագիր եւ համացանցային լրատուամիջոցների (հեռուստադաշտն այլ խօսակցութեան թեմա է) գրեթէ ամբողջական սեփականաշնորհումն ու գեղամեանացումը (բացառութեամբ 3-4 կայքի եւ 1 թերթի՝ մնացած ազդեցիկները երիտօլիգարխիայի եւ «տիրացուի» ազդեցութեան տակ են): Սեփականաշնորհման ու գեղամյանացման փորձեր են արւում նաեւ քաղաքացիական դաշտում: վերջ: Բացի աւերածութիւններից՝ ուրիշ ոչ մի բանով աչքի չի ընկել «նախաձեռնողական այս իշխանութիւնը:*

*Սերժ Սարգսեանն այժմ սպառել է վստահութեան բոլոր լիմիտները, օգտագործել է ստի տոպրակի պարունակութիւնն ամբողջութեամբ եւ դատարկ ձեռքերով է մտնելու ընտրապայքարի մէջ: Ինչ սուտ էլ յօրինեն, միեւնոյն է փաստերն ու արդիւնքները ձեռքներիս տակ են:*

*Սերժի նախագահութեան սկզբնական փուլում իշխանական քարոզչամեքենան վստահութիւն էր մուրում հանրութիւնից՝ «Սարգսեանը կեղծիքների ու Մարտի 1-ի գնով դարձաւ նախագահ, բայց «գատո» հայ-թրքական դարակազմիկ գործընթաց է սկսել ու շուտով Հայաստանը տանելու է դէպի զարգացում» քիրվայական թեմայով: Այդ ամէնն աւարտուեց նրանով, որ «ֆուտպոլային» դիւանագիտութիւնից մնացին միայն մեր հաւաքականի կերած գնդակներն ու Ղարաբաղի հարցում Թուրքիայի ակտիւ ներգրաւման արդիւնքում Հայաստանի անվտանգութեան թուլացումը, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի փաստացի դադարեցումը:*

*Հայ-թրքական տապալումից եւ խայտառակ տնտեսական արդիւնքներից յետոյ նախագահի շրջապատից սկսեցին տարածել, թէ Սերժը տնտեսութեան մէջ խնդիրներ ունեցաւ, բայց «գատո» բոլոր օլիգարխների հարցերը լուծելու է եւ 2012-ի Մայիսեան ընտրութիւնների ժամանակ դաշտը մաքրելու է մականունաւորներից: Այդ ամէնն աւարտուեց նրանով, որ Սերժ Սարգսեանն ԱԺ ընտրութիւններին անձամբ սկսեց քարոզել օլիգարխ կոչուածների օգտին ու նրանց իրագործած ընտրակեղծիքների շնորհիւ մեծամասնութիւն վերցրեց խորհրդարանում:*

*2013-ի ընտրութիւններին ընդառաջ Բաղրամեան 26-ում նոր հեքիաթ են մտածել ու «անկախ» լրատուամիջոցների օգնութեամբ դրել շրջանառութեան մէջ:*

*«Սերժը յաջողութեան չհասաւ հայ-թրքական ոլորտում, խոստացած արդիւնքները չապահովեց տնտեսութեան մէջ, բայց «գատո» նա արեւմտամէտ է եւ դէպի քաղաքացիական Հայաստան է տանում մեզ»,- քարոզում են սերժահպատակ ԶԼՄ-ները՝ ստի տարածման բոլոր ռեկորդները գերազանցելով:*

*Առիթ ունեցել ենք գրելու, որ Սերժին արեւմտամէտ, ռուսամէտ կամ թրքամէտ ներկայացնելը սխալ է: Նա աթոռամէտ է, եւ եթէ անհրաժեշտ է, ապա կարող է լինել ե՛ւ արեւմտամէտ, ե՛ւ ռուսամէտ, ե՛ւ թրքամէտ. Նայած, թէ «օրուայ կուրսն» ինչպիսին է:*

*Իսկ եթէ ոմանք յամառօրէն ուզում են Սերժ Սարգսեանին տեսնել որպէս արեւմտամէտ գործիչ, ապա նմանատիպ արեւմտամէտ գործիչներ պատմութիւնը տեսել է: Այդպիսին էին, օրինակ, ՍՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Գորբաչովը եւ Լիպիական յեղափոխութեան առաջնորդ Քաղաֆին: Երկուսի հետ էլ Արեւմուտքը սիլի-բիլի էր անում: Ինչպէս յայտնի է, Գորբաչովի «արեւմտամէտութիւնն» աւարտուեց նրանով, որ իր ղեկավարած երկիրը վերացաւ աշխարհի քարտէզի վրայից, իսկ արեւմտեան առաջնորդների հետ գրկախառնուած նկարներ ունեցող Քազաֆիին փողոցում ինքնադատաստանի ենթարկեցին (ի դէպ, Արեւմուտքի գործուն աջակցութեամբ): Այնպէս որ երկրի ղեկավարի արեւմտամէտ ինքնահռչակուելն ինքնին արժէք չէ եւ ինքնաբերաբար չի յանգեցնում տուեալ պետութեան բարգաւաճման, մանաւանդ այն դէպքում երբ Արեւմուտքը քեզ որպէս էժանագին գործընկեր է համարում:*

*Եւ ուրեմն, ամէն ինչ պէտք է անել, որպէսզի «արեւմտամէտ» Սերժը Հայաստանը չտանի ՍՍՀՄ-ի ճանապարհով, ինչպէս նաեւ չենթարկուի «արեւմտամէտ» Քաղաֆիի ճակատագրին: Այսինքն՝ ճիշտն այն կը լինի, որ Սերժն ամէն դէպքում չմասնակցի նախագահական ընտրութիւններին որպէս թեկնածու:*

*«7ՕՐ»*

# ՉԷԶՈՔՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ Է ՊԵՏՔ

*ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

*Թեհրանում մեկնարկել է Չմիաւորման շարժման երկրների գագաթնաժողովը, որին մասնակցում է նաեւ Սերժ Սարգսեանը: Եւ Հայաստանի նախագահի ներկայութիւնը Իրանում նշանակում է ուժերի համաշխարհային դասաւորուածութեան նկատմամբ որոշակի վերաբերմունք:*

*Չմիաւորման շարժումը սկզբնապէս ստեղծուել է այն երկրների կողմից, որոնք այդ ժամանակ գործող ռազմական բլոկների անդամներ չէին: Մինչ այժմ, այսինքն 1956 թուականից ի վեր, աշխարհում շատ բան է փոխուել. փլուզուել է Վարշաւեան համաձայնագիրը, յայտնուել են նորանկախ երկրներ, ստեղծուել է ՀԱՊԿ-ը: Չմիաւորման շարժման էութիւնը նոյնպէս փոխուել է: Այն Արեւմուտքի քաղաքա-տնտեսական էքսպանսիայի դէմ Արեւելքի դիմադրութեան հարթակներից մէկն է դարձել, եւ շարժման համաժողովի մասնակցութիւնը անուղղակի նշանակում է համաձայնուել դրան:*

*Ուզենք, թէ չուզենք, սակայն աշխարհում հակասութիւնները տարէցտարի աւելի են սրւում՝ մօտենալով հերթական պատերազմին, արդէն՝ միջքաղաքակրթական: Ըստ էութեան, այս պատերազմն արդէն տարբեր ճակատներում ընթանում է, եւ երկրները ժամանակ առ ժամանակ ստիպուած են կատարել դժուար ընտրութիւն:*

*Հայաստանը նոյնպէս կանգնած է ընտրութիւն առաջ. Նրան առաջարկում են Եւրասիական միութիւն, որի գլխաւոր նպատակն, ըստ երեւոյթին, կը դառնայ Արեւմուտքի էքսպանսիային դիմադրութիւնը, եւ եւրաինտեգրումը, որը Հայաստանին կը տեղափոխուի բարիկադի արեւմտեան կողմը: Հայաստանը տատանւում է, քանի որ տեսնում է, որ երկու ուղիներն էլ նրան տանում են ոչ դէպի բարգաւաճում: Եթէ եւրասիական ճանապարհը վերադարձ է դէպի ԽՍՀՄ, կեղծ տնտեսութեան, կոռուպցիայի, սուտ հայրենասիրութեան եւ այլնի շարունակութիւնն է, ապա Եւրամիութիւնը կարող է դառնալ, բարեփոխումների բացակայութեան դէպքում, հումքային կցորդ-երկրի վերածուելու հեռանկար, ընդ որում Ռուսաստանի դէմ հակամարտութեան գնով:*

*Չմիաւորուելը եւ չէզոքութիւնը շատ լաւ միջոց է աշխարհաքաղաքական գործընթացների նկատմամբ սեփական վերաբերմունքը հռչակելու համար, եւ Հայաստանը կարող էր մշակել իր չէզոքութեան ռազմավարութիւնը՝ յայտարարելով, որ մտադիր է ղեկավարուել միայն սեփական ազգային շահերով: Սակայն այդ ճանապարհը պահանջում է համարձակութիւն եւ ռիսկային քայլեր, առաջին հերթին քաղաքականութեան եւ տնտեսութեան ազգայնացում, բառի լայն իմաստով:*

*Երբ չէզոքութեան կամ ինչ-որ կողմնորոշման մասին խօսում է նախագահը, ով ընտրուել է վիճելի ընտրութիւնների ժամանակ, երբ երկրում չկայ եկամուտների եւ սեփականութեան գոյքագրում, երբ նոյնիսկ վարչապետն ընդունում է, որ տնտեսութեան կէսը «ստուերում» է, երբ օլիգարխները հարստանում են, իսկ երկրում կուտակւում են շատ ու շատ պարտքեր, այդպիսի երկրի ղեկավարութիւնը չի կարող խօսել սեփական ուղու մասին: Նրան նետելու են ինչպէս գնդակ, քանի դեռ նա չի յայտնուել ինչ-որ մէկի դարպասում:*

*Գալիք աշնանը Հայաստանի ղեկավարութեան համար լաւ հնարաւորութիւն է ստեղծուելու երկիրն այս ատրակցիոնից դուրս բերելու համար, երբ դու չգիտես, թէ ինչ է քեզ սպասում կտրուկ շրջադարձի հետեւում: Դրա համար ղեկավարութեանը հարկ է հասարակութեան հետ կիսուել տեղեկատուութեամբ եւ պատասխանատուութեամբ: Երբ երկրում պատասխանատուութիւնն իր վրայ է վերցնում հասարակութիւնը, ոչ մի գերտէրութիւն չի կարող նրա հետ խօսել ուժի կամ պարտադրանքի լեզուով:*

*Սերժ Սարգսեանն առայժմ փորձում է ինքնուրոյն դուրս գալ այս լաբիրինթոսից, սակայն ինչ որ պահի նա էլ կը հասկանայ, որ պէտք է օգնութեան կանչել հասարակական կարծիքը: Եւ որքան շուտ գայ այդ պահը, այնքան Հայաստանին հեշտ եւ անցաւ կը լինի աշխարհաքաղաքական կողմնորոշման ընտրութիւնը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*ըսուած է Եւրամիութեան պաշտօնական կայքէջին վրայ:*

*Հարաւային Կովկասէն Արեւելեան գործընկերութեան մէկ այլ երկիր՝ Վրաստանին նոյնպէս 60 միլիոն եւրօ կը տրամադրուի:*

*Ատրպէյճանը Եւրոպական Միութենէն նուազ ֆինանսական աջակցութիւն պիտի ստանայ, քանի որ այդ երկիրը, ի տարբերութիւն Հայաստանի եւ Վրաստանի, ԵՄ-ի հետ դեռ չէ սկսած խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի գօտի ստեղծելու շուրջ բանակցութիւնները եւ Ատրպէյճանին տրամադրուող 19.5 միլիոն եւրոն կ'օգտագործուի արդարադատութեան եւ գաղթականական ոլորտներուն:*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆԸ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

*«Հանրապետութիւն» կուսակցութիւնը պատրաստւում է ակտիւ մասնակցութիւն ունենալ 2013թ. նախագահի ընտրութիւններում, սակայն ինչ կարգավիճակով, դեռ չի որոշել:*

*«Ես կարող եմ զինուոր էլ լինել, կարող եմ հրամանատար էլ լինել»,- «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը:*



Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան

*Առաջիկայում «Հանրապետութիւնը» պատրաստւում է համագումարի. «Նախատեսւում է, որ այն տեղի կ՚ունենայ մինչեւ Սեպտեմբերի վերջ»:*

*Թէեւ այս պահին պարոն Սարգսեանը դեռ չի տեսնում նախագահի ընտրութիւններում իր մասնակցութեան ձեւը, բայց խոստանում է. «Եթէ լինի այնպիսի իրավիճակ, որ իմ մասնակցութիւնը հասարակութեան մօտ յոյս, փոփոխութեան հնարաւորութիւն կ՚առաջացնի, ես իմ պարտքը կը համարեմ իմ թեկնածութեամբ մասնակցելը: Քաղաքական կուսակցութիւնը չի կարող երկրում տեղի ունեցող նման կարեւոր գործողութեանը չմասնակցել: Պահը կը գայ, ես աւելի յստակ կ՚ասեմ իմ մասնակցութեան մասին»:*

*ՀԱԿ-ի դուրս գալուց յետոյ, բաւական ժամանակ է անցել, սակայն «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդը իրենց յայտարարութեանը աւելացնելու ոչինչ չունի: «Ժամանակը ցոյց կը տայ, ով էր ճիշդ»,-ասաց պարոն Սարգսեանը:*

*Ինչ վերաբերում ՀԱԿ անդամ որոշ ուժերի այն յայտարարութիւններին, թէ անկախ նրանից, որ որոշ ուժեր լքեցին Կոնգրէսի շարքերը, միեւնոյն է մօտ ապագայում նրանց ճանապարհները խաչուելու են, ապա Արամ Սարգսեանը ոչ հերքում եւ ոչ էլ հաստատում է նրանց տեսակէտը. «Դա այդ ուժերի իրաւունքն է: Ես կարող եմ ասել, որ ՀԱԿ-ում կան մի շարք քաղաքական ուժեր, որոնց հետ «Հանրապետութիւնը» լուրջ ճանապարհ է անցել մինչեւ Կոնգրէսի ձեւաւորում: Քաղաքական դաշտում այդ կուսակցութիւնները մեր բարեկամներն են, եւ մենք նրանց հետ մրցակցելու խնդիր չունենք: Մենք միասին պայքարելու խնդիր ունենք»:*

*Պարոն Սարգսեանը որեւէ քաղաքական ուժի անուն չնշեց. «Մենք հակուած ենք համագործակցել բոլոր ազնիւ ընդդիմադիր ուժերի հետ, ովքեր ժողովրդի առաջ առանց թաքնուելու, առանց յետին մտքերի եւ պայմանաւորուածութիւնների, գործընթաց են ծաւալել իշխանափոխութեան համար»:*

*«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդի խօսքերով՝ այս պահին իրենք զբաղուած են ներկուսակցական խնդիրներով՝ իրենց տեղն ու դերն են յստակեցնում 2013թ. նախագահի ընտրութիւններից առաջ:*

*Ի դէպ, հանրահաւաքներն ու զանգուածային այլ միջոցառումները պարոն Սարգսեանը ինքնանպատակ չի համարում, սակայն եթէ ժողովուրդը որոշի դուրս գալ փողոց, խոստանում է, որ նրա կողքին կը լինի:*

# «ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ». ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՏ Է

*Այն լուրերը, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավարը 2013 թուականին կայանալիք նախագահական ընտրութիւններին Սերժ Սարգսեանի թեկնածութեան աջակցութեան համար առաջադրել է երկու նախապայման, իրականութեանը չեն համապատասխանում: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը:*

*Ըստ Զոհրաբեանի՝ վերջին ժամանակներս մամուլում, «հաւաստի» աղբիւրներին վկայակոչելով, յայտնւում են կայանալիք նախագահական ընտրութիւններին «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդի դիրքորոշման վերաբերեալ լուրեր, քաղաքագէտների մտացածին վարկածներ այդ թեմայով: Սակայն այդ բոլորն իրականութեան հետ կապ չունեն: ««Բարգաւաճ Հայաստանից» նախագահական ընտրութիւնների վերաբերեալ հարցին պատասխան ստանալու փորձերը յաջողութիւն չեն ունենայ: Մեր պատասխանը մէկն է: Երբ «Բարգաւաճ Հայաստանը» ճշտի իր դիրքորոշումը 2013 թուականին կայանալիք նախագահական ընտրութիւնների վերաբերեալ, այդ մասին համապատասխան յայտարարութիւն կ՚արուի», - ասել է Զոհրաբեանը:*

*Նշենք, որ լրատուամիջոցներում շրջանառւում է այն տեղեկութիւնը, որ կիրակի օրը երկիր վերադարձած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահը Գագիկ Ծառուկեանը հանդիպել է Մասիսի ակտիւիստների հետ եւ խօսել է ոչ միայն այդ քաղաքի քաղաքապետի ընտրութիւնների, այլեւ կայանալիք նախագահական ընտրութիւնների մասին: Նա յայտարարել է, որ երկու նախապայման է առաջադրել նախագահական ընտրութիւններին Սերժ Սարգսեանին աջակցելու համար. «Բարգաւաճ Հայաստանին» կառավարութիւնում յատկացնել տեղերի 30 տոկոսը եւ փոխել վարչապետին: «Եթէ նա համաձայնի իմ պայմանին, ապա մենք նրան կ՚աջակցենք, եթէ ոչ, ապա ես անձամբ իմ թեկնածութիւնը կ՚առաջադրեմ», - ասել է Գագիկ Ծառուկեանը՝ յատուկ ընդգծելով, որ «Բարգաւաճ Հայաստանը» մտադիր չէ աջակցել այլ թեկնածուների, այդ թւում նաեւ Ռոբերդ Քոչարեանին կամ Կարէն Կարապետեանին, որոնց անունները նշւում են որպէս «Բարգաւաճ Հայաստանի» թեկնածուներ:*

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՉԳՏՈՒՄ Է ԱՐԴԻՒՆԱՒԷՏ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ»

*Երկկուսակցական համակարգն արդիւնաւէտ խորհրդարանական կուսակցութիւնների առկայութիւն է ենթադրում, որոնք իրար են յաջորդում իշխանութիւնում. Հայաստանի դէպքում չի կարելի խօսել երկկուսակցական համակարգի մասին ՏԻՄ ընտրութիւնների արդիւնքներով: Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասաց քաղաքագէտ, ԱՊՀ երկրների ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէն Ալեքսանդր Մարկարովը՝ աւելացնելով, որ առաջիկայ ՏԻՄ ընտրութիւնների արդիւնքներով՝ այս կամ այն կուսակցութիւնները կը ներկայացուեն ՏԻՄ-ում եւ այս կամ այն չափով վերահսկողութիւն կը ստանան:*



ԱՊՀ երկրների ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէն Ալեքսանդր Մարկարով

*Պատասխանելով հարցին, թէ ինչու ՏԻՄ ընտրութիւններում Հայ ազգային կոնգրէսը, «Ժառանգութիւնը», ՀՅԴ-ն ակտիւութիւն չեն դրսեւորում, Մարկարովն ասաց, որ քաղաքական պայքարի մասնակցութիւնը պահանջում է մշտական մասնակցութիւն քաղաքական խնդիրներին: «Այն, որ ընդդիմադիր ուժերն ընտրութիւններին չեն մասնակցում, պայմանաւորուած է կամ ռեսուրսների բացակայութեամբ, կամ դրանց քիչ քանակով, որոնք տուեալ կուսակցութիւնները ձգտում են արդիւնաւէտ օգտագործել 2013-ին կայանալիք նախագահական ընտրութիւններում»,-պարզաբանեց փորձագէտը:*

*Ի պատասխան այն հարցի, թէ արդեօք «Բարգաւաճ Հայաստանի» ակտիւութիւնը եւ ՀԱԿ-ի պասիւութիւնը ՏԻՄ ընտրութիւններում չի հանգեցնի ՀԱԿ-ի վերջնական թուլացմանը, Մարկարովն ասաց. «Չեմ կարծում, թէ առաջիկայ կէս տարում ՀԱԿ-ը կը հեռանայ երկրի քաղաքական ասպարէզից, քանի որ որոշակի տեղ է այնտեղ զբաւում: ՀԱԿ-ի ընտրազանգուածը առանձնայատուկ է, եւ դա այն բանի գրաւականն է, որ Կոնգրէսը չի անհետանայ քաղաքական բեմից: Իր յուրայատկութեամբ աչքի է ընկնում նաեւ ԲՀԿ-ի ընտրազանգուածը: Սակայն հարցն այլ է՝ ինչպէս իրեն կը դրսեւորի ԲՀԿ-ն՝ որպէ՞ս իշխանութիւնների այլընտրանք, թէ՞ իրական ընդդիմութիւն ՀՀԿ-ի նկատմամբ»:*

# «ՎԱՐՉԱՊԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՖՈՆԱՅԻՆ» ԵՆ»

*ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանի փոփոխութեան, եւ առհասարակ, տնտեսութեան հետ կապուած որեւէ հարց եւ հարցադրում Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնում չի քննարկուել եւ օրակարգում չի եղել: Այս մասին Tert.am-ի հետ զրոյցում նշեց ԱԺ «Հայաստանի Հանրապետական կուսակցութեան» խմբակցութեան անդամ Յովհաննէս Սահակեանը՝ աւելացնելով.«Առաւել եւս, դրա քաղաքական պահանջն էլ չկայ: Եւ եթէ կան խնդիրներ, ապա քաղաքական ուժերը, գործիչներն ազատ են իրենց առաջարկները ներկայացնելու եւ՛ ԱԺ, եւ՛ տարբեր հարթակներում դրանք քննարկելու»:*

*Յիշեցնենք, որ վերջին շրջանում կրկին ակտիւօրէն սկսել է շրջանառուել վարչապետի հնարաւոր փոփոխութեան հարցը (աւելին, լրատուամիջոցներից մէկը կոնկրետ հնարաւոր սցենար էր մատնանշել, ըստ որի, ԲՀԿ-ն կը միանայ կոալիցիային, եթէ պաշտօնանկ արուի Տիգրան Սարգսեանը- Tert.am), իսկ այսօր ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանը Zham.am-ին տուած հարցազրոյցում անուղղակի, բայց քննադատել էր Կառավարութեան ղեկավարին:*

*«Ծառուկեանն արդէն քանի տարի է ասում է, որ երկրի տնտեսութեան վիճակը լաւ չէ, ժողովրդի սոցիալական վիճակը ծանր է, արտագաղթի տեմպերը մտահոգիչ են: Մարդկանց մօտ յուսալքութիւնն ուժեղանում է: Քանի՞ տարի է՝ ես ասում եմ՝ երկրում լուրջ փոփոխութիւններ են պէտք: Նաեւ հենց այդ պատճառով մենք հրաժարուեցինք մաս կազմել կոալիցիային: Չի կարող երկրի միւս ոլորտներում անկում լինի, լճացում լինի, իսկ սպորտում՝ միայն փայլուն յաղթանակներ լինեն»,- որպէս Հայաստանի օլիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանը յաւելել էր, որ ամէն տարի Հայաստանից տասնեակ հազարաւոր արտագաղթողների թւում եւ՛ խոստումնալի սպորտսմեններ կան, եւ՛ ապագայի չեմպիոններ ու մեդալակիրներ:*

*ՀՀԿ-ական պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը յաւելեց, թէ նման լուրերի տարածումը «որոշակի ֆոն» ստեղծելու նպատակ է հետապնդում, սակայն իբրեւ ՀՀԿ քաղխորհրդի անդամ վերջինս նշեց, թէ պատրաստ են երկրի տնտեսութեանը, մշակոյթին, սպորտին վերաբերող ցանկացած հարց քննարկել եւ ներկայացնել իրենց տեսակէտները:*

*Ի պատասխան մեր այն հարցին, թէ ԲՀԿ առաջնորդն իր հարցազրոյցում խօսել էր կոնկրետ երեւոյթների՝ արտագաղթի բարձր տեմպերի ու ժողովրդի սոցիալական ցածր մակարդակի մասին, ՀՀԿ-ական պատգամաւորը նկատեց, որ նման քննադատութիւն եղել է նաեւ նորընտիր Ազգային ժողովում Կառավարութեան ծրագրի հաստատման ժամանակ, ինչի վերաբերեալ ՀՀԿ-ն իր կարծիքը ներկայացրել էր, իսկ Կառավարութիւնն էլ իր հերթին՝ «տնտեսութեան վիճակն ու աճի տեմպերը»:*

## ԼՈՒՐԵՐ

# «ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՕԴԱԿԱՅԱՆՈՒՄ ՀԱՆԳՐՈՒԱՆԱԾ ՍԻՐԻԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՏ Կ'ՈՒՂԱՐԿՈՒԻ



*Սուրիահայ ընտանիքներ կը շարունակեն ժամանել Հայաստան*

*ՀՀ ոստիկանութիւնը պարզաբանում է ներկայացրել «Զուարթնոց» օդանաւակայանի թռիչքի պատրաստուող ուղեւորների համար նախատեսուած փակ տարածքում արդէն մէկ օր հանգրուանած սիրիահայ ութ հոգանոց ընտանիքի շուրջ ստեղծուած իրավիճակի վերաբերեալ եւ նշել, որ ՀՀ ժամանած ընտանիքի 9 անդամները չեն ներկայացրել ազգութեամբ հայ լինելու հանգամանքը հիմնաւորող որեւէ փաստաթուղթ:*

*Յիշեցնենք, որ Tert.am-ը անդրադարձել էր այս ընտանիքին, որի վերաբերեալ Սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարեանը յայտնել էր, որ ստեղծուած է «պատային իրավիճակ»:*

*Ոստիկանութեան պարզաբանմամբ՝ համաձայն «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 9-րդ յօդուածի՝ Սիրիան նոյնպէս ընդգրկուած է այն երկրների ցանկում,որոնց քաղաքացիները մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրեայ պետութիւններում ՀՀ դիւանագիտական ծառայութեան մարմիններ եւ հիւպատոսական հիմնարկներ, իսկ նոյն օրէնքում կատարուած փոփոխութիւնները, որոնց համաձայն ՝ նշուած պետութիւնների ազգութեամբ հայ քաղաքացիները ՀՀ սահմանային անցման կէտերում կարող են ստանալ առանց հրաւէրի մուտքի վիզա, վերաբերում է միայն ազգութեամբ հայերին:*

*ՀՀ կառավարութիւնը 2012 թուականի Յուլիսի 26-ի թիւ 941-Ն որոշմամբ սահմանել է ազգութեամբ հայ հանդիսանալու հանգամանքը հիմնաւորող փաստաթղթերի ցանկը: Դրանք են՝ ազգութեամբ հայ լինելու վերաբերեալ նշում պարունակող անձնագիր կամ միջազգայնօրէն ճանաչուած՝ անձը հաստատող ճամբորդական փաստաթուղթ, ազգութեամբ հայ լինելու վերաբերեալ նշում պարունակող ծննդեան վկայական, ազգութեամբ հայ լինելու հանգամանքը հիմնաւորող այլ փաստաթուղթ՝ հաստատուած օտարերկրեայ պետութիւններում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեան կամ հիւպատոսական հիմնարկի կողմից:*

*Նշենք, որ օդանակաւակայանում ապաստանած քոյրերի եղբայրը՝ Մեսրոպ Հինդոեանը, Blognews-ին «Քանի՞ գրոշ արժէ հրաւէրքդ տիկի՛ն Հրանուշ, կամ թէ ինչպէս Սիրիայից գաղթած հայ ընտանիքին օդանաւակայանից անմիջապէս հետ ուղարկեցին» վերտառութեան ներքոյ տեղեկացրել է, որ օդանաւակայանի «հայ գերիների մէջ իր հարազատ քոյրերն են, որոնց՝ ամենամեծը 8 տարեկան, ամենափոքրը՝ 9 ամսեկան 5 երեխաների հետ, որոնց, ըստ սփիւռքահայի՝ հրահանգուել է հետ ուղարկել վաղուայ թռիչքով:*

*«Վիզա չստացան երկու քոյրիկներս հայ լինելով հանդերձ, եւ իմ մաման, որ 40 տարի է հայ տղամարդու կին է: Սկզբում ասեցին՝ ապացուցէք, որ հայ էք, ու իրանք եկեղեցում կնքուած են, մկրտութեան բոլոր փաստաթղթերը ֆաքսով ուղարկեցինք Երեւան, հայկական դեսպանատունն էլ յատուկ Դամասկոսից զանգահարել է ու գրութիւն է ուղարկել, որ այս տուեալ մարդիկ պատկանում են Սիրիայի հայկական համայնքին եւ հայ են»:*

*Մեսրոպը նշում է, որ հայրը՝ Ժան Հենդեանը եւ մայրը՝ Լաիլա Միրոն հանդիսանում են Սիրիայի հայ համայնքի ամենամեծ հովանաւորներից մէկը, ամէն տարի նրանք իրենց հովանաւորութեան տակ են առնում 10-ից աւել հայ ուսանողների՝ հոգալով նրանց բոլոր կարիքները: Ինքը՝ Գերմանիայում ապրող Մեսրոպն էլ ամէն տարի մասնակցում է համահայկական դրամահաւաքին:*

*Դիմելով Սփիւռքի նախարարին, սիրիահայը դիմում է. « Դուք չէ՞ք, որ ամբողջ օրը TV-ով յայտարարում, որ մեր դռները բաց են Սփիւռքին: Այս Սփիւռքը, որ միշտ ձեռք էր մեկնել ձեզ մութ ու խաւար տարիներին: Իսկ հիմա մերոնց առանց որեւէ բացատրութեան մերժում էք, եւ ստորաբար վերաբերւում նրանց: Մենք ձեզանից բան չունենք պահանջելու, քանի որ դրա կարիքը չունենք, այլ մերոնք ուզեցել են միայն մէկ ամսով գալ Հայաստան հանգստանալու ու մեր մօտի անորոշ վիճակից մի որոշ ժամանակ անջատուել ու խախանդուել»:*

*Նամակագիրը նշում է, որ հարազատները Հայաստան են եկել Թուրքիայից, քանի որ Հալէպում հիմա ահաւոր վիճակ է, ու իրենց երեխաներին չվտանգելու նպատակով, ցանկացել են Թուրքիայով հասնել Հայաստան:*

*Մեսրոպը յաւելում է, որ առաջին անգամ է տեսնում, որ մարդկանց «դեպորտ» անելու՝ արտաքսելու համար նրանցից փող են վերցնում, ինչը եղել է իր հարազատների դէպքում՝1400 եւրոյի չափով:*

# «ՀԱՐՍՆԱՔԱՐԻ» ԳՈՐԾԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹԻՒՆՆ ԸՆԹԱՑՔԵԼ Է ԲԱԶՄԱԹԻՒ ԿՈՊՏԱԳՈՅՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ

*«Հարսնաքար» ռեստորանային համալիրում տեղի ունեցած ողբերգական միջադէպի առնչութեամբ յարուցուած քրէական գործի նախաքննութիւնն ընթացել է քրէական եւ քրէական դատավարութեան օրէնսգրքերի բազմաթիւ կոպտագոյն խախտումներով: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Վահէ Աւետեանի իրաւայաջորդի փաստաբան Տիգրան Եգորեանը, ով վստահեցրեց, որ Ռուբէն Հայրապետեանը որպէս կասկածեալ պէտք է ընդգրկուի գործում: Մինչդեռ, այս եւ 20-ից աւելի նման միջնորդութիւններն, ըստ փաստաբանի, անհիմն ձեւով մերժուել են:*

*«Քրէական գործի նիւթերում առկայ են փաստեր, որոնք ցոյց են տալիս, որ վեց մեղադրեալներից հինգը, բացի մատուցողից, այդ օրն ուղեկցել են Ռուբէն Հայրապետեանին՝ Երեւանից Սեւան գնալու եւ վերադառնալու ճանապարհին: Սա ապացուցում է, որ հակառակ գործում առկայ կեղծ պայմանագրերի եւ ՀՀ ոստիկանութեան Յատուկ կարեւորութեան գործերի քննչական վարչութեան պետ Վահագն Յարութիւնեանի պնդումների՝ այս մարդիկ եղել են Ռուբէն Հայրապետեանի անձնական թիկնազօրի անդամները: Ուստի, այս կապակցութեամբ քննչական խմբին միջնորդել էինք որպէս կասկածեալ ներգրաւել Ռուբէն Հայրապետեանին եւ պատշաճ հարցաքննութեան ենթարկել նրան, քանի որ նրա եւ քննիչ Մկրտչեանի հարցաքննութիւնը, աւելի շատ մտերմիկ զրոյց է յիշեցնում»,- ասաց Տիգրան Եգորեանը եւ աւելացրեց, որ ի պատասխան իրենց միջնորդութեան՝ քննիչը նշել է, որ օրէնսգիրքը «որպէս կասկածեալ ներգրաւելու» հասկացութիւն չի նախատեսում:*

*Փաստաբան Լուսինէ Յակոբեանն աւելացրեց, որ բացի այդ, եղել են հեռախօսազրոյցներ Ռուբէն Հայրապետեանի եւ թիկնապահ Նորայր Հայրապետեանի միջեւ, ինչի վերծանումը թերի է կատարուել. «Թիկնապահներն առանց իրենց տիրոջ իմացութեան որեւէ քայլ չեն կարող կատարել»:*

*Նա, նկատեց՝ Ռուբէն Հայրապետեանը նաեւ ունեցել է «Արմենտել»-ի հեռախօսահամար, որով կատարուած խօսակցութիւնները վերծանուած չեն:*

*Փաստաբան Տիգրան Եգորեանը նշեց, որ գործի նիւթում առկայ դիակի դատաբժշկական փորձաքննութեան եզրակացութիւնը սխալ է. «Երեւում է, որ տրուել է ակնյայտ սխալ հետեւութիւն, թէ Վահէ Աւետեանը ստացել է ծանր մարմնական վնասուածք, որը վտանգ է ներկայացրել նրա կեանքի համար, տուեալ դէպքում՝ հանգեցրել է մահուան»:*

*Եգորեանը փոխանցեց, որ չհամաձայնելով այս հետեւութեան հետ, իրենք պահանջել են նախաքննութիւն իրականացնող մարմնից նշանակել կրկնակի յանձնաժողովային փորձաքննութիւն, որպէսզի հնարաւոր լինի գնահատել, թէ «տուեալ դէպքում գործ ունենք մահուան հանգեցրած վնասուածքների՞, թէ՞ ամէն դէպքում կեանքի հետ անհամատեղելի վնասուածքների հետ»:*

*Աւուլիսի աւարտին փաստաբանները նշեցին, որ ՀՀ իրաւապահ մարմինների ՝ դատախազութեան եւ ոստիկանութեան կողմից քողարկման ակնյայտ միտում տեսնելով, իրենք զգուշացնում են, որ մինչեւ վերջ պայքարելու են գործը բացայայտելու համար:*

*Յիշեցնենք, որ Յունիսի 17-ին ԱԺ պատգամաւոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետեանին պատկանող «Հարսնաքար» ռեստորանային համալիրում ռազմական բժիշկ Վահէ Աւետեանն ու իր ընկերները ծեծի էին ենթարկուել անվտանգութեան աշխատակիցների կողմից: 35-ամեայ Աւետեանը գլխուղեղային վնասուածք էր ստացել, ենթարկուել երկու վիրահատութեան, սակայն նրա կեանքն այդպէս էլ չյաջողուեց փրկել:*

# ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՍԱՍՈՒՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ՝ ԿՈՉ ԱՆԵԼՈՎ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

*Թուրքիայում Սասունի հայերի միութեան նախագահ Ազիզ Դաղջըն Մարութա սարի գագաթին գտնուող Սուրբ Աստուածածին եկեղեցու դէմ իրականացուած ոտնձգութիւնից յետոյ դիմում է ներկայացրել Բաթմանի (Սասուն) նահանգապետարան՝ կոչ անելով պահպանութեան տակ առնել հայկական եկեղեցիները:*

*Ինչպէս տեղեկացնում է թուրքական IHA լրատուական գործակալութիւնը, Ազիզ Դաղջըն իր դիմումում նշել է, որ վերջին շրջանում որոշ սադրիչների կողմից Բաթմանի նահանգում գտնուող հայկական եկեղեցիները յարձակման են ենթարկւում: «Վերջին դէպքը՝ Սասունի Մարութա սարի Սուրբ Աստուածածին եկեղեցու աւերումն էր: Անհրաժեշտ է, որ Սասունի շրջանի Մեշելի գիւղի հետեւում գտնուող եւ 365 սենեակ ունեցող Պետրոս Առաքեալի վանքը եւս պահպանուի: Աւելի վաղ դիմում էին ներկայացրել նահանգապետարան՝ պահպանութեան տակ առնելու Սասունի Ռեշմիկ գիւղի հայկական եկեղեցու, Քոզլուքի շրջանի Աքչաքըլը գիւղում գտնուող Սուրբ Աստուածածին հայկական եկեղեցիները:*

*Մենք չենք հաւատում, որ եկեղեցիները քանդւում են գանձ որոնողների կողմից: Մենք որպէս համայնք տուժուել ենք, չունենք աղօթատեղի: Այդ բոլոր եկեղեցիները գրանցուած են: Լոզանի համաձայնագրի 42-րդ յօդուածի 3 կէտի համաձայն՝ թուրքական կառավարութիւնը ազգային փոքրամասնութիւններին պատկանող եկեղեցիներն ու հոգեւոր միւս կառոյցները պէտք է պահպանի: Անհրաժեշտ է, որ Թուրքիայի հանրապետութիւնը կատարի համաձայնագրի դրոյթները»,- ասել է Ազիզ Դաղջըն:*

## ԱՐԹԻՒՐ ԱԲՐԱՀԱՄ ԿՐԿԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ



*Գերմանիոյ դրօշին ներքեւ հանդէս եկող հայ ազգի կռփամարտիկ Արթիւր Աբրահամ, անցեալ Շաբաթ, Պերլինի մէջ, աշխարհի ախոյեանութեան համար՝ մրցեցաւ Ռապըրթ Շթիկլիցի դէմ: Ան նուաճեց միջին ծանրութեան աշխարհի ախոյեանի կոչումը:*

*Մրցումէն ետք ան գերմանական հեռատեսիլէն ելոյթ ունենալով նշեց թէ ինք հայ է կապ չունի թէ ինք ուր կ՛ապրի: «Հպարտ եմ որ հայ եմ» ըսաւ Աբրահամ այդ հարցազրոյցի ընթացքին:*

*Նշենք նաեւ որ Արթիւր Աբրահամ այս տարի զոյգ յաղթանակներ տարած է արժանթինցի Փապլօ Օսքար Նաթալիօ Փարիասի եւ լեհ մրցակից Փիօթր Վիլշիւեսքիի դէմ, վերանուաճելով Եւրոպայի տիտղոսը:*

*Արթիւր Աբրահամ ծնած է Երեւան 1980ին: 2004էն ի վեր կը բնակի Պերլին եւ ունի երկքաղաքացիութիւն: Ան արժանացած է Գերմանիոյ լաւագոյն կռփամարտիկի տիտղոսին:*

## ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ ՌՈՒՄԱՆԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ

*Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան վերջերս Ռումանիա կատարած իր այցելութենէն վերադարձած է լաւագոյն տպաւորութիւններով: Իրմէ իմացանք որ տեղւոյն հայ համայնքը մեծ յարգանք կը վայելէ ռումին ժողովուրդին եւ իշխանութեան կողմէ: Վերջին երեսփոխանական ընտրութիւններուն երկու ռումանահայեր ընտրուած են խորհրդարանի անդամ:*

*Արդարեւ Խաժակ Սրբազան Ռումանիա մեկնած էր տեղւոյն հայկական Հաճվանք ուխտատեղիի 500 ամեակի հանդիսութեանց մասնակցելու, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.ի գլխաւորած պաշտօնական պատուիրակութեան անդամ:*

## ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Շարունակուած էջ 1-էն*

«Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմին»ը կազմուեցաւ հետեւեալ կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներով, ու դիւանական պաշտօններու բաժանումով.-

- Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչ Տիար՝ Զաւէն Խաննեան, Ատենապետ
- Ա.Մ.Ն.ի Արեւմտ.շրջանի Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) ներկայացուցիչ՝ Տիկ. Սօնա Մատարեան, Ատենադպրուհի
- Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) ներկայացուցիչ՝ Տիար Հէրի Պալեան, Փոխ Ատենապետ
- Արեւմտ. Թեմի Ազգ.Վարչութեան ներկայացուցիչ՝ Տիար Միհր Տէր Յովհաննէսեան, Գանձապահ
- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ.Կեդրոնական Վարչութենէն՝ Տիար Խաժակ Տիքիճեան
- Հայց. եկեղեցւոյ Հիւսիսային Ա.Մ.Ն. Արեւմտեան Թեմի ներկայացուցիչ՝ Տիար Պարգեւ Համալեան
- Հայ Կաթողիկէ Համայնքի ներայացուցիչ՝ Տիար Արա Արոյեան
- Ռամկավար Ազատական Կուսակցութեան (ՌԱԿ) ներկայացուցիչ՝ Տիար Խաչիկ Ճանոյեան
- Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) ներկայացուցիչ՝ Տիար Վարդգէս Նալպանտեան
- Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.) ներկայացուցիչ՝ Տիար Յարութ Ֆազնեան

Վերոյիշեալ մարմինի անդամները անմիջական կապերով ու աշխատանքներով պիտի հասնին մեր ազգի նուիրաբերող զաւակներուն, այն վստահութեամբ որ անոնք հայավայել հաւատարմութեամբ պիտի չզլանան իրենց օժանդակութիւնները, որպէսզի անկարելին կարելի դարձնենք եւ օգնութեան ձեռք երկարենք, ի խնդիր սուրիահայութեան փրկութեան:

Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմինը հայրական իր օրհնութիւնը ստացաւ Ա.Մ.Ն.ի Արեւմտ. Շրջանի զոյգ Առաջնորդներէն՝ Տ. Մուշեղ Արք.Մարտիրոսեանէն եւ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանէն, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետ. Յարանուանութեանց հոգեւոր Առաջնորդներէն, եւ արդէն անցած է գործնական առաջին քայլերուն:

Արդ, կոչ կ՛ուղղենք մեր ժողովուրդի ազնիւ զաւակներուն? հետեւիլ հրապարակուած լուրերուն, մամուլի էջերէն, հայկական պատկերասփիւռի կայաններէ, եւ յատկապէս «Գործադիր Մարմին»ի յատուկ կայքէջէն՝ www.syrianarmenianrelieffund.org, եւ ըստ կարելւոյն փոխանցել ձեր առատաձեռն նպաստը:

Նիւթական օժանդակութիւնները կարելի է յղել հետեւեալ հասցէին.-
SYRIAN ARMENIAN RELIEF FUND
www.syrianarmenianrelief fund.org
POBox 1948
Glendale, Ca 91209-1948
Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմին



## Հ.Բ.Ը.Մ.Ի ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՎԵՐԱՆՈՒԱՆՈՒԵՑԱՒ Հ.Բ.Ը.Մ.Ի ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ



**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Շաբաթ, 25 Օգոստոս 2012 ժամը 7:30 էն սկսեալ , Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնի Պօյաճեան հանդիսասրահէն ներս տեղի ունեցաւ Արտաւազդ Թատերախումբի վարչութեան նախաձեռնած ճաշկերոյթ երեկոյթը , որ իր տեսակին մէջ իւրայատուկ փայլք մը ունեցաւ:

Սկսած առաքուած հրաւիրատոմսերու վրայ արձանագրուած եզակի խնդրագիրէն մինչեւ երեկոյթի պաշտօնական, մտերմիկ եւ գեղարուեստական ուշագրաւ ընթացակարգը եւ այդ բոլորէն բխող պատգամը՝ առիթ ստեղծեցին ունենալու կարգ մը մտորումներ:

Ծանօթ է բոլորիս, թէ ինչպիսի զոհողութիւններու կը կարօտի թատրոն մը, իր գոյութիւնը կարենալ պահելու համար, մասնաւորաբար մեր սփիւռքահայ իրականութենէն ներս: Այլեւայլ բնոյթի հիմնական նկատուած կարիքներու շարքին մեծագոյն կարիքը պէտք է համարել անոր դիմագրաւած նիւթական դժուարութիւնը, որ մեծ մասամբ կը հարթուի շնորհիւ տուեալ թատերախումբի շուրջ հաւաքուած թատերասէր բարեկամ-մտերիմներու նիւթական նուիրատուութիւններով, բարոյական զօրակցութեամբ եւ յատկապէս իրենց քաջալերանքով:

Արտաւազդ Թատերախումբի վարչութիւնը այս ճաշկերոյթ- երեկոյթը կազմակերպած էր հրապարակաւ իր շնորհակալութիւնը յայտնելու բոլոր անոնց, որոնք միշտ գտնուած են Արտաւազդ Թատերախումբի կողքին, անոր բերելով իրենց նիւթա-բարոյական նպաստը, տարիներէ ի վեր: Հրաւէր տոմսերուն վրայ գրուած էր.

-Եկէք միասին վայելենք երաժշտութիւն, պար, խնճոյք եւ մեր տաղանդաւոր դերասաններուն անակնկալ զուարճախօսութիւնները: Հաճեցէք ձեր վճարագրի -չէքի- տետրերը թողուլ ձեր տուները:

Գեղեցկօրէն բարեզարդարուած Պօյաճեան հանդիսասրահէն ներս տօնական մթնոլորտ կը տիրէր: Արտաւազդ Թատերախումբի վարչական անդամներէն Պրն. Ժան Սամուէլեան ողջունեց ներկաները, եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց, որ բարձր գնահատելով Արտաւազդ Թատերախումբի գործունէութիւնը, նոյնպէս եւ բարոյապէս միշտ քաջալեր հանդիսացած են անոր: Ան նաեւ բարձր գնահատեց համանուն Թատերախումբի դերասանապետ եւ տաղանդաշատ բեմադրիչ Գրիգոր Սաթամեանի վաստակը , ուր կ'ընդգրկուէր նաեւ հայ նոր սերունդը իր ազգային ակունքներուն մօտեցնելու սրբազան առաքելութիւնը: Սամուէլեան, նմանապէս շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց Արտաւազդի դերասան դերասանուհիներուն, որոնք իրենց ժամանակը եւ հանգիստը զոհելով իրենց անգնահատելի ներդրումը կը բերեն մեր ազգային թատերական կեանքէն ներս:

Այնուհետեւ, բեմ բարձրացաւ Արտաւազդ Թատերախումբի վարչութեան Ատենապետ Պրն. Արա Պապայեան, որ յանուն իր գլխաւորած վարչութեան՝ բարձր գնահատելով տաղանդաշատ բեմադրիչ

Շար.ը էջ 19

## ՅԻՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ «ԲՈԼՈՐՍ ՆՈՅՆ ՀԱՅՆ ԵՆՔ»




ՀԵԵԿ-ը կը ներկայացնէ նոր երաժշտական ներկայացում՝ «Բոլորս Նոյն Հայն ենք» վերնագրով: Այն հանդիսատեսին կը ներկայացուի միայն մէկ անգամ՝ Սեպտեմբեր 15ին, երեկոյեան ժամը 7:00ին, Կլենտէյլի «Beyond the Star's Palace» թատերասրահին մէջ:

Ներկայացման սցենարի հեղինակը ՀԵԵԿ անդամ Արփի Նագգաշեանն է որ գրել է այն դեռեւս տասներեք տարեկան հասակում եւ հիմա, մէկ տասնամեակ յետոյ, այն կեանքի կը կոչէ:

Ներկայացումը կարեւոր շեշտ կը դնէ հայ նկարագրի, մշակոյթի եւ լեզուի վրայ եւ կը փորձէ ընդգծել Քրիստոնէութեան ազդեցութիւնը վերը նշուած կարեւոր ազգային բաղադրիչների վրայ:

Ներկայացումն կ'անդրադառնայ հայ ժողովրդի պատմութեան ամէնաօրհասական պահերին երբ հայ ժողովուրդը միասնութեան շնորհիւ յաղթահարած է կենացմահու պայքարը:

Դիւրին չի տրուած հայ կոչուելու իրաւունքը եւ ներկայացումն կ'անդրադառնայ նաեւ այժմեան խնդիրներին որոնք ծառացած են ներկայ հայ սերունդների առջեւ աշխարհի տարբեր ծայրերուն:

Հեղինակի խօսքերով ներկայացման խորհուրդներէն մէկն այն է որ կարող է եւ աշխարհով մէկ սփռուած հայերու միջեւ տարբերութիւններ կան, բայց բոլորի ինքնութիւնը նոյնն է:

Ներկայացման վերնագիրը վերցուած է ՌոբերթՋիլինկիրեանի համանուն երգէն: Պրն. Ջիլինկիրեանը ներկայացման համար ըսած է որ շատ ուրախ է որ այն ինչ ինքն է փորձած ըսած իր երգով արդէն Արփիի եւ ՀԵԵԿ-ի ջանքերով աւելի մեծ լսարանի է մատուցւում:

Ներկայացումը պիտի ըլլայ հայերէն, բայց կ'ընդգրկէ նաեւ տեսարաններու անգլերէն մեկնաբանութիւն:

Ներկայացման մէջ հանդէս կու գան ՀԵԵԿ անդամները Թեմի տարբեր ծուխերէն: Անոնք կ'երգեն, կը պարեն եւ կ'ասմունքեն հայերէն:

Տոմսեր ձեռք բերելու համար այցելէք www.acyo-wd.org կամ զանգահարէք (510) 393-1806համարով:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability
• Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning
• Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
New York Life, Anthem, BlueShield, Aetna, Health Net, Cigna, Kaiser Permanente
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits


Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# ՆԵՐԳԱՂԹ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

*Կան դէպքեր, իրադարձութիւններ, որոնք քո մէջ արթնացնում են անմոռանալի յուշեր:*

*Այդպիսի յուշեր արթնացան իմ մէջ, երբ սոյն թուի (2012 թ.) Յունիսի 29-ին երեկոյեան ժամը 8-ին Կլենտէյլի Հանրային գրադարանի դահլիճում ընկերներով դիտեցինք սցենարիստ-ժուռնալիստ Տիգրան Պասկեւիչեանի՝ 1946-1949 թթ. Մեծ հայրենադարձութեան՝ ներգաղթին նուիրուած «Անծանօթ իմ Հայրենիք» վաւերագրական ֆիլմը: Ցուցադրութիւնը կազմակերպուել էր ASA ART CORPORATION-ի աջակցութեամբ (հովանաւորների օգնութեամբ ֆիլմը ցուցադրուեց նաեւ Orange County-ում եւ մեծ ընդունելութեան արժանացաւ):*

*Ֆիլմի ցուցադրութիւնից յետոյ հեղինակը պատասխանեց ներկաների բազմաթիւ հարցերին, որից յետոյ մեր զրոյցի ժամանակ պարզուեց, որ ցուցադրուածը երեք մասից բաղկանալիք ամբողջական ֆիլմի առաջին մասն է, որի մէջ ցոյց է տրուած հեղինակի հանդիպումները մտաւորականների ու անհատների հետ տարբեր վայրերում՝ Երեւանում, Լոս Անճելոսում, Պէյրութում եւ այլն:*

*Ի միջի այլոց նշեմ, որ երբ ես Լոս Անճելոսում Հայրենակցական Միութիւնների Միացեալ Մարմնի (ՀՄՄՄ) փոխատենապետ էի, 1996 թ. վարչութեան քննարկմանը ներկայացրեցի նշելու 1946-1949 թթ. հոծ ներգաղթի 50-ամեակը մեծ լսարանով պատշած ձեւով: Բոլորը ոգեւորուեցին: Վարչութեան յաջորդ նիստում այն քննարկելիս, լուրջ հարցեր առաջացան այդ կապակցութեամբ, քանի որ ժամանակին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւնը դէմ էր եղել եւ աշխատել էր արգելակել այդ ներգաղթը: Մանրամասնութիւնների մէջ չմտնելով նշեմ, որ վարչութեան անդամները, որոնք հիմնականում սփիւռքահայեր էին, խուսափեցին 50-ամեակը նշելուց՝ զգուշանալով, որ այդ կապակցութեամբ հնարաւոր է ներհամայնքային տհաճ դէպքեր տեղի ունենան Լոս Անջելոսում...: Մենք գտնում ենք, որ անկախ Հայաստանի պետութեան ղեկավարութիւնը լրջօրէն քննարկի այս հարցը՝ որպէս ազգային կարեւորագոյն հարցերից մէկը եւ պատրաստուի 2016 թ. մեծ շուքով նշելու ներգաղթի 70-ամեակը:*

*Վաւերագրուողներն իրենց խօսքում արդարօրէն նկարագրելով ժամանակի տնտեսական պայմանները Հայաստանում՝ կապուած ներգաղթի հետ, համարեա բոլորն էլ բացասականօրէն արտայայտուեցին այդ ժամանակուայ ներգաղթի մասին:*

*Հեղինակը նիւթեր է հաւաքել տարբեր երկրների, աւելի շատ Մոսկուայի արխիւներից եւ ներգաղթի ու Հայաստանի հետ կապուած նաեւ բազմաթիւ այլ նիւթեր է ընդգրկել ցուցադրուած ֆիլմում՝ պատերազմ, հայերի բնօրրանը վերադարձնելու հետ կապուած հարցեր եւ այլն: Այս բոլորը առանց նիւթականի հնարաւոր չէր, որը կարողացել է ապահովել հեղինակը, եւ նա արժանի է գնահատականի: Հաւատում եմ, որ մնացած մասերի նկարահանումը աւարտելուց յետոյ, ամբողջական ֆիլմը մեր պատմութեան մէջ իր արժանի, անգնահատելի տեղը կ'ունենայ՝ նուիրուած 1946-1949 թթ. ներգաղթին: Ցանկալի է, որ ֆիլմը նկարահանելիս հեղինակը նկատի ունենայ նաեւ 1915 թ. Թուրքիայի կողմից Հայերի ցեղասպանութիւնից յետոյ իրագործուած բոլոր տարիների ներգաղթը Մայր հայրենիք, որը նոյնքան կարեւոր է պատմութեան համար:*

*Ներկաներից մէկը դժգոհութիւն յայտնեց ֆիլմի մասին, որ այն իր բացասական ցուցադրումներով պրոպագանդում է, որպէսզի այսուհետ ներգաղթ չլինի դէպի Հայաստան:*

*Նշենք, որ Հայաստանը դեռ պատրաստ չէ ներգաղթող ընդունելու, Իրաքի պատերազմի հետեւանքով ստիպուած Հայաստան ներգաղթած իրաքահայերից համարեա մարդ չմնաց Հայաստանում...: Ուստի ներկայ ժամանակներում ներգաղթի մասին մտածելն իսկ աբսուրդ է՝ նկատի ունենալով Հայաստանի տնտեսական վիճակը, անգործութիւնը, իրաւական դաշտի բացակայութիւնը, կաշառակերութիւնը, կոռուպցիան, ժողովրդավարութեան չկայացումը եւ այլն, որոնք խթանում են աւելի շուտ արտագաղթը Հայաստանից, որը օրից-օր վտանգում է մեր հայրենիքի գոյութեանը, իսկ մեղաւորը ներկայ իշխանութիւնն է:*

*Թարմ տուեալներով «Հայաստանէ արտագաղթը կը շարունակուի» յօդուածում (տե՛ս «Մասիս», շաբաթ, Յունիս 30, 2012, առաջին էջ), ըստ Տարածքային կառավարման նախարարութեան գաղթականական պետական ծառութեան, այս տարուայ առաջին 5 ամիսներին Հայաստանից դուրս եկածների թիւը 80 հազարով աւելի է, քան անցած տարուայ նոյն ժամանակները: Անցեալ տարի Հայաստանից մեկնել ու չեն վերադարձել 44 հազար հայաստանցի: Իսկ 2000-2011 թթ. Հայաստանից արտագաղթողների թիւը կազմում է 236 հազար անձ:*

*Ֆիլմի մասին կարելի է ամբողջական նիւթ գրել միգուցէ երեք մասերն էլ դիտելուց յետոյ, որպէսզի սխալ եզրակացութիւնների չյանգել: Ուստի մեկնաբանութիւններից ձեռնպահ մնալով, ուզում եմ մէջբերել իմ «Յուշերիս Հետ» անտիպ գրքում ներգաղթի մասին գրուածից մի հատուած յապաւումներով, որտեղ նշուած է նաեւ, թէ հայերը ինչո՞ւ այդքան հոծ բազմութեամբ միասնական ջանքերով տարբեր երկրներից ձգտեցին ներգաղթել Խորհրդային Հայաստան՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ:*

*Մի պահ կանգ առնենք ներգաղթի՝ որպէս երեւոյթի կայացման վրայ: Ներգաղթից երկար տարիներ յետոյ բազմաթիւ գրականութիւն եւ իրականութիւնը արտացալող յօդուածներ լոյս տեսան ներգաղթի ճիշտ ու սխալ իրողութեան մասին: Անկախութիւնից յետոյ հայրենի եւ Հայաստանից արտագաղթող մտաւորականութեան լոյս ընծայած գրականութիւնն ու յօդուածները ներգաղթածների ապրած տարիների մասին, շատ հարցեր լուսաբանեցին:*

*Բնօրրանից սփիւռքացած հայը, թողնելով իր ծաղկուն այգեստանը, նիւթապէս ապահովուած վիճակն ու պաշտօնը սփիւռքի տարբեր երկրներում, որոնց ժողովուրդների հետ նպաստում էր իրենց երկրների տնտեսական, քաղաքական, մշակոյթի ու գիտութեան եւ այլ բնագաւառների զարգացմանը՝ փոխադարձ յարգանք տածելով իրար նկատմամբ, ներգաղթելով Խորհրդային Հայաստան, չնայած այնտեղ նրա անտանելի վիճակին, աւելի շուտ հիասթափուեց ու յուսահատուեց կառավարութեան եւ տեղացի ժողովրդի վերաբերմունքից իր նկատմամբ, քան թէ նիւթականի չգոյութիւնից. ներգաղթած սփիւռքահայը որպէս իւրային անդամի չընդունուեց հայրենիքում, չգուրգուրուեց, չփայփայուեց, չյարգուեց, արհամարհուեց տեղացիների կողմից, որի հիմնական մեղաւորը կառավարութեան ղեկավարներն էին, որոնք իրենք զերծ էին բարեկիրթ վերաբերմունքից, որպէսզի ժողովրդին նախապատրաստէին ներգաղթած իրենց եղբայրներին ու քոյրերին սիրալիր վերաբերմունք ցոյց տալու, սփոփելու եւ յուսադրելու ապագայի լաւատեսութեամբ (բացառութիւններ եղան առանձին անհատների կամ ընտանիքների կողմից):*

*Բերենք հանրագիտարանի տուեալները ներգաղթի մասին. «Հայրենադարձութիւնը ընթացել է երեք փուլով: Առաջին փուլը ընդգրկում է 1921-36 թթ.: Այս շրջանում տարբեր երկրներից... Հայաստան վերադարձաւ 42,2 հզ. հայ: Երկրորդ փուլում՝ 1946-48/49 թթ-ին իրականացուեց զանգուածային հայրենադարձութիւն: Հայաստան վերադարձան 89,7 հզ. հայեր...: 1950-ական թթ. անհատական կարգով Հայաստան վերադարձաւ աւելի քան 4 հզ. հայ: Երրորդ փուլը սկսուել է 1962-ից. մինչեւ 1982-ը Հայաստան են վերադարձել 32,5 հզ. հայեր 30 երկրներից...: 1920-80-ական թթ. ընդհանուր առմամբ հայրենադարձուել է 170 հզ. հայ» (տե՛ս «Հայկական համառօտ հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, 1999», հատոր 3, էջ 287):*

*Բերենք որոշ տուեալներ Հայ-Սփիւռք հանրագիտարանից. «Գալով Հայաստան՝ նրանք առաջին իսկ օրուանից յայտնուեցին իրենց համար ծանր ու խորթ սոցիալ-տնտեսական պայմաններում, իրենց հանդէպ մշտական անվստահութեան մթնոլորտում, որի տրամաբանական հետեւանքը եղաւ 1949-ին տեղացի «ժողովրդի թշնամիների» հետ նրանց մի մասի արտաքսումը Խորհրդային Միութեան հեռաւոր շրջաններ: 1975-ին Խորհրդային իշխանութիւնները, Հելսինկիում ստորագրելով Եւրոպայի անվտանգութեան ու համագործակցութեան պայմանագիրը, ստիպուած էին «ընտանիքների վերամիաւորման նպատակով» թոյլատրել հրեաների, գերմանացիների, նաեւ հայրենադարձ հայերի արտագաղթը երկրից: Չնայած բոլոր բացասական երեւոյթներին՝ հայրենադարձները (1962-82-ին Հայաստան ներգաղթեց եւս 32 հզ. մարդ) եւ արդէն Հայաստանում մեծացած ու ուսում ստացած նրանց զաւակները նպաստեցին երկրի զարգացմանը, յատկապէս նշանակալի էր նրանց աւանդը մշակոյթի եւ գիտութեան ոլորտում (Երուանդ Քոչար, Յակոբ Յակոբեան, Վահրամ Փափազեան, Հրաչեա Ներսիսեան եւ այլն» (տե՛ս «Հայ-սփիւռք հանրագիտարան», Երեւան 2003, էջ 15):*

*Մի իրողութիւն ակնյայտ էր: Խորհրդային Միութիւնը թոյլատրեց ներգաղթը պատերազմից անմիջապէս յետոյ, երբ երկիրը բնաւ պատրաստ չէր ընդունելու մարդկանց՝ բնակարանների, սննդամթերքի, հագուստեղէնի եւ առաջին անհրաժեշտութեան այլ ապրանքների չգոյութեան կամ սղութեան պայմաններում, որի համար էլ աւելի դժգոհութիւն առաջացաւ ներգաղթածների մօտ:*

*Այնուամենայնիւ ներգաղթի մասին բաւական գրուեց եւ կարծում եմ դեռ շատ վերլուծութիւններ կը լինեն այդ մասին տարբեր մօտեցումներով, քանի որ մեր պատմութեան համար դա կարեւորագոյն երեւոյթներից է: Անկախ Խորհրդային Հայաստանում տիրող պայմաններից, այն նպաստեց Խորհրդային Հայաստանի՝ որպէս Հանրապետութեան գոյատեւմանը, նկատի ունենալով, որ Հայրենական մեծ պատերազմին մասնակցած 600 հազարից աւելի հայերից համարեա կէսը զոհուեցին յանուն յաղթանակի եւ խիստ նուազեց Հայաստանի բնակչութիւնը, որի հետեւանքով այն կարող էր վերածուել ինքնավար մարզի:*

*Հայրենական մեծ պատերազմի աւարտից անմիջապէս յետոյ, նկատի ունենալով Խորհրդային Միութեան եւ նրան մաս կազմող հանրապետութիւնների, այդ թւում Խորհրդային Հայաստանի քայքայուած տնտեսութիւնը, բնականաբար սխալ որոշում էր ներգաղթ կազմակերպելը, որը ոչ միայն ներգաղթածների, այլ նաեւ տեղացի ժողովրդի մէջ դժգոհութիւն առաջացրեց, կառավարութեան անտարբեր մօտեցման հետեւանքով այդ հարցին: Վերջինս չկարողացաւ կամ չուզեց բացատրական աշխատանք տանել տեղացի ժողովրդի մէջ եւ նոյնիսկ չտեղեկացրեց նրանց այն մասին, որ Խորհրդային Միութիւնը ներգաղթողների համար յատուկ ֆոնդ է ստեղծել եւ տեղացիների համար նախատեսուած պիւտճէից դրամ չի ծախսւում նրանց տեղափոխման, տեղաւորման ու ապրուստի համար, իսկ ներգաղթածներին երբեք չցուցաբերեց բարի կամեցողութիւն, որի հետեւանքով հսկայ ճեղք առաջացաւ կառավարութեան ու իր ժո-*

*Շար.ը էջ 18*



# ԲԱՒԱԿԱՆ Է ԶԶՈՒԵՑՆԵՔ

ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆ

Տարիներ շարունակ խորհրդային, թէ հետխորհրդային շրջանում այն տեսակէտին եմ եղել, որ Սփիւռքը չպիտի միջամտի Հայաստանի ներքին եւ յատկապէս քաղաքական գործերին, որովհետեւ նախ չունի դրա, ոչ իրաւական եւ ոչ էլ բարոյական իրաւունքը, եւ երկրորդ, որ նա իր միջամտութեամբ կարող է, կամայ, թէ ակամայ գործիք դառնալ օտար ուժերի ձեռքին, կատարելով արջի ծառայութիւն: Ժամանակին դէմ եմ արտայայտուել նաեւ երկքաղաքացիութեանը, գտնելով, որ բացի վերը բերուածից, երկքաղաքացիութիւնը կարող է թուլացնել արտագաղթի բարոյական արգելքը: Ինչո՞ւ մնամ Հայաստանում, եթէ արտասահմանում ապրողն էլ կարող է համարուել Հայաստանի քաղաքացի: Այն ժամանակ դեռեւս ոգեւորուած էի այն յոյսով, որ նոր պայմաններում հնարաւոր կը լինի զանգուածային ներգաղթը եւ մեծ թւով հայեր շուտով «կը դիմեն դէպի իրենց սիրուն հայրենիք», իրականացնելով Րաֆֆու երազը:

Հիմա էլ տեսականօրէն ինձ չի թւում, թէ իմ այդ մօտեցումը սխալ է: Նուազագոյնը հաստատ է մի բան, մարդը իսր ասածի եւ արածի համար պատասխանատու է այն պետութեանը, որի քաղաքացին է: Ինչի՞ նման է այն հայը, որն իր ապրած երկրում որդեգրում է քաղաքական իմաստով բացարձակ չէզոք, իսկ աւելի յաճախ իշխանամէտ դիրք, իսկ իրեն թոյլ է տալիս խօսքով ու գործով հետեւողականօրէն հանդէս գալ Հայաստանի հասարակական եւ քաղաքական կեանքի քննադատի, թէ պաշտպանի դերում:

Այս բոլորը տեսականօրէն, իսկ գործնականում այսօր դրանք ինձ թւում են չափազանց նաիվ: Այսօրուայ «գլոբալ» աշխարհում, միամտութիւն է կարծել, որ ցանկացած երկրի ներքին գործերին միջամտելը, դրսի, թէ ներսի գործակալների միջոցով, հնարաւոր է կանխել, մանաւանդ եթէ այդ երկիրը դեռ էն գլխից պատմութեան քառուղիներում յայտնուած Հայաստանն է: Եւ մենք՝ հայերս ամէնքից լաւ պիտի իմանանք, որ աշխարհի պատմութիւնը, ո՛չ թէ առանձին ազգերի ու ցեղերի պատմութիւնն է, այլ կայսրութիւնների, այլապէս ի՞նչ գործ ունի ՆԱՏՕ-ն անկախ ու ինքնիշխան արաբական երկրներում,եւ ...

Վերադառնալով մեր բուն նիւթին, իրողութիւն է, որ իրենք՝ Հայաստանի անկախ պետութեան այսօրուայ ներկայացուցիչներն են, որ առիթը բաց չեն թողնում աշխարհին յիշեցնելու, որ իրենք, ո՛չ թէ ներսի, իրենց ասելով 3 միլիոնի ներկայացուցիչն են, այլեւ Սփիւռքի 7 միլիոնի: Սրանով հայրենի իշխանութիւնները, պիտի ենթադրել, ընդունում են նաեւ այդ 7 միլիոնի իրենց գործերին միջամտելու իրաւունքը: Սակայն քաւլիցի, փաստը Թուրքիայի հետ համաձայնագրի ստորագրումն էր, որին դէմ էին Սփիւռքի կազմակերպութիւնների մի կարեւոր մասը: Բայց այստեղ էլ Հայաստանի իշխանութիւնները կարող են այդ կազմակերպութիւններին հանգիստ ասել, տեսէ՛ք, իսկ ո՞վ ասաց, թէ դուք ներկայացնում էք մեր ասած այն 7 միլիոնը: Եւ դա այն դէպքում, որ Սփիւռք ասելով Հայաստանի իշխանութիւնները հասկանում ու դիմում են հենց այդ կազմակերպութիւններին:

Կատարեալ անհեթեթութիւն է (աբսուրդ) եւ «անկախութիւնից» 20 տարի անց էլ այս խնդիրը նուազագոյն իրաւական տեսքի չի բերուել, յոյս էլ չկայ, թէ ինչ որ բան մօտ ժամանակներում տեղի է ունենալու: Սփիւռքի նախարարի «Սփիւռքի վերին պալատ» հիմնելու ցնցող յայտարարութիւնը, ինչպէս ժամանակին նախատեսել էինք, եթէ անգամ լուրջ լինի, դեռ շատ սպասել կը տայ եւ շատ ջուր կը վերցնի: Իրականութիւնն այն է, որ 10 միլիոնի անունից խօսող իշխանութիւնը ներքին ընդդիմութեանն էլ զոռով է հանդուրժում, էլ ուր մնաց դրսեցուն հանդուրժի: Ի դէպ, այս տեսակէտից աւելի անկեղծ էին սովետները ու նաեւ Լեւոն Տէր Պետրոսեանը «նարինջ ուտողներ»ի յայտնի յայտարարութեամբ:

Իշխանութիւններից բացի Հայաստանի շարքային քաղաքացու վերաբերմունքն էլ այս տեսակէտից բացասական է: «Սփիւռքում նստած վայելում էք, ու հայրենասիրութիւն էք խաղում»: Ասուածը տրամաբանական է, իհարկէ՛, բայց դրանով այն չի դադարում մեր բազում ազգային հիւանդութիւններից մէկը լինել:

Հայաստանցի չենք, բայց մեզ հայ ենք համարում, չէ՞: Բայց նրանք դա էլ են դժուարանում ընդունել: Նրանց համար Ազնաւուրը, իհարկէ, հազար տոկոսանոց հայ է, դէ, մի հարիւր տոկոսով էլ ֆրանսացի: Նոյնն է նաեւ Քրքը, թէեւ սրանց էլ զզուեցնելու առիթը, որքան գիտեմ, չեն փախցրել, իսկ քառասուն վեցին աշխատուժից զրկուած Հայաստանը պահելու ու շէնացնելու համար ներգաղթած, հազար ու մի զրկանք, չարչարանք ու նուաստացում ճաշակած, կրկնակի ու եռակի տնաքանդ եղած հայը դեռեւս ընդամէնը «աղբար» է: Սա հիւանդութիւն չէ՞, բա ի՞նչ է:

Անհանդուրժողութիւնը պատմականօրէն ստեղծուած եւ խորացած հիւանդութիւն է եւ ինչպէս բոլոր խրոնիկ հիւանդութիւնների, սրա բուժումն էլ լինելու է երկարատեւ, այն էլ իւրայատուկ պայմաններում. առայժմս խնդիրն այն է, թէ մենք ինչքանով ենք աշխատում այդ պայմանների ստեղծման ուղղութեամբ, իսկ մենք միասնականութիւն, մէկ ազգ, մէկ մշակոյթ եւ այլն գոչելով, շարունակում ենք զզուեցնել միմիանց:

Այս երկար առաջաբանը արտայայտելու համար այն խորունկ ցաւն ու վիրաւորանքը, որ ինձ, որպէս հայ եւ որպէս մարդ, հանգիստ չի տալիս «Հարսնաքարի» գազանութեան մասին լսելուց ի վեր: Նման բաներ շատ ենք լսում ու մանաւանդ տեսնում սերիալներում, որոնք, ըստ դրանց արտադրողների, ներկայացնում են օրուայ հասարակութեան իրական պատկերը, բայց սա արդէն իսկապէս իրականութիւն է, որը գերազանցում է նոյն այդ սերիալների սադիստ սցենարիստների ֆանտազիայի սահմանները:

Պետրոսի հաղորդման մէջ Մարինէն առանց բառերը ծամելու ասաց, թէ բանակը դժոխք է: Վարդապետը թէ. բանակը դժոխք չէ, այլ մի քանի հոգիներ են վարկաբեկում բանակի սրբութիւնը, բայց չէ՞ որ հենց այդ մի քանի դժոխայինների բռան մէջ է սեղմուած ամբողջ երկիրն ու ժողովուրդն այսօր:

Ռուբէն Հայրապետեանը վար դրեց իր պատգամաւորական մանդատը, ըստ երեւոյթին Սերժ Սարգսեանի հրահանգով, բայց ինքը՝ Ս. Սարգսեանը, եթէ Հոկտեմբերի 7-ից յետոյ հրաժարուէր ազգային անվտանգութեան նախարարի պաշտօնից եւ, ոչ թէ մագլցէր իշխանութեան սանդուխքն ի վեր մինչեւ գագաթը, հաւանաբար տեղի չունենար նաեւ «Հարսնաքար»ի բարբարոսութիւնը:Նոյնը կարելի է ասել «Առագաստ»ում ծեծամահ արուած Պ. Պօղոսեանի, Մարտի մէկի արիւնալեղութեան, բանակում կրկնուող սպանութիւնների եւ բազում այլ նման երեւոյթների մասին:

Այո, խօսքը երեւոյթի մասին է: Զօրբայական հոգեբանութեան մասին, հարցերը վզի ու բազուկների հաստութեամբ եւ խղճի բացակայութեամբ լուծելու մտայնութեան մասին է, որ ընտանիքից իջնում է բակ, բակից՝ փողոց, փողոցից՝ թաղ , չթողնելով, որ թաղը դառնայ քաղաք, քաղաքներն ու գիւղերը դառնան երկիր ու պետութիւն:

Այսպէս, բազմիցս որոշել եմ «ինձ չվերաբերող» գործերի մէջ քիթս չխոթել, հաւատացած լինելով, որ բոլոր դէպքերում հայրենաբնակ ժողովուրդն է, որ իր խելացի ու ազնիւ զաւակների միջոցով պիտի հարթի իր ճանապարհը դէպի աւելի մարդկային ու արժանավայել կեանք, ու եթէ հերթական անգամ խախտում եմ որոշումս, ուզում եմ հենց նրանց առնուազն ասել, որ անտարբեր չեմ նրանց տառապանքի ու պայքարի նկատմամբ:




# ՎՐԱՍՏԱՆ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հայաստանի ու Վրաստանի կրթութեան ու գիտութեան նախարարութիւնները ստորագրած են յուշագիր մը, որուն համաձայն պիտի շարունակուի Վրաստանի մէջ գործող հայկական կրթօճախներու ուսուցիչներու վերապատրաստումը:

Վրաստանի մէջ հայ մանկավարժներու վերապատրաստման դասընթացքները առաջին անգամ կազմակերպուած են 2010ին ու ամէնամսեայ պարբերականութեամբ, կը շարունակուին մինչեւ հիմա: Նախորդ տարիներու վերապատրաստուած է հայոց լեզուի եւ գրականութեան ու հայոց պատմութեան տարրական դասարաններու 192 ուսուցիչ:

# Massis Weekly

Volume 32, No. 31 — Saturday, September 1 , 2012

## New French Textbook Teaches About Armenian Genocide



PARIS -- The French Education Ministry has decided to include chapters about the Armenian genocide in history and geography books used in French secondary schools. French students studying world history since 1910 will also read a chapter called "The Armenian Genocide."

The chapter in the textbooks is devoted to giving detailed information on the Armenian genocide, which will explain in detail of the genocide, ethnic structure of the Ottoman Empire, rule of Talat Pasha and policies of nationalist Turks and purported exiles. The chapter will also include the numbers of Armenians who were killed, exiled or sent to death.

The author of the new textbook Valerie Perthue, suggested the pupils to draw a new glance to the history and examine a number of historical events, which are usual not included in European school curriculum. The authors also included French history controversial episodes, particularly the facts revealing cooperation established between French officials , Marshal Peten and Hitler in the course of Fascist Germany occupation. Algeria colonization by France as well as decolonization processes are widely discussed in the new textbooks.

French President Francois Hollande answered Turkish reporter's question on inclusion of the Armenian Genocide materials in the French textbooks.

Talking to *Hurriyet* on the margins of the 20th Annual Ambassador's Conference in Paris, Hollande said "it was absolutely out of his knowledge."

"Changes in the books are prepared by commissions ... The desicion does not come from me, but I will ask and learn where it comes from. Then I will inform you," *Hurriyet Daily News* quotes Hollande.

Turkey's European Union Minister EgemenBagis has strongly criticized the introduction of the Armenian Genocide to French history textbooks.

Bagis called on the French, who take great pride in their state founded on the worthy precepts of "liberté, égalité, et fraternité" (liberty, equality and fraternity), to reexamine their understanding of their own national motto. "I hope they will soon realize this mistake and correct it," he said, while delivering a speech at a meeting arranged by the Turkish Cooperation and Coordination Agency (TIKA), the Hurriyet Daily news reports.

## Three Armenians Killed in Damascus



**Aftermath of bob explosion in Jaraman district**

DAMASCUS -- According to the Armenian Diocese in Damascus three Armenians were killed in one of the city's districts on Tuesday, Aug 28.

The killed Armenians were identified as Bedros Matosian, born in 1963, Kevork Matosian, born in 1966 and Levon Matosian, born in 1990. The circumstances of their death was not clear.

Currently, the Diocese representatives are trying to get bodies out of the battle zone.

Also on Tuesday and explosion took place near the entrance of Jaramana cemetery during a funeral killing tens of people and wounding others.

Jaramana is a Christian-populated district of Damascus where some 400 Armenians reside.

In Aleppo bobs exploded close to Armenian Elderly Nursing home but no damages or casualties were reported.

More than fourteen Armenians have died, two of them were soldiers of Syrian Army, during the last seventeen months of clashes between government forces and opposition fighters.

## An Effective Approach to Help the Armenian Community in Syria




The crisis in Syria and as a consequence, the perilous daily lives of the Syrian Armenians have alarmed and deeply concerned the Armenian community.

The historical record reminds us the past and present destiny of nations; making assumptions on past history may lead us to uncertainty and anxiety; and that is why we should move with practical considerations, determination and a spirit of service.

The spiritual heads, and the leaders of the political and humanitarian organizations in the Western U.S.A., as an alert guardians of the community, came together to collectively bring together the "Syrian Armenian Relief Fund Executive Committee" with the task of planning activities and coordinating fundraising, and distributing funds as needed to save lives, and to provide moral and emotional support for our sisters and brothers living in difficult conditions across Syria, and sustenance for their Armenian institutions.

The Syrian Armenian Relief Fund Executive Committee includes the following organizations, their representatives and the roles that they have accepted within the committee:

· Armenian Evangelical Union of North America (AEUNA), Zaven Khanjian, Chairperson;

· Armenian Relief Society of

**Continued on page 4**

## Arthur Abraham Crowned WBO Super Middleweight Champion



BERLIN -- Arthur Abraham is the new world WBO super middleweight champion after his unanimous win over Robert Stieglitz.

Abraham, 32, who defended his IBF middleweight title 10 times between 2005 and 2009, is now the world champion at the heavier weight after the judges scored the fight 116-112, 116-112, 115-113 on Saturday.

"This is an emotional moment for me and it's hard to describe how I feel," said Abraham.

"I always wanted to be the middleweight world champion and now I am the super middleweight champion too. "I trained hard for this and I had to box cleverly against such a good champion."

Abraham lived up to his 'King Arthur' moniker and the new champion now has a record of 27 knock-outs in 35 wins and three defeats.

Having laboured to a points win over Piotr Wilczewski to defend his European WBO title in March, Abraham was back to the best fighting for the world title.

Abraham started the stronger of the pair, but the champion twice pinned

**Continued on page 4**

# European Commission Allocates New Funding for Judicial Reform and Economic Integration in Armenia

BRUSSELS -- The European Union has approved 60 million euros ($75 million) in fresh assistance to Armenia which is designed to support judicial reforms and speed up the country's integration into the EU.

The annual assistance announced late on Tuesday by the EU's executive body, the European Commission, stems from its Eastern Partnership program covering six former Soviet republics. The commission said the money will be spent on "accelerating justice reform and preparing the ground for increased bilateral relations, political association and economic integration with the EU."



EU President Herman Van Rompuy

The new assistance will include: new training opportunities for key national institutions, providing expert advice and best practice, setting up of schools for lawyers, judges and prosecutors. The overall goal is an independent, transparent and effective judiciary to serve the Armenian people, and builds on the EU's previous support to judicial reform in Armenia.

The funding will also support those Armenian institutions involved in the preparation and future implementation of new EU-Armenia agreements currently being negotiated, and in particular the Association Agreement (including a Deep and Comprehensive Free Trade Area), and the Visa Facilitation and Re-admission Agreement.

Opposition politicians and other government critics are highly skeptical about the authorities willingness to implement these programs, saying that an independent judiciary would pose a serious threat to President Serzh Sarkisian's hold on power. They say Armenian courts will therefore continue rarely defying the government and security apparatus without a democratization of the overall political system.

According to official statistics, only about 2 percent of individuals charged with various crimes in Armenia were acquitted by local courts last year.

EU President Herman Van Rompuy praised reforms carried out by the government when he visited Yerevan last month. He said the Sarkisian administration is "on the right track." Van Rompuy also described the Armenian authorities' handling of the May 6 parliamentary elections as an "important step forward."

# IT Group Wants Tougher Government Action Against Software Piracy in Armenia

YEREVAN -- The Armenian authorities are still not doing enough to combat widespread software piracy despite growing use of licensed computer programs in the country, according to local representatives of an international information technology (IT) association.

In its most recent global survey, the Business Software Alliance (BSA) representing the worldwide IT industry estimated that 88 percent of software used in Armenia last year was pirated or not fully licensed. The BSA reported a 93 percent piracy rate in 2007. The number of computers used by state and private institutions as well as individuals has increased significantly since then.

Acting as a legal representative of Microsoft, the BSA has helped to lower the piracy rate by exposing local firms using unlicensed copies of software produced by the U.S. IT giant. In the words of NarineMkrtchian, a BSA official in Yerevan, all of them except the Brabion Flora Service, a flower retailer with a dozen office computers, have agreed to compensate Microsoft for the copyright infringement so far.

Earlier this year, the BSA filed a lawsuit against Brabion, demanding 2.4 million drams ($6,000) in compensatory damages. The first court hearing on the case took place last month.

Mkrtchian said on Tuesday that top executives of private firms caught pirating rightly complain that Armenian government agencies and other state-funded organizations themselves routinely use unlicensed products for their computers.

"Eighty percent of programs used in our government agencies are pirated," Mkrtchian told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "Many directors of private firms caught pirating say that the government should start the legalization process from itself and serve as an example for the private sector."

# Israeli Diaspora Minister: Nobody in Israel Denies the Fact of Armenian Genocide


Public Diplomacy and Diaspora Affairs Minister of Israel, Yuli-Yoel Edelstein laing a wreathe at the Armenian Genocide Memorial

YEREVAN -- Public Diplomacy and Diaspora Affairs Minister of Israel, Yuli-Yoel Edelstein laid a wreathe at the Genocide Memorial on Yerevan's Tsitsernakabert hill during what was the second trip to Armenia by an Israeli government member in four months. Agriculture Minister Orit Noked visited Yerevan and paid her respects to genocide victims in April.

"The Armenian Genocide is widely recognized in Israel", the minister said after visiting the genocide memorial, he also drew parallels between the Jewish Holocaust and the Armenians Genocide of the 20th century.

"True, there is no state law [in Israel recognizing the genocide,]" Edelstein told RFE/RL's Armenian service (Azatutyun.am). "But I think that in Israel, in view of … our common history and some similar elements and moments, you will hardly find people who will deny the genocide, who will say, like we unfortunately hear, that all this is fabrications and lies."

"So I think that unfortunately -- I stress, unfortunately -- in this area our peoples have quite a lot in common, quite a lot for mutual understanding," he said.

Citing the strategic character of Israel's relationship with Turkey, successive Israeli governments have resisted domestic calls for Armenian genocide recognition. An Israeli Foreign Ministry official reaffirmed this stance during landmark hearings on the issue that were organized by an Israeli parliament committee last December.

Support for Armenian genocide recognition appears to have grown within the Israeli parliament, the Knesset, and the government since 2010. Some observers link that to Israel's worsened relations with Turkey, which vehemently denies the genocide.

Israel's Environment Minister Gilad Erdan, a close ally of Prime Minister Benjamin Netanyahu, publicly called for the Jewish state to "formally recognize the Holocaust perpetrated against the Armenian people" during further Knesset discussions on the sensitive issue in June. Erdan acknowledged that the Israeli government has not changed its policy yet.

Edelstein arrived in Armenia to attend, together with Armenian Culture Minister Hasmik Poghosian, an event marking the 20th anniversary of an organization representing the country's small Jewish community. He also held separate talks with Poghosian.

"When it comes to cultural exchanges, there are benefits to both sides involved," Edelstein told RFE/RL's Armenian service. "That is why I hope this is not just a visit but perhaps also a change to some different phase in at least cultural ties between us."

"I am sure that such meetings and contacts will continue and we will turn our relations from being just good and normal to relations that will fully realize the potential for cooperation between our countries," added the Ukrainian-born minister.



# Prof. Shemmassian to Present Musa Dagh at USC international workshop on Resisting the Path to Genocide

LOS ANGELES -- The 2020 "Genocide Resistance" Research Cluster, University of Southern California (USC) Dana andDavid Dornsife College of Letters, Arts and Sciences has organized an international workshop on "Resisting the Path to Genocide: Groups and Networks." The two-day conference will take place on September 7-8, 2012 according to the schedule indicated below.

The general theme of the conference seeks to answer the following questions: "How do opposition groups form? Which social, cultural and political conditions support the development of the group opposition and resistance? What kind of groups whether informal networks, private organizations or public institutions, are most likely to resist discrimination and violence in genocidal societies? How do we classify groups of resisters? What oppositional strategies have proven to be most effective at the group level? Do group activities have an impact, and can they help stop the violent radicalization of a genocidal society?"



Prof. Vahram Shemmassian, Director of the Armenian Studies Program at California State University, Northridge, and an expert on Musa Dagh, will be one of the presenters among scholars participating from the United States, Europe and Africa. He will focus onthe reasons why the majority of the Armenians of Musa Dagh elected to defy the Ottoman government's deportation orders in the summer of 1915 that aimed at genocide. He will also dwell on the process of the resistance that had a succesful outcome.

The conference is open to the public. Those who plan to attend are requested to contact AlidaLiberman, research assistant, ataliberma@usc.edu.

Friday, September 7: USC, University Park Campus, Doheny Library, Library Friend Lecture Hall

Morning Session: 10:00 – 12:30

Welcome remarks

Walter Richmond – German, Russian, and Classical Studies; Occidental College - Circassian Efforts to Broker Peace with Russia

VahramShemmassian –Armenian Studies; California State University, Northridge - The Decision and Process of the Musa Dagh Resistance to the Armenian Genocide

Tanja von Fransecky – History, Technische Universität Berlin, Germany - Group Escaping from Deportation Trains in France, Belgium and the Netherlands

Luncheon

Keynote address: 1:30 – 3:00

Mark Roseman – Pat M Glazer Chair for Jewish Studies & Professor in History, Indiana University Bloomington - Rescued from Memory: Hidden Networks and Hidden Jews in the Holocaust

Afternoon session 3:30 – 5:30

Michael Bazyler – Law, Chapman University - Lawyers as Resisters to the Holocaust; Lawyers as Perpetrators of the Holocaust; Lawyers as Bystanders to the Holocaust

Jadwiga Biskupska – History, Yale University - The Polish Intelligentsia and the Primacy of Jewish Victimhood

Saturday, September 8:VILLA AURORA, Pacific Palisades

Morning Session: 10:00 – 12:30

Susanne Beer – Sociology, University of Duisburg-Essen, Germany - Information networks of rescuers in Nazi Germany

Tim Gallimore – Higher Learning Commission, Interdisciplinary Genocide Studies Center - The Role of External Groups in Combating Genocide Ideology and Genocide Denial: The Case of Rwanda

Oscar EdororUbhenin – Public Administration, Ambrose Alli University, Nigeria - Informal Networks and Resistance to Mass Violence in Nigeria

Concluding remarks

HassounaMosbahi, Feuchtwanger fellow (Villa Aurora) - Readings from his novel "A Tunisian Tale" in Arabic and in English.

# Open Music Society Foundation to Perform at Shuttle Endeavour Arrival Ceremony




**Space Shuttle Endeavour. Photo by Matt Stroshane/Getty Images North America.**

LOS ANGELES -- The Open Music Society Foundation (OMSF), a Los Angeles-based arts organization, has been selected by the California Science Center Foundation to present artistic performances at the upcoming Space Shuttle Endeavour arrival ceremony, the OMSF announced today.

For the past several months, the California Science Center and OMSF have collaborated to develop the artistic program of the highly anticipated event, which will take place at Los Angeles International Airport on September 20.

The OMSF's involvement comprises the design and production of several especially commissioned performances, to be featured at various stages of the arrival ceremony.

The California Science Center was named by NASA as the new home of Space Shuttle Endeavour, which completed its last mission in 2011 following a 25-year run and close to 123 million miles of space travel. Thus Endeavor's trip to Los Angeles is considered something of a homecoming, given that the shuttle was built in Palmdale, near Los Angeles.

"The OMSF team and I are very proud to be a part of Endeavour's historic arrival in Los Angeles," said Aram Gharabekian, the OMSF's artistic director and conductor. "This will be a globally significant celebration, marking the shuttle program's extraordinary achievements, which continue to benefit all of humanity. I commend the California Science Center leadership and the cities of Los Angeles and Inglewood for their heroic efforts to bring Endeavour to California. The shuttle's homecoming will stir deeply felt emotions and civic pride throughout our community, and we're excited to join this celebration through the language of music."

On September 20, Endeavor will be flown atop a modified Boeing 747 from Florida's Kennedy Space Center to LAX, where it will remain a few weeks before being transported to the California Science Center. The arrival ceremony at the airport, to be held inside an United Airlines hangar, will mark the spacecraft's final journey.

According to a California Science Center spokesperson, the arrival ceremony will be attended by some 300 dignitaries and guests, and receive global media coverage. Highlights of the event will include a VIP reception, live feeds of Endeavour's landing and taxiing toward the hangar (shown on Jumbotron screens), rolling of the red carpet and disembarkation of dignitaries, and speeches by various officials, all interspersed with performances featuring some 40 OMSF artists. There are also plans to film the entire event for the production of a commemorative DVD.

The OMSF is in charge of the considerable logistics of the event's artistic program, which entails the execution of unconventional sound- and staging-design components, given the unique challenges of performing inside an airport hangar.

"We bring together talent from various nationalities, all collaborating to create great things," said Alina Koutnouyan, the OMSF's COO and a founding member of its Board. "Our organization is thrilled to work with the California Science Center's visionary leadership in celebrating the enormous scientific strides achieved through the space program, and Endeavour in particular. We are very grateful for the tremendous support and encouragement we have received from the California Science Center and City of Los Angeles, various Council members, and the community at large. We look forward to a memorable welcome to Shuttle Endeavour."



**OMSF artistic director and conductor Aram Gharabekian. Photo by Hakber.**

Varand Gourjian, another OMSF founding Board member and CFO, stated, "By collaborating with the California Science Center on Endeavour's arrival ceremony, the OMSF aims to achieve an exhilarating convergence of art and science."

On the night of October 12, Endeavour will leave LAX, arriving the next morning at Inglewood City Hall. From there the shuttle will travel through city streets to the California Science Center — the first time a spacecraft will be transported through urban roadways.

Beginning October 30, Endeavour will be on display at the California Science Center's Samuel Oschin Space Shuttle Endeavour Display Pavilion while the Samuel Oschin Air and Space Center, a new addition to the Science Center, is being built. When the new wing is completed, in 2017, Endeavour will be its centerpiece, along with the shuttle's external fuel tank and twin rocket boosters. The Samuel

massispost.com
daily news updates

# American University of Armenia to Launch Undergraduate Program in Fall 2013



**At the press conference (l. to r.) Director of Accreditation Sharistan Melkonian; Vice President of Operations Ashot Ghazaryan; AUA President Dr. Bruce Boghosian; AUA Foundation Board Member Dr. Yuri Sarkissian; Vice President of Finance Gevorg Goyunyan.**

YEREVAN -- The American University of Armenia (AUA) announced plans to launch its first-ever Bachelor's degree program, set to begin in the fall of 2013. In its over 20-year history, AUA has become one of the country's premier research institutes. With the addition of a new, four-year undergraduate curriculum, the university raises the bar for education in Armenia even higher.

The momentous announcement was made by AUA President Dr. Bruce Boghosian at a recent press conference which garnered worldwide media coverage. Dr. Boghosian noted that the undergraduate program will enroll approximately 300 students every year, with the goal of accommodating 1,200 undergraduates by 2017.

AUA's new undergraduate program will offer majors in Computational Sciences, Business, and English & Communications. The Bachelor's degree in Computational Sciences will include topics in applied mathematics and computer science, as well as courses in computational techniques for the simulation and modeling of systems of relevance to science and engineering. The coursework for the Bachelor's degree in Business will include a solid grounding in economics, finance, accounting, marketing, management, and business communications. The Bachelor's degree in English & Communications will include courses in journalism, public relations, writing, translation and other aspects of communications.

AUA's 4-year program will help lay a foundation for graduates who are well-positioned to pursue careers and advance progress in their homeland. All three programs will have a strong general education component, and will be taught in English. These new majors will complement the seven Master's degree programs that AUA currently offers.

The new AUA undergraduate program will allow the university to further its mission of providing accessible, high-quality education for the next generation of Armenian professionals - while at the same time making the school a destination for international students. "All of us at AUA are excited about reaching this new milestone...We remain committed to offering rigorous academics and an Armenian education, and look forward to a vibrant, international faculty and student body from Armenia and abroad," noted Dr. Boghosian. He further emphasized, "The university will keep in place its 'need-blind' admissions policy, continuing to ensure that no qualified Armenian student is denied an education at AUA because they lack the means to pay tuition."

The American University of Armenia is accredited by the Accrediting Commission for Senior Colleges and Universities of the Western Association of Schools and Colleges, 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, (510) 748-9001. Following an intensive proposal process, which included a visit to the university, the Commission approved the offering of the new undergraduate program. The Western Association of Schools and Colleges is one of six regional accreditation agencies recognized by the U.S. Department of Education. The undergraduate program has also already received a license from the Republic of Armenia's Ministry of Education and Science.

www.aua.am/undergraduate

# New Publication
## Sixth Edition of George Bournoutian's "A Concise History of the Armenian People"




COSTA MESA, CA -- Mazda Academic Press has just published the Sixth Edition of George Bournoutian's: A Concise History of the Armenian People. The revised and up-to-date edition is dedicated to Bournoutian's friend, Aris Sevag, who edited this edition.

Bournoutian's book, the first comprehensive survey in English of the history of the Armenians from ancient times to the present, has been adopted as a textbook in a number of high school and colleges and has been well-received by Armenian and non-Armenian readers. Students and teachers of history have made use of the special maps and timetables. Some 15,000 copies have been sold.

In 2003, the AGBU of Argentina commissioned a Spanish translation of the book to be undertaken by Ms. Tiravanti de Margossian. Published in Buenos Aires the book is titled Historia Sucinta del Pueblo Armenio and was featured at the International Book Fair in Buenos Aires. That edition was sold out and a new printing is in preparation.

In 2011, Bournoutian gave Aras Press of Istanbul permission to publish a Turkish translation prepared by Ender Abadoghlu and Ohannes Kilichdaghi. The title of the book is Ermeni Tarihi and it was featured at the Istanbul International Book Fair.

In 2012, the Egypto-Lebanese Publishing House, at the behest of the AGBU in Egypt, obtained Bournoutian's permission and prepared an Arabic translation by Sahar Tawfiq. Published in Cairo the book is titled Mawgez Tarikh al-Sh`ab al-Armani and was featured at the Cairo International Book Fair.

Simultaneously, the AGBU has undertaken to prepare an Armenian translation of the sixth English edition. Translated by Artsvi Bakhchinyan, the book is titled Hay Zhoghovrdi Hamarod Patmut`yun, will be published next week in Yerevan by the Hayastan Press.

While in Tokyo at the invitation of Sophia University to deliver two lectures on his books dealing with Iran and the Caucasus in the 18-19th centuries, Bournoutian signed an agreement with the noted Japanese publishing firm Fujiwara-Shoten to prepare a Japanese translation by Professors Komaki and Watanabe to be published in Tokyo in 2013 under the title Arumenia-jin no Rekishi.

# Arthur Abraham Crowned Champion

**Continued from page 1**

the challenger to the ropes in the second and started to exert his authority.

Stieglitz raised the tempo in the third and Abraham fell clearly behind on points going into the fourth, but responded with some body-head combinations and one sharp hook left Stieglitz with swelling above his left eye.

By the fifth, Stieglitz's face was marking noticeably while Abraham started to let his guard drop to lure the champion as he landed some punishing shots.

Stieglitz put together some good combinations in the seventh round and kept up his impressive work-rate, despite a cut above his right eye needing the attention of the ring doctor in the 10th.

Abraham raised his fists to the Berlin crowd in early celebration before the start of the 12 and finished clearly ahead on points as Stieglitz, 31, suffered the third defeat of his career in his 45th fight.

Next for Abraham is a match-up with the winner of WBA super-middleweight champion Felix Sturm and IBF middleweight title-holder Daniel Geale fight.

# An Effective Approach to Help the Armenian Community in Syria

**Continued from page 1**

Western U.S.A. (ARS), Sona Madarian, Secretary;

· Armenian General Benevolent Union (AGBU), Harry Balian, Vice Chairperson;

· Western Prelacy of the Armenian Apostolic Church of America, Meher Der Ohanessian, Treasurer;

· Catholicosate of Cilicia, Central Executive Board, Khajag Dikijian;

· Western Diocese of the Armenian Church, Barkev Hamalian;

· Armenian Catholic Church, Ara Aroyan;

· Armenian Democratic Liberal (Ramgavar) Party, Khachig Janoyan;

· Armenian Revolutionary Federation-Western U.S.A. (ARF), Vartkes Nalbandian; and

· Social Democrat Hunchakian Party-Western U.S.A., Harout Fakjian.

The abovementioned Executive Committee members are committed to do their outmost to reach out to community at large, to make the impossible possible and to extend a helping hand for the sake of the survival of the Syrian-Armenians.

The Executive Committee has also received the blessings of the Armenian Apostolic Churches, His Eminence Archbishop Mousheg Mardirossian, Prelate, and Archbishop Hovnan Derderian, Primate, as well as the leaders of the Armenian Catholic and Evangelical churches, and has already taken effective first steps.

We appeal to the Armenian people, to follow our announcements in the print and TV media, the web site www.syrianarmenianrelieffund.org, and Facebook page, and to make the most generous contribution that you could possibly make.

Please send your check payable to the Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948, or make an online contribution at www.syrianarmenianrelieffund.org.

Syrian Armenian Relief Fund
Executive Committee



# ՍՐՏԻ ԽՕՍՔ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԳԻՐԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆԻ 75ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ (ԵՐԵՒԱՆ)

*ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ*
*(Խմբագիր Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերուատորիայի «Երաժշտական Հայաստան Միջազգային Ամսագիր»ի)*



Եօթանասունհինգ տարի առաջ, 1938ի Օգոստոսի 17ին, Փիտէճեանների սուրբ յարկի տակ ծնուեց մի մանչուկ: Յօգնատանջ, աւանդապահ ընտանիքի նուիրեալ մայրիկը օրօրոցի մօտ ցածրաձայն օրօր էր երգում այնքան ժամանակ, մինչեւ մանկիկը քնի: Ու յանկարծ յայտնւում է բարի փերին, համբուրում է երեխայի ճակատը եւ ասում. «Կը լինես բիւրեղի պէս մաքրամաքուր, մեծահոգի, բարի ու կամեցող: Կ'ատես կեղծիքն ու չողոքորթութիւնը, աչքի կ'ընկնես ծնողասիրութեամբ, նաեւ՝ ջերմեռանդ հաւատքով ու հայրենասիրութեամբ»: Ասում է ու հեռանում: Այդ պահին երեխան սկսում է լաց լինել: Մայրը մօտենում է համբուրում է նրա աչուկները:

Դիոգինէսի որոնած մարդուն եւ հայրենասիրութեան ու ջերմեռանդութեան խորհրդարանի նորօրեայ բարեկամիս Գրիգոր Փիտէճեանին բնութագրող առաւել ճիշդ բնորոշում դժուար է գտնել, քան երեխայի սնարի մօտ ասել է բարի փերին:

Անսպասելի, հրթիռային արագութեամբ են անցնում ոչ միայն տարիները, այլեւ տասնամեակները:

Համընդհանուր յարգանքով ու սիրով շրջապատուած մեր սիրելի Գրիգոր Փիտէճեանի ծննդեան 75-ամեակի ժամանակ սրտամօտ մարդիկ ասում են խօսքեր, որոնք վաղուց էին ուզում ասել, բայց սպասում էին յարմար առիթի: Գ. Փիտէճեանը սփիւռքի մեր օրերու ամենայայտնի երաժշտագէտներից է եւ երաժշտական-հասարակական նուիրեալներից նոյնքան յայտնի գործիչներից մէկը: Հոգեկան մաքրութիւնը, շիտակութիւնը, ազնուութիւնն ու անմիջականութիւնը այն լծակներն են, որոնցով նա առինքնում է գրուցակցին եւ դարձնում շրջապատի սիրելին:

Հարուստ է Գ. Փիտէճեանի ներաշխարհը ու շռայլ այնքան, ինչքան նրա նկատմամբ շռայլ է եղել մայր բնութիւնը՝ տալով մեծ հոգի, ջերմ սիրտ, յուզաթաթաւ ներքին: Տոհմական ազնուականութեան դրոշմը կայ բարութիւնը ճառագող նրա դէմքին: Ստացել է ընտանեկան փայլուն դաստիարակութիւն, եւ մարդկային շատ առաքինութիւններ արեան միջոց անցել են նոյնքան բարի մայրիկից:

«Լաւը տեսնելի՛ս, -ասել է մեծերից մէկը, -ես էլ եմ լաւանում»: Գ. Փիտէճեանը այդ լաւն է, եւ նրա հետ առնչուող մարդիկ դառնում են աւելի բարի, կամայ թէ ակամայ թօթափում մարդկային մերժելին: Դրա շնորհիւ է, որ նրա անուան հոլովումը սիրոյ զգացում է յարուցում մարդկանց սրտերում:

Ճշմարիտ է ասուած «Որում շատ տուաւ, շատ պահանջեցի, որում սակաւ՝ սակաւ»: Եւ Ձեզ, սիրելի բարեկամ, Տէրը պարգեւելով բազում շնորհներ, խղճի մտօք ու սրտի թելադրանքով անձանձրոյթ կատարել ու կատարում էք առաւելագոյն չափով: Գ. Փիտէճեանը ապրում է մեծ մարդուն արժանավայել կեանքով, նման այն ճշմարիտ քրիստոնեային, որի նշանաբանն է «Սիրեցէք զմիմեանս, զի Աստուած սէր»:

Վսեմ առաքինութիւններով օժտուած Գրիգոր Փիտէճեանը մարդ է, որ շնորհիւ նրան սիրում են բոլորը: Այդպիսի ազնուածին մարդու, երաժշտական անխոնջ գործչի եւ տիպար ընկերոջ՝ հազուադէպ կարելի է հանդիպել այսօր: Իր բարեկրթութեամբ, համեստ պահուածքով, անսահման բարութեամբ նա լուսաւորում է շրջապատը եւ խաղաղարար նկարագրով իր զրուցակցի կեանքը դարձնում է թեթեւ ու հաճելի:

Նրա երաժշտագիտական աշխատութիւններն ու բազմաթիւ ջերմ յօդուածներն արժանացել են նաեւ հայրենի երաժշտագէտների ու երաժիշտների բարձր գնահատականին:

Գոհունակութեամբ պէտք է նշել, որ Գ. Փիտէճեանը սփիւռքահայ միակ երաժշտագէտն է, որ արժանացել է Հայաստանի երաժշտագէտների ու կոմպոզիտորների միութեան անդամի կոչման, որպէս երաժշտագէտի:

Սիրելի Գրիգոր, Նախախնամութիւնն իր սակաւ ընտրեալներին տալիս է հարուստ ներքին եւ փայլուն արտաքին: Քո ծննդեան պանծալի 75 ամեակի առթիւ, ի խորոց սրտի մաղթում եմ, որ ամենաբարին Աստուած նոյնքան փայլուն իրականացնի նաեւ քո բոլոր ծրագրերը եւ առաջին հերթին պարգեւի կատարեալ եւ ժայռեղէն առողջութիւն:

Քո կեանքի յետագայ տարիները, որոնք յաջորդաբար պիտի նշեց՝ 80 ամեակ, իսկ այնուհետեւ 90 ամեակն, անցնեն նուազագոյն հոգսերով եւ բազում ուրախութիւններով ու յաջողութիւններով: Պայծառ արշալոյսներով բացուեն կեանքիդ բոլոր լուսաբացները:

Հայ news am

# ՍՏԱՑԱՆՔ «ԱՐԱՐԱՏ-ՈՒՐԱՐՏՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԴՄԷՋԷՆ» ԳԻՐՔԸ



Խմբագրատունս ստացած է «Արարատ-Ուրարտու Աստուածաշունչի Ընդմէջէն» գիրքը:

Գիրքին հեղինակն է Պետրոս Մովսէս Թովմասեան, գիտական խմբագիրն է պատմաբան Արտակ Մովսիսեան:

Գիրքը տպագրուած է Երեւան, 2012ին, Զանգակ հրատարակչատան կողմէ:

Պետրոս Մ. Թովմասեան Ցեղասպանութենէն ետք առաջին սերունդէն է: Ծնած է Իրաքի Պասրայ քաղաքը: Աւարտած է՝ Պաղտատի Հայոց Ազգային Միացեալ Վարժարանը 1971ին: Աւարտած է՝ Պաղտատի Համալսարանի Երկրաչափական բաժանմունքը 1976ին՝ ստանալով քաղաքացիական ճարտարապետութեան մէջ պսակաւոր գիտութեանց վկայականը: Հեղինակն է՝ Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը գիրքին հրատարակուած Երեւան Զանգակ, 2006ին: Հեղինակն է՝ «Անցեալին Այս օր» յօդուածաշարքերուն, հրատարակուած՝ Իրաք, Յորդանան եւ ԱՄՆ:

«Արարատ-Ուրարտու Աստուածաշունչի Ընդմէջէն» պատմական բովանդակութեամբ խղճամիտ ուսումնասիրական աշխատութիւն մըն է, որ կը բաղկանայ մաքուր տպագրութեամբ՝ 125 էջերէ: Գիրքը հարուստ է գունաւոր քարտէզներով, ցուցակներով եւ շատ հետաքրքիր գծացուցակներով: Ունի նաեւ օգտագործուած աղբիւրներու եւ գրականութեան (հայերէն, անգլերէն եւ արաբերէն) ցանկ, ինչպէս նաեւ տեղանուններու եւ անձնանուններու ցանկեր: Հեղինակը օգտուած է հայերէն 30, անգլերէն 38 եւ արաբերէն 6ը աղբիւրներէ եւ ուսումնասիրութիւններէ:

Պետրոս Թովմասեան այս գիրքի մէջ ներկայացուցած է Ասորեստանի եւ Արարատ-Ուրարտուի (Վանի Թագաւորութիւն) պատմական սուր պայքարը Ք.Ա. 9, 8 եւ 7րդ դարերուն, եւ այդ պայքարի արձագանգ Աստուածաշունչի (Հին Կտակարանի) պատմութեան մէջ. ինչպէս եւ անոր ձգած զգալի ազդեցութիւնը Աստուածաշունչի մէջ յիշուած հրէական երկու փոքրիկ՝ Իսրայէլի եւ Յուդայի Թագաւորութիւններու պատմութեան զարգացման վրայ, որուն հետեւանքով երկարաձգուեցաւ այդ երկու փոքրիկ Թագաւորութիւններու գոյութիւնը:

Հեղինակը այս կարեւոր ուսումնասիրութեամբ կը լուսաբանէ այդ պայքարի ազդեցութիւնը, ինչպէս եւ Արարատ-Ուրարտուի յիշուած եւ չյիշուած ներկայութիւնը Աստուածաշունչի պատմական դէպքերու մէջ:

Հեղինակը կը յիշէ, «Ցաւօք սրտի, պատմաբաններու կողմէ Ուրարտուի (Վանի Թագաւորութիւն) կամ Արարատի (Արարատեան Թագաւորութիւն) ներկայացուցած՝ ուղղակի կամ անուղղակի ազդեցիկ դերը՝ Իսրայէլի եւ Յուդայի Թագաւորութիւններու պատմութեան վրայ գրեթէ երբեք պէտք եղած կերպով լուսաբանուած չէ. այս մեկնակէտէն ճամբայ ելլելով, ձեռնարկեցինք այս աշխատանքին. եւ կատարեցինք այս ուսումնասիրութիւնը»:

Այս արժէքաւոր ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ հայ ժողովուրդի ներկայութիւնը Հին Կտակարանի պատմական դէպքերու մէջ:

Վերջաւորութեամբ պէտք է մատնանշել, որ այս գիրքը անհրաժեշտ է, բոլոր հայ անհատներուն, որոնք կը հետեւին Ս. Գիրքի-Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասընթացքներուն:

Գիրքը կարելի է ձեռք բերել «Սարդարապատ» գրախանութէն կամ հեղինակէն, հետեւեալ ելեքտրոնային հասցէով. bedros.m.tomassian@att.net կամ հեռաձայն՝ (818) 913-1368:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 for USA

* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.

* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ------------------------------------------------

Address: -----------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: ------------

Tel :----------------------- Fax : -------------------------

# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ
# 80-ԱՄԵԱՅ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ԵՒ ԻՐ ԱՊՐԱԾ ՈՒ ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԸ

*ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

*Վարդգէս Պետրոսեան:*

*Անըմբռնելի միաձուլում մը մարդկային ներանձնական ապրումներու, սէրերու եւ կիրքերու եւ բարոյահոգեբանական խառնուածքի ինքնահակասութիւններով լի արուեստագէտ գրող մը, որ շատ հեշտօրէն իր ներքնախօսութիւնները կը վերածէր գրական էջերու, եւ իբրեւ քննախոյզ-արձակագիր՝ մեր ազգային-հասարակական բարդ իրավիճակներուն հանդուցալուծումները կը կատարէր ամենայն ճարտարութեամբ: Իր ողջ գրականութիւնը իր կեանքին «ապրած ու չապրա տարիներ»ուն արձանագրութիւնն էր եղած: Խառնուածքով բանաստեղծ էր, -1958-ին հրատարակած էր իր երախայրիքը՝ «Բալլադ Մարդու Մասին»: Ասպարէզ էր ընտրած լրագրութիւնն ու հրապարակագրութիւնը, ձեռնհասօրէն վարած էր խմբագիրի պաշտօններ,- բարձրակէտը՝ «Գարուն» ամսագիրն ու «Երկիր Նայիրի» շաբաթաթերթը: Իսկ ի վերուստ շնորհեալ արձակագիրն ու վիպագիրը վերջին երեսնամեակին իրեն ապահոված էր ամուր պատուանդան մը խորհրդահայ գրականութեան:*

*Արդարեւ, 1960-ական թուականներուն, հայրենական գեղարուեստական արձակը կը յատկանշուէր թարմ շունչովը այն շքեղ աստղաբոյլին, որուն երիտասարդ անդամները կերտեցին հայրենի գրականութեան արդիաշունչ երկերը: Վարդգէս Պետրոսեան (իբրեւ «Գարուն» ամսագրի հիմնադիր-խմբագիր) եւ իր սերնդակից ու գաղափարակից տղաքը, ինչպէս Հրանդ Մաթեւոսեան, Պերճ Զէյթունցեան, Մուշեղ Գալշոյեան, Զօրայր Խալափեան, Կարէն Սիմոնեան, Գէորգ Արշակեան եւ ուրիշներ, կանգնեցան արժանաւոր դիրքերու վրայ իրենց հրատարակած վէպ-վիպակներով, պատմուածքներով ու խոհավիպային էսսէներով (էսքիզներ պիտի կոչէր զանոնք Վարդգէս Պետրոսեան) որոնք կու գային արտասանելու իրենց նոր խօսքը, հայրենաշունչ եւ արդիական մօտեցումներով: Արդարեւ, խորհրդահայ գեղարուեստական արձակը 1960-ականներուն իրագործեց անկիւնադարձային ոստում մը՝ խորքով ու ձեւով: Խորքին մէջ հարկ է զետեղել համազգային ու պետական մակարդակով նշումը հայկական ցեղասպանութեան 50-ամեակին, հայրենի երիտասարդութեան առողջ ընդվզումը եւ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող քաղաքական ղեկավարներու փոխըմբռնողութիւնը: Ապա, արեւելահայերէն լեզուի ուղղափառ կիրարկումը քայլ առ քայլ գնահատելի աճ մը արձանագրեց: Իրօք. փոփոխուող ժամամակները իրենց դրական ազդեցութիւնը կը դրոշմէին գրականութեան ու մշակոյթի բոլոր մարզերէն, ու յատկապէս խորհրդահայ բանաստեղծութեան բնագաւառէն ներս: Ահաւասիկ այս ժամանակահատուածին հարազատ ծնունդը եղաւ Վարդգէս Պետրոսեանի «Հայկական էսքիզներ»ու երկհատոր գրական ժառանգութիւնը: Առաջին գիրքը լոյս էր տեսած 1969-ին (Հայաստան Հրտ. Երեւան): Հայրենիքին ու Սփիւռքին կենսական մտահոգութիւնները այս փոքրիկ հատորին մէջ միաձուլուեր էին իրարու մէջ:*

*Եղած մէկ հոգեկերտուածք: Քիչ մը բանաստեղծութիւն, - «յոյզ-ապրում-զգացողութիւն» կը գտնենք տարածուած այս զոյգ հատորներու բոլոր էջերուն՝ իբրեւ շունչ ու ոգի, գեղարուեստական պատկեր, ու վաւերաթղթային ճշգրտութեամբ պատում ու պատմութիւն:*

*Վ. Պետրոսեանի ներաշխարհին ծնուցիչը էր ու կը մնայ Գ. Նարեկացին՝ որուն հրեղէն բառերու աւազանին մէջ մկրտուեր էր ան իր ամբողջ զգայնութեամբ ու իմացական խորքով: Իրեն համար ընտրեր էր նաեւ աւագ եղբայր հոգի մը, նահատակի լուսապսակով շողշողուն «Պատկեր ու կենդագիր»ը անոր, որ բոլորիս ծանօթ Զարենցն էր: Անով կը շնչէր եւ անով կ՛ահագնանար իր ոգեղէն ամրոցը եւ ինք եւս այդ պահուն կ՛ուզէր նմանիլ անոր՝ որուն պէս ինք ալ «փոքրամարմին» թէեւ, բայց անկասելի ջրվէժ մըն էր ամփարած իր ներաշխարհին մէջ: Կլանուած՝ անոր «Մահուան տեսիլքով, որուն պղտոր, կատաղած հեղեղը քշում էր իր ժողովրդի պատմութեան դագաղը: Դագա՞ղը... Եւ առաջին տողը ծնուեց իբրեւ նորածին մանկան ճիչ.- »Թող ոչ մի զոհ չպահանջուի ինձնից բացի, Ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...»*

*Զարենցն էր ան, եւ հայ ժողովուրդն ամբողջ, փառքովն իր հեռաւոր անցեալին ու դժխեմ ճակատագիրովն իր ներկային (1894-1923): Եւ ինք՝ անոր սիրոյն, կենդանի պատարագ ու նահատակ:*

*Ահաւասիկ, այս հոգեվիճակը ամէնօրեայ ապրումի վերածող արձակագիրը եղաւ Վարդգէս Պետրոսեան: «Հայկական էսքիզներ»ը գրուեցան հոգեկան այս պայմաններու տակ: Հարց մի տաք իրեն, թէ գրական ո՞ր մէկ սեռին կը պատկանին անոնք: Իւրաքանչիւր պատում՝ իսկական ապրում մըն է ինքն իր մէջ: Մասնիկ մը այն հսկայածաւալ խճանկարէն զոր Շահնուր իրաւամբ կոչեր էր «Պատերազարդ Պատմութիւն Հայոց»: Եկէք, այս մեծապաստառ որմնանկարին սա կէտին վրայ կեդրոնացնենք մեր լուսարձակին շողքը, այնտեղ՝ ուր հայրենի արձակագիրը իր նշանաւոր «Կռիւ»ը կը մղէր իր ժողովուրդին հետ: Խօսքը կու տանք իրեն.*

*«Օ, իմ ժողովուրդ, դու հաւաքական Նարեկացի, գուցէ արդա՞ր էր, որ դու, հենց եւ միայն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար եւ հենց քո «ողբաձայն աղաղակը» չլսէր աշխարհը, թէպէտ դու աղաղակել ես հենց Նրա բառերով: Օ, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ձախողակ: Դու, որ սքանչելի բանաստեղծներ ունեցար, բայց ոչ մի դիւանագէտ եւ պետական մարդ (եթէ ունեցար՝ ուրիշներին ծառայեցին), դու, որ սրբացրիր բոլորին, որ ուզեցան, ճգնեցին քեզ ծառայել, քեզ օգնել՝ առասպելի Արտաւազդ արքայորդուց մինչեւ... Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու... Ես կռիւ ունեմ ժողովրդիս հետ, իսկ դու ասում ես ինձ հազարամեայ քո հեռուից.*

Մի կեղեքիր ինձ, յօշոտուած եմ, տես,
Արդէն ջարդուածիս էլ մի ջախջախիր,
Էլ մի բզկտիր, մորմոքուած եմ ես,
Մթնածիս նորից մի կուրացրու...

*Սիրեցի՞ր դու ոեւէ մէկին, ոեւէ մէկը սիրե՞ց քեզ... Իսկ սիրե՞լ ենք մենք ոեւէ մէկին, ոեւէ մէկը սիրե՞լ է մեզ...»:*

*Մէջբերուած այս տողերէն կ՛առանձնացնեմ նախ Զարենցին պատկանող նշանաւոր երկտողեակը (... Ուրիշ ոտքեր կախաղանին թող մօտ չգան...), ապա՝ Վարդգէսին ուղեղային մորմոքը բացայայտող տողը. «Ես չգիտեմ՝ այսօր, վաղը դու ո՞ւմ ես խաչելու...»: Անհաւատալի է, բայց իրաւ: Ինչպէ՞ս պիտի կռահէր թէ, անծանօթ օր մը՝, խաչուելու հերթը պիտի գար նաեւ իրեն, նախ՝ զինք «ողջակիզելով» իր իսկ «կրակէ շապիկ»ին մէջ, ապա՝ 1994-ի Ապրիլ 15-ին, իր հողանիւթ շինուածքը դարձնելով զոհ հայասպան փամփուշտի, գործադրուած խորհրդաւոր պայմաններու տակ, որ պիտի վայելէր «պաշտպանութիւնը» անպատժելիութեան մենաշնորհի մը ծխածածկոյթէն:*

*Ահա՛ թէ ինչու, իրեն զլացուեցաւ անձամբ ներկայ գտնուիլ իր 65-70-75 եւ այսօր 80-ամեակի հերթական յոբելեաններուն: Որովհետեւ, ոչ եւս է ան, իբրեւ անհատ:*

*«Ապրած եւ չապրած տարիներ» ասոյթը այլեւս դադրած է իր*

*Շար.ը էջ 19*

## ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

Քարերի երկիր են կոչում Հայաստանը:

Աշխարհի յիշողութեան մէջ Հայաստանը լեռների, ճարափների, ժայռերի ու ձորերի մի զանգուած է, եթէ ծառ է՝ ապա ոտները քարերի արանքում թողած, եթէ խաղողի վազ է՝ արմատները ծածկած-անցած քարերը, եթէ բարակ հողաշերտ է՝ ճարափների արանքում, ուրեմն պարզապէս յոգնել են քարերը, եւ հողն օգտուել է: Հազար գոյնի, հազար չափսի քարեր, մանր, ասես ընտրովի սերմերով ցանած եւ առատ բերք տուած միլիոնաւոր ճարակտորներ, պղնձէ ժայռեր, այդ ժայռերի մէջ՝ ասես մատներով փորուած ձորեր, զարմանալի մի քարաշխարհ՝ Զանգեզուր, միլիոնաւոր աղբիւրների ակունքների վրայ կործած վիթխարի մի քարաստան՝ Արագած, համաչափութեան բոլոր կանոններով սարքած հսկայ մի քարաժխոր՝ Ծաղկեվանք, եւ ի վերջոյ, ամայութեան մէջ ժայթքած քարէ զոյգ շատրուան՝ Արարատ...:

Այդպէս էլ գրել է բանաստեղծը.

«Դարերի երկիր,
Սարերի երկիր,
Քարերի երկիր՝ Հայաստանս»:
Քարերից են շարել մեր տների պատերը:
Կամուրջները:
Վանքերն ու բերդերը:
Գերեզմանները:
Ցիրաւի, քարէ Հայաստան:
Քարէ՞...:

Իսկ ինձ թւում է՝ քարացած, աւելի ճիշդ՝ քարացրած: Փոքր տղայ լինէի, դեռ հաւատայի հեքիաթներին, պարզ-պարզ կը պատկերացնէի նոյնիսկ այն չար, զարհուրելի կախարդին, որ անյիշելի ժամանակներում անցաւ մեր աշխարհով: Անցաւ, տեսաւ ու նախանձեց: Նախանձեց ու կախարդական գաւազանը բարձրացնելով, ծղրտաց.

– Քարացէ՛ք:

Ու քարացան զմրուխտ բլուրները, դաշտերում սվսվացող միլիոնաւոր ծաղիկներն անգոյն ճարակտորների փոխուած թափուեցին հողին, անշարժացան անտառները, հողը կծղեց ու կարծրացաւ, նոյնիսկ մեր աշխարհի գլխի ամպերը ծանրացան ու քարէ անձրեւ տեղաց:

Նայեց, գոհ նայեց կախարդը, հոհոաց քարէ ամայութեան երեսին: Նրա ծիծաղն էլ ճարակտորների պէս շպրտուեց այս ու այն կողմ:

Ու անցաւ ժամանակը:

Ու եկաւ իմ ժողովուրդն այստեղ ապրելու: Աստուած չտուեց նրան ուրիշ հրաշք-գաւազան, որ կարողանար քանդել կախարդանքը, մատներ տուեց, արթուն միտք եւ քարէ համբերութիւն: Եւ իմ ժողովուրդը սկսեց իր մատներով, մտքով ու համբերութեամբ թիզ առ թիզ քանդել կախարդանքի կծիկը, հողին վերադարձնել իր քնքշութիւնը, ծաղիկներին՝ իրենց գոյները, անտառներին՝ իրենց աղմուկը:

Հողից բրբրեց-հանեց քարերը:
Վանքեր շինեց:
Բերդեր:
Տներ ու կամուրջներ:
Աւաղ, նաեւ գերեզմաններ:

Նոյնիսկ ժամացոյց շինեց, ասեղնագործեց քարերի վրայ՝ տղամարդու հանճարեղ մատներով:

Բայց խանգարեցին նրան:

... Այսպէս եղաւ անընդհատ, չնչին դադարներով:

Բայց իմ ժողովուրդն՝ անընդհատ, առանց այդ չնչին դադարների անգամ, շարունակում էր մայր-հողն ազատել քարէ կախարդանքից:

Եւ բացուեց մի օր, որ սկիզբ դառաւ, եւ իմ ժողովուրդը կարող էր արդէն հանգիստ, անշտապ՝ շարունակել դարերի գործը՝ աւարտի հասցնել իր հողի ազատումը քարէ կախարդանքից:

Ու անցան եւ անցնում են տարիներ, որ դարեր արժեն:

Բացէք ձեր լուսամուտները ու նայէք դուրս:

Քայլէք ճանապարհներով, կածաններով:

Զարթնում է քարացած Հայաստանը:

Դեռ մարմնի ոչ բոլոր մասերով, բայց զարթնում է:

Ես գիտեմ՝ կը վերադառնան մեր բոլոր անտառները, կը զարթնեն քարէ քնից մեր բոլոր դաշտերի ծաղիկները, ամպերը կը թեթեւանան եւ մենք նորից կը նետենք վերեւ, դէպի երկինք, ջուր դառած քարերը վտակ-վտակ կը հոսեն մեր հողի երակներով, քարաժայռերի մէջքը կը ծակեն-դուրս կու գան մեր զսպուած աղբիւրները:

Իսկ մնացա՞ծ քարերով...:
Մնացած քարերով մենք տներ կը շինենք:
Արձաններ:
... Նաեւ գերեզմաններ:

# ԱՐՄԷՆ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ
## (ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ)

(Պատմաբան Մարտիրոս Գավուքչեանի տեսութեան հետքերով)

*"ԱՆՑԵԱԼԻՆ ԵՂԱԾ Է ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԻՐ ՄԸ, ՈՐ ՀՌՈՄԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆ ԷՐ ԵՒ ԿԸ ԿՈՉՈՒԷՐ՝ ARMENIA*

*ՊԷՆԻԹՕ ՄՈՒՍՈԼԻՆԻ*

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

Նախապատմական ժամանակներից սկսած, հաւատքը - կրօնը մարդկանց կեանքում առաջնային տեղ է գրաւել: Բնութեան, տիեզերական երեւոյթների անբացատրելիութիւնը, նրանց հանդէպ ունեցած նախապաշարումները, երկար դարերով ձեւաւորուած հաւատալիքները հասարակական գործունէութեան ընթացքում ուղղութիւն տուել, առաջնորդել իրենց:

Հին ժամանակներում, մարդկային հասարակութեան ամէն մի ցեղ, տոհմ ունեցել են իրենց պաշտամունքի առարկան՝ իրենց աստուածը: Տոհմերի ու ցեղերի մարդկանց բազմանալով, մեծացել է նաեւ ցեղի աստծոյ նշանակութիւնը: Իսկ ցեղերի միաւորումների ժամանակ աւելի հզօր ցեղի աստուածութիւնը դարձել է ընդհանուր աստուածութիւն:

Ըստ սեպագիր արձանագրութիւնների, միջցեղային ու միջպետական պատերազմները սանձազերծուել են յանուն իրենց աստուածների: Ցեղերի, պետութիւնների ղեկավարները կատարել են ցեղի, պետութեան աստծոյ կամքը: Այդպէս է նոյնիսկ նոր ժամանակներ, մահմետական ազգերի առաջնորդներ կռուի են կոչում յանուն իրենց "Ալլահի": Եւրոպացի "Խաչակիրները" կռուի ելան յանուն Քրիստոսի գերեզմանի ու սուրբ տեղաց ազատագրութեան, այն պարապ գերեզմանի համա՞ր էր, թէ՞ արեւելքին տիրելու:

Ցեղեր, պետութիւններ սկսել էին իրարից տարբերուել իրենց աստուածների անուններով: Ըստ պատմական հետազօտութիւնների տուեալների, որոշ ցեղերի ու պետութիւնների բնակավայրերի անունները առաջացել են իրենց պաշտած աստուածների անուններից: Ցեղերի միջեւ ծագած կռիւների ժամանակ պաշտպանուելու համար, համախմբուել են իրենց բնակավայրերի տարածքի կեդրոնական մասում, հաստատել իրենց աստծոյ տաճարը, տուեցել նրա անունը: Ցեղի խոշորացումով այդ բնակավայրը դարձել է շրջանային կեդրոն, ապա երկրի մայրաքաղաք, որդեգրելով ցեղի աստծոյ անունը: Այդպէս է, որ Ասորեստանը Աշուր աստծոյ անունով, Հռովմը Հռոմուլոսի անունով, Արմինա - Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան Խալդի աստծոյ կնոջ Տուշբուէա անուններով են կոչուել:

Ըստ վերոյիշեալ պատմական հետազօտութիւնների արդիւնքների, Առաջաւոր Ասիայի հնագոյն ժողովուրդներից եւ ցեղային միութիւններից մէկը ներկայացնող "Արմէն" անունը առաջացած պէտք է լինի այդ ցեղի կանխագոյն գլխաւոր աստծոյ անունից, որի անունը եղել է "Ար" կամ "Արա": Արմէն անուան կանխագոյն ձեւը եղել է "Ար-մանի": Ար-մա-նի անուան "Ար" բաղադրիչը արմէնների ազգային գլխաւոր աստուած "Ար", "Արա" արեւն է: Սումերերէն "ar" եւ "ara" նշանակել են ճառագայթել, լոյս տալ: "Մա" բաղադրիչը, նոյն լեզուով նշանակել է ծնել, սերել, իսկ Ար-մա՝ "արածին, արի-սերունդ, արորդի, արեւորդի": Ար-մա-նի անուան "նի" վերջածանցը սումերա-հայկական յոգնակի մասնիկն է, որը փոխուել է հայերէն "ք" յոգնակի մասնիկի, հետեւաբար Ար-մա-նի նշանակում է՝ արածիններ, արորդիներ, արեւորդիներ, Ար-ից (Արա-ից) ծնուածներ, Ար-ից սերուածներ: Այն նշանակում է նաեւ "Ար" ցեղի՝ արորդի-արեւորդների բնակավայր, "Ար" ցեղի երկիր, ինչպէս "Հայք", "Վիրք" նշանակում են՝ հայեր ու հայերի երկիր եւ վրացիներ ու վրացիների երկիր:

Մովսէս Խորենացի իր մատեանում Հայկ Նահապետին բնորոշել է որպէս Յաբեթածին, Նոյի զաւակ Յաբեթի զարմի Թորգոմից ծնած: Ար-մա, ունեցել է նաեւ "Արաշէն" իմաստը, այսինքն Ար- ի շինած, Ար-ի քաղաք՝ "Արաշէն", ինչպէս Պատմահայր Մովսէս Խորենացին պիտի յիշատակէր "Հայկաշէն" անունը՝ "Շինէ Հայկ եւ գիւղ մի եւ անուանէ իր անուն Հայկաշէն": Հին ժամանակներում մարդիկ ճանաչուել են ծնողների անուններով: Թագաւորների արձանագրութիւններում, նրանց անունների կողքին յիշատակուել են նաեւ հայրերի անունները: Հնդեւրոպական լեզուներով խօսող մարդիկ, իրենց անունների կողքին նշելով հօր անունը, աւելացրել էին "ծին" վերջածանցը, իսկ հայերը նաեւ "ազն", "զուն", ինչպէս՝ Յաբեթածին, արքայազն, հայկազուն: Սումերերէն "me" եւ "ma" բաղադրիչները "ծին" նշանակութիւնը ունեն, հետեւաբար "ar-ma" արածին նշանակութեամբ հոմանիշներն են Arme, Ara-me ձեւերին: Նրանք նոյնպէս հոմանիշ են Arman-ni, Armen-ni ձեւերին որպէս՝ "Արածիններ", "Արածինների" երկիր: Արմինա-Ուրարտուի Արայան արքաները յիշատակւում են Arme, Urme ձեւերը:

Տիեզերքի Միհր աստծոյ "ծաղկացած" լոյսով ողողուած, մանուշակի կապոյտով ցօղուած երկնակամարով երկիր մոլորակը հազար-հազար տարիների ժպիտի լոյսով ճեմել է իր Արա-արեւի շուրջ բոլորը: Արմէնների ցեղախմբերը ստեղծել են հզօր պետական միաւորումներ՝ Արատտա, Սուբարտու, Միտաննի, Նաիրեանների առանձին Բիանաներ, միացեալ բիանաների համադաշնային հզօր Արմինա, արարել իմաստութիւն, ստեղծել աշխարհակալութիւններ, քանդել պարիսպները Նինուէի, նուաճել Բաբելոն, թագաւորել այնտեղ, յաղթել հզօրներին, պարտուել, ընդվզել, գոյատեւել, ստեղծել աստուածներ, իրենց զարմի սերունդներին փոխանցել նախնիների աւանդապատումները, ժայռերին գրել իրենց պատմութիւնը, իրենց հետ տարել աստուածներին, իրենց Ար, Արա կրակի, արեւի աստծոյ զարմից սերած լինելը պատգամել ժայռերի, քարայրների, ամրոցների պատերի վրայ դրոշմած սեպագիր գրերով: Թագաւորի պարտադրանքով իրենց երկիր էին բերել հարաւի Վարդապետի "Աստուածի" հաւատքը: Սպաննել էին իրենց հին աստուածներին, մարել նրանց տիեզերքի, բնութեան օրինաչափութիւնների հաւատքի իմաստութեան փառաբանումը, քանդել նրանց մեհեանները, նրանց ընկած վիրաւոր վէմերով պատել նոր հաւատքի տաճարներ: Նրանց նախնիների աւանդապատումները, նրանց լուսոտ հաւատքի հէքիաթային փառաբանումը մարելու համար, նախնիների բոլոր տօնախմբութիւնները փոխարինել էին նոր հաւատքի երեւակայական դրուագներով:

Աւանդապահ Արմէն-հայերի հոգիներում շարունակել էր վառուել իրենց տիեզերական հաւատքի ճրագը, կարծես իրենց աստուածների մեհեանների շուրջը շարքեր բռնած, շարունակել էին տօնախմբութիւններին նախնիների շուրջ պարերը բռնել, խենթացած հոգով պինդ զարկել էին հայրենի հողին, որ այն Արտաւազդի շղթային նման ամրանար: Մինչեւ շատ ուշ ժամանակներ, նոյնիսկ նոր ժամանակներին, իրենց արի որդիք որպէս "Արածին" "Արեւորդիներ" շարունակել են հին աստուածների իմաստութեան հաւատքի պաշտամունքը: Հիմա, իրենց մայր ոստանում բացում "Արի" պարմաններ են խմբուել, հին աստուածների մեհեան են պատելու, քուրմեր դարձած տօնախմբում իրենց "արեւ" աստուած Միհրի ծնունդը, իրենց պատերազմի, յաղթութեան աստուած Վահագնի ծնունդը: Եւ մայր ոստանի մարդիկ Միհրի տաճարի բարձունքին իրենց նախնիներին, իրենց հին աստուածներին գրկած շարքերով շուրջ պարեր են բռնում: Հայ, քու զաւակներին գրկած, դու էլ գնա՛ նրանց հետ շուրջ պարի մտիր, տաճարի ատրուշանի մոխիրով նրանց ճակատները շոյիր, որ քու հին աստուածների իմաստութիւնը հոսի նրանց մտքերին:

Հրեայ պատմիչ՝ Յովսէպոս Փղափոսը, մ.թ. Ա դար, Դաւիթ թագաւորի մղած պատերազմների մասին հաղորդելով, յիշատակել է նաեւ արմէն-հայերի մասին խիստ կարեւոր հետեւեալ տեղեկութիւնը՝ "Եւ մինչ անոնց վրայ տարեկան տուրք դրաւ, անմիջապէս Ծոփաց Ադրազատ թագաւորին՝ Արայի որդւոյն, դէմ քալեց, եւ անոր հետ Եփրատայ քով պատերազմելով...": Հնարաւոր է, որ այդ պատումի հիմքը հրէական մի աւանդապատում եղած լինէր: Արան է այնտեղ: Հրեայ պատմիչի այդ տեղեկութիւնը ի՞նչ աղբիւրից էլ որ եղած լինէր, օտարի կարեւոր վկայութիւն է: Ծոփած աշխարհում նաիրեան արմէն-հայերի թագաւորութիւն էր, որը գտնւում էր Հայկական Լեռնաշխարհի հարաւարեւմտեան շրջանում: Այն, Ասորեստանի թագաւոր Նարամ Սինի յիշատակած Արմանին է, "Ար" Արայ արեւ աստծոյ արեւորդիների (Ար ցեղի) երկիրը: Հայոց Լեռնաշխարհի հարաւային հարեւանները, նաեւ Պաղեստինն ու հրեաները, հայկական աշխարհի հետ շփման մէջ են եղել Ծոփաց աշխարհով, եւ արմէն-հայերին պիտի ճանաչած լինէին որպէս ar-ma, ar-ma-ni "ար"-ի որդիներ (Արայի որդիներ): Պատմիչը, Ծոփած աշխարհի հայ թագաւորին Ար-մա, Արմէն կոչելու փոխարէն ասել է՝ Արայի որդի: Նման որակումով պատմիչը նշում է, Ծոփած թագաւորի Արայի ցեղին արեւորդի լինելը, Արայի ցեղին պատկանելը: Հրեայ պատմիչի այդ վկայութիւնը ցոյց է տալիս Արմա անուան նշանակութիւնը որպէս Արայի որդի, որպէս Ար-ի որդի՝ արորդի, արեւորդի լինելը, Արայի ցեղին պատկանելը:

Մուշ քաղաքին մօտիկ գտնւում է Արմինա-Ուրարտուի Մենուա "Արայան" արքայի կոթողը, որի չորս երեսների վրայ արձանագրութիւն կայ: Այն կարդացւում է այսպէս, "Քաղաք Ատաունէ, դուրս ելայ (արշաւի) Ուրմէ երկրի դէմ, նուաճեցի ես Ուրմէ երկիրը, կագնեցրի այս արձանագրութիւնը Արխի երկրում...":

"Արխի երկրում", Մենուա արքան այդ երկիրը կոչել է որպէս Արխի (Ար-եան, Արա-եան) երկիր: Այդ անհերքելի ապացոյց է, որ "Ար-մանի"-ն արորդիների, արեւորդիների երկիր է նշանակում:

Սումեր աքքատական արքաների տիրապետութեան հասողութեան

Շար.ը էջ 17



## ԿԱՆԱՅՔ ՍՈՎՈՐԱԲԱՐ Կ'ԱՆՏԵՍԵՆ ՍՐՏԻ ԿԱԹՈՒԱԾ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Թէեւ սրտի կաթուածը ամբողջ աշխարհի մէջ կը համարուի առաւելապէս տղամարդոց բնորոշ առողջական խնդիր, սակայն ատիկա թիւր կարծիք է: Միայն ԱՄՆ-ի մէջ սրտի կաթուածէն տարեկան կը մահանայ 270.000 կին: Այս ցուցանիշը աւելի մեծ է, քան ամէն տարի քաղցկեղի բոլոր տեսակներէն կանանց մահացութեան թիւը:*

*Անտեսելով սրտի կաթուած ստանալու մեծ հաւանականութիւնը՝ կանայք կը կարծեն, որ իրենց առողջութեան համար ամենալուրջ վտանգը կուրծքի քաղցկեղն է, որ Միացեալ Նահանգներուն մէջ կը դառնայ տարեկան 40.800 կանանց մահուան պատճառ:*

*Ամերիկացի յառաջատար սրտաբաններէն մէկուն՝ Նոէլ Պէյրէյ Մերզի համաձայն, կանանց մեծ մասը իրականութեան մէջ անտեղեակ է սրտի կաթուածի նախանշաններուն, որոնք կ'արտայայտուին տարբեր կերպով՝ կախուած անձի սեռէն: Օրինակ տղամարդոց մօտ այդ նախանշաններէն ամենաառաջինն ու կաեւորը կրծքավանդակի հատուածին ուժեղ ցաւի զգացումն է: Սակայն իգական սեռի պարագային՝ այդ ախտանիշը պարտադիր պայման չէ: Ուստի անոնց սրտի կաթուածը բարդ է ախտորոշել, որուն հետեւանքով այս հիւանդութիւնը կանանց մէջ աւելի շատ մահերու կը յանգեցնէ:*

*Հիւանդութեան յառաջացման հարցով մեծ դեր կը խաղայ ծխելու հանգամանքը, քանի որ ծխող կանայք չորս անգամ աւելի շուտ կրնան կաթուած ստանալ, քան՝ չծխողները:*

*Մասնագէտները, կանանց մօտ սրտի կաթուածէն մահացութիւններուն թիւը կրճատելու համար, կոչ կ'ուղղեն ստուգելու արեան բարձր ճնշումը, մաղձաճարպը (cholesterin) եւ շաքարի բարձր պարունակութիւնը օրգանիզմին մէջ: Առողջարար սննդակարգը, մարմնամարզութեամբ զբաղիլն ու կշիռքը բնականոն վիճակի մէջ պահելը լաւագոյն տարբերակն են սրտի կաթուածէն խուսափելու համար:*

*Այդ նպատակով մասնագէտները ներկայացուցած են այն վեց նախանշանները, որոնք ոչ մէկ պարագայի կանայք պէտք չէ անտեսեն եւ անոնց առկայութեան պարագային պարտադիր դիմեն բժշկին.*

*1.Շնչառութեան դժուարացում*

*2. Ուսերու, ձեռքերու, մէջքի կամ ծնօտի հատուածին ցաւ*

*3. Անբացատրելի, անհիմն յոգնածութիւն*

*4. Ուժեղ քրտնարտադրութիւն*

*5. Սրտխառնոց ու գլխապտոյտ*

*6. Անհանգստութեան զգացում*

*Բժիշկներուն խօսքերով՝ ճիշդ ժամանակին ցուցաբերուած բժշկական օգնութիւնը կրնայ 50%-ով նուազեցնել կանանց՝ սրտի կաթուածէն մահանալու հաւանականութիւնը:*

## ԱՐԱԳ ՆԻՀԱՐՆԱԼՈՒ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԻՆԳ ԲԱՂԱԴՐԻՉ

*Երկար տարիներ շարունակ գիտնականները կը փորձէին գտնել այն կախարդական բաղադրիչը, որ կ'օգնէր մարդոց կշիռքը նուազեցնելու: 2008-ին Մինեսոթայի համալսարանի բժիշկ Շալամար Սիբլին 38 գէր մարդկոց համար ստեղծած է 11 շաբաթնոց սննդակարգ, որուն ընթացքին անոնք օգտագործած են 750 գալորի աւելի քիչ, քան մինչ այդ: Իբրեւ արդիւնք պարզուած է, որ այն մասնակիցները, որոնց արեան մէջ D-կենսանիւթով պարունակութիւնը հետազօտութեան սկզբին բարձր եղած է, 70%-ով աւելի շատ կշիռք կորսնցուցած են, քան անոնք, որոնց արեան մէջ վիտամինի բաղադրութիւնը աւելի ցած եղած է:*

*Ուստի հիմնուելով այս հետազօտութեան արդիւնքներուն վրայ՝ գիտնականը յանգած է այն եզրակացութեան, որ D-կենսանիւթով հարուստ սնունդ ընդունելով, մարդու մարմինը զերծ կը մնայ ճարպի կուտակումէն եւ կը նպաստէ անոր այրման:*

*Վերջին 40 տարիներու ընթացքին հազարաւոր ուսումնասիրութիւններ իրականացուած են վիթամին D-ի վերաբերեալ, որուն արդիւնքով յայտնի դարձած է, որ կշիռքի նուազեցման հարցով ան ուղղակի «հրաշքներ» կը գործէ:*

*Սակայն, բացի վիտամինի այս բարերար ազդեցութենէն, գիտնականները յայտնաբերած են եւս 4 սննդային բաղադրիչ, որոնք ոչ պակաս կը նպաստեն նիհարնալուն:*

*Առաջինը կալսիումն է, որ կը պահեստաւորուի ճարպային բջիջներու մէջ: Մասնագէտները կը գտնեն, որ ինչքան շատ գալսիում պարունակեն բջիջները, այդքան աւելի հեշտ եւ շուտ կայրի: Նաեւ կալսիումը կը նպաստէ կշիռքի նուազեցման՝ ճարպերը աղեստամոքսային համակարգի մէջ պահելու եւ անոնց մուտքը արեան մէջ արգելափակելու շնորհիւ:*

*Երկրորդ տեղն են փրոթէյինները, որոնք կ'օգնեն քիլոկրամները կորսնցնելու ժամանակ պահպանել մարմնի մկանային զանգուածը: Վերջերս Իլլինոյի համալսարանի մէջ իրականացուած հետազօտութիւններու արդիւնքով պարզուած է, որ օրական 2 անգամ փրոթէիններ օգտագործող կանայք 4%-ով աւելի շատ կշիռք կը կորսնցնեն:*

*Երրորդ տեղն են Օմէկա 3 ճարպային թթուները, որոնք կը յանգեցնեն կշիռքի կորուստին ճարպային բջիջներն այրող յատուկ էնզիմներու օգնութեամբ: Անոնք նաեւ կը նպաստեն տրամադրութեան բարձրացման եւ ախորժակի փակման:*

*Այնուհետեւ ձիթաիւղի, ընկուզեղէնի, հացահատիկի, աւոքատոյի, գետնանուշի եւ տուրմի բաղադրութեան մէջ առկայ MUFA ճարպերը: Անոնք կը նպաստեն ուտելու ցանկութեան կորուստին եւ կը նուազեցնեն արեան մէջ շաքարի պարունակութիւնը:*

## ՀՈԳԵԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀՕՐ ԵՒ ԻՐ ՏՂԱՅ ԶԱՒԱԿԻՆ ՄԻՋԵՒ

*Հարցումը կ'ըսէ. «Ի՞նչ են այն հիմնական հարցերը, զորս կը ծագին հօր մը եւ իր տղայ զաւակին միջեւ»:Հայրերուն եւ տղայ զաւակներուն միջեւ խնդիրները կը տարբերին «հօր մը, որ իր դերը պէտք եղած ձեւով չի կատարեր», եւ «հօր մը, որ իր դերը պէտք եղածէն աւելի կը կատարէ» տարբերութիւններուն միջեւ:Առաջին տեսակին մէջ կարելի է հայրը նկարագրել որպէս իր զաւկին կեանքէն բացակայ եղող անձ մը: Իր այս բացակայութիւնը տուն կը վերածէ «մօրը փոքրիկը» կոչուող տղու մը, եթէ կրցանք ճիշդ ձեւով բացատրել այս պարագան, եւ այդ զաւակը կ'ըլլայ տխուր եւ ինքնավստահութենէ զուրկ: Երբ այս զաւակը դեռատի է, ան դատարկութիւն կը զգայ, որուն մասին կ'արտայայտէ անհաւասարակշռուած վարուելակերպով եւ երբեմն կը զգայ, թէ ինք անբաղձալի զաւակ մըն է:Երկրորդ տեսակին մէջ հայրը կ'ըլլայ իշխող ու տիրող, եւ այս հարցը իր զաւակին հետ յարաբերութիւնը կը վերածէ յարատեւ թշնամական յարաբերութեան մը: Ինչպէս նաեւ կարելի է այսպիսի հայր մը նկարագրել որպէս հայր մը, որ իր զաւակին համար կը փափաքի փայլուն յաջողութիւններ, որպէսզի ինք հպարտ զգայ: Երբեմն ան իր զաւակին կը պարտադրէ հարցեր, զորս ինք յարմար կը տեսնէ, ինչպէս օրինակի համար այն բժիշկը, որ կ'ուզէ իր տղայ զաւակը իրեն պէս բժիշկ դառնայ, կամ այն հայրը, որ իր զաւակին հետ բարեկամութիւն կը հիմնէ եւ աչք կը խփէ որպէս հայր իր ունեցած պատասխանատուութիւններուն եւ դերին:Որքան ալ ըլլան զաւակին եւ իր հօր միջեւ խնդիրներ, մայրը կրնայ իր տղուն օգնել՝ զանոնք թեւակոխելու, պայմանով որ մայրը չփորձէ ամուսնոյն տեղը գրաւել կամ «հօր» նկարը գեղեցկացնել ու զայն իրականութենէն շատ հեռու կերպով օրինակելի դարձնել: Եթէ հայրը գործնական դեր չունի, մայրը պէտք է զայն գիտնայ եւ այդ հարցը արծարծէ իր զաւակին հետ, որպէսզի ի պահանջեալ հարկին մայրը պաշտպանէ իր զաւակը: Սակայն, միեւնոյն ժամանակ, մայրը պէտք է իր զաւակին հետ խօսի անոր հօրը մասին եւ պէտք է անոր հետ փորձէ սահմանել այն պատճառները, զորս թոյլ կու տան զաւակին՝ հասկնալու իր հօր վերաբերմունքը:Անհրաժեշտ է, որ զաւակը գիտնայ այն հարցերուն մասին, զորս իր ընտանիքը կը դիմագրաւէ եւ որոնց պատճառը ինք չէ, այլ այն դաստիարակչական ոճը, որուն հիման վրայ անոնք՝ ծնողքը աճած են, եւ թէ անոնք իր հետ կը վարուին այդ նոյն միջոցով, որուն հետ իրենց ծնողքը դաստիարակած է իրենց:*

*-Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ Պաշտպանել այն բանը, որուն կը հաւատաս, առանց նկատի առնելու տարբերութիւններն ու գոյութիւնդ խաթարող ճնշումները: Այս կը նշանակէ խիզախութիւն: Երբ ներքնապէս տառապանքի մէջ ես՝ ուրիշներուն սատարելու նպատակով, երեսիդ վրայ ժպիտը պահելով: Այս կը նշանակէ կորով: Ոչ մէկ բանի դիմաց կանգ առնել եւ սրտիդ մէջ գտնուող ճիշդ բանը կատարել: Այս կը նշանակէ վճռակամութիւն: Սպասուածէն աւելին կատարել առանց որեւէ դժգոհանք արտասանելու, ուրիշին կեանքը քիչ մը աւելի հաճելի դարձնելու համար: Այս կը նշանակէ կարեկցութիւն: Օգնութեան պէտք ունեցող բարեկամի մը օգնել առանց նկատի առնելու ժամանակն ու ջանքը եւ առանց որեւէ կարողութիւն խնայելու: Այս կը նշանակէհաւատարմութիւն: Գլուխդ բարձր պահել երբ կեանքը իյնալու վրայ է եւ իւրաքանչիւր դժուարութիւն հաւատքով դիմակալել, յուսալով աւելի փայլուն վաղուան համար: Այս կը նշանակէ վստահութիւն: Քու կեանքիդ հարցումներուն՝ դուն ես միակ պատասխանատուն: Քու կեանքիդ հարցերուն՝ դուն ես լուծումը:*

## ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ Բ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱՁԳՈՒԱԾ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինումով, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան, անականկալ պարագաներով Նորին Սրբութեան պատուիրակութեան մաս կազմելով Սեպտեմբեր 7–11, 2012 պիտի գտնուի Ֆրանսա եւ Վատիկան:

Բացառիկ այս տնօրինումի պատճառով, Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի Օծման Երկրորդ Տարեդարձի տօնակատարութիւնները՝ հանդիսաւոր Սուրբ Պատարագը, Թրբանճեան Հրապարակի Կոթողի Բացումը, Գեղարուեստական Յայտագիրը եւ Պաշտօնական Ճաշկերոյթը, ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 9էն յետաձգուած է եւ տեղի պիտի ունենայ Խաչվերացի Տօնին օրը՝ ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 16ին, 2012:

Հաճեցէք անակնկալ կերպով կատարուած այս փոփոխութիւնը նկատի ունենալ եւ փոխանցել նաեւ ձեր անմիջական շրջանակներուն:


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**



**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

**1060 North Allen Ave**

**Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած**

**եւ յարմար վարձքերով**

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝

(626) 398-0506

# ԱՐՄԷՆ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*մէջ էր գտնւում Աղձնիք երկիրը: Արմանին (Արմէ Շուպրիա), Սումերերէն կոչւում էր՝ Սուբիր, իսկ Աքքատների կողմից Սուբարու (Սուբարի-Սուբարտու): Արմանին նուաճող Նարամ Սինը իրեն համարում էր՝ "Յաղթողը Սուբարուի, մինչեւ անտառը մայրիների": Sub-ar(u), Sub-ar(tu) կազմուած է երկու բաղադրիչ մասերից, որոնցից առաջինը՝ Sub բաղադրիչը Սումերերէն նշանակում է՝ "Երկրպագել, պաշտել", իսկ ar բաղադրիչը նոյն լեզուով նշանակում է՝ շողալ, փայլել, որը արմէնների "Ար" Արան է: Սուբարի ամբողջութեամբ նշանակում է՝ "Ար" պաշտողներ, Արապաշտներ, արեւապաշտներ: Այդ Արապաշտները կոչւում էին նաեւ Արմա-նի, "արորդիներ", (արեւորդիներ): "Արման" կամ Արմանի նշանակում է*

*"Արորդիների երկիր", ինչպէս որ Subar կամ Subartu նշանակում է Արապաշտների երկիր: Ար-մա անուան "մա" վերջաւորութիւնը ունեցող շատ անուններ յիշատակւում են Մերձաւոր Արեւելքի սեպագիր արձանագրութիւններում: Ստորեւ մէջ բերւում է յիշատակութեան արժանի "Ար", "Մա" բաղադրիչներով սկսող ու վերջացող մի շարք անուններ.*

*ԱՐՏԱՇԱՄԱ, Արտաշէս "անուշ" թագաւորի դստեր անունն է, ում արքան կնութեան է տուել Պոնտոսի Միհրդատին, որին Պատմահայր Խորենացին յիշել է իր մատեանում: Մոլորակի չափ կշռող գիրք, արեւի լոյսով լեցուն գիրք, "ոսկիով" ու անհամար "մտքի" գանձերով լեցուն, արմէն-հայերի "Սրբազան Լեռնաշխարհի" պատմութեան, իմաստութեան գանձատուն գիրք, որտեղ արարչութիւն եղել, որտեղ արեգաճեմ լեռը իր ափը պարզած տապանին բերաւ հանգչելու իր գահին: Նրա ստորոտում նորէն կեանք եղել, այնտեղով անցաւ "Արմա-Արմէն" ցեղը, այնտեղ Արմանի-Հայաստան երկիրն է: Այնտեղով են անցել Արմինայի Նաիրեան հայկազուն Արայ-Արայեան արորդի արքաները, Արամ-Արամէ արքան իր Նաիրեան ցեղերի Արմինա թագաւորութիւնով: Բզնունեաց ծովի ծիրանի ջրերում աստուածների երկունք եղել, հրաբուխներից պայթած կրակ քարերով պատած աստուածների մեհեաններ յառնեցին: Արմէն-հայերի ազգապետ Հայկ Նահապետը յաղթական կռւում խոցեց լանջը Արման-Արմէն-Հայ ցեղին ստրկացնելու եկած օտար թագաւորի: Հայկազուն "անուշ" Արտաշէս թագաւորը արծուային թռիչքով գետն անցնելով Ալանաց օրիորդին ճանկելով հարս բերեց, որի հարսանիքին հայոց աստուածները ոսկի ու մարգարիտ տեղացին: Արեւելքի արքաների արքայ Տիգրան անցաւ ու իր քաջերի զէնքով երկրի սահմանները տարաւ ծովերի չորս դին, որտեղով խրոխտ Արշակ անցաւ իր Վասակ սպարապետով: Վռամշապուհ արքան Մեսրոպին ու Սահակին գրկած Վահագն Համաստեղութիւնից երեսուն վեց ջահեր վար բերին գրչութեան լոյս վառելու Արմանի-Հայաստանում: Այդ անունը կազմուած է Արտաշէս անունին աւելացրած "մա" վերջածանց: "Մա" նշանակում է՝ ծնել, սերել, սերունդ՝ Արտաշածին, ինչպէս Հայկ Նահապետը Յաբեթածին: Փոքր Ասիայի "Մա" դիցուհու անունը առաջացել է սումերական "Մա" ծնել, սերել բառերից, "մայր" ծնող աստուածուհու նշանակութեամբ:*

*ԱՍՏԱՐԱՄԱ, արմէն-հայ Նաիրեան նախնիներ՝ Միտաննի երկրի արքայի անունն է, որը իր դուստրը կնութեան է տուել Եգիպտոսի "Թուամեսին" անունով փարաւոնին: Նշուած անունները, բազում ուրիշ անձնանուններ, տեղանուններ ունեն Ար-մա անուան "մա" իմաստը: Արմէն-հայերի Արմա ցեղի եւ Արմանի երկրի անունները յիշատակուել են հայկական աւանդապատումներում, առասպելներում Մայր*

*Աբա Կատինա ասորի պատմիչի մատեանում եւ հասել Պատմահայր Մովսէս Խորենացուն: Իմաստուն Մովսէս, հաւաքել է առասպելներ, աւանդապատումների մասունքներ, մտովի գնացել նրանց հետքերով, որոնել ու գտել իր նախնիների ճշմարիտ պատումներ եւ գրել իր մատեանում, թէ՞, որպէս գանձ ամբարել այդ մատեանի գանձատանը: "Արմա" անունը Խորենացու մատեանում յիշւում է "Հարմա" - (հ)արմա անունով, որի "Հ" ձայնը աւելցուած է որպէս սաստկացուցիչ՝ ինչպէս ոգի-հոգի, սկա-հսկայ: Պատմահայրը այն յիշատակում է նաեւ "Արամանեակ" կամ Արմանեակ անուններում, որտեղ Արմանի երկրանունն է անձնաւորուած: Ժամանակի մութ, յետադէմ կղերականութիւնը ատելութեամբ լցուած "Պատմահայր Մովսէսի" հանդէպ, թունաւորեցին նրան, եւ դեռ դրանով յագուրդ չառած ոսկորները հանեցին գերեզմանից... գետը թափեցին: Ար-մա ցեղի հնագոյն պատմութիւնը, դեռեւս անյա՞յտ է, թէ մասամբ անյայտութեան մէջ է: Մարտիրոս Գավուքչեան, Արտակ Մովսէսեան, Աշոտ Մելքոնեան, Կարէն Մուսայելեան, Հովիկ Ներսիսեան, Ալեքսանդր Վարպետեան եւ Հայկի զարմից այլ իմաստուն պատմաբաններ, օտար գրաւոր աղբիւրների, նոր յայտնաբերուած արձանագրութիւնների տեղեկութիւնների, մարդաբանական, լեզուաբանական, աշխարհագրական տուեալների ուսումնասիրութիւններից յանգում են իրենց ցեղի մասին ճշմարիտ բացայայտումների: Եւ հնարաւոր է յետագայ պեղումներից աւելի ճշգրիտ տեղեկութիւնների յիշատակումներ երեւան գան: Հայկական Լեռնաշխարհի Արմանի եւ այլ անունների յիշատակումներ կան նրա տարբեր շրջաններում առանձին ձեւերով, որպէս տեղանուն ու ցեղանուն: Այդքանը բաւարար չէ՞ հասկանալու համար, որ Արմա, Արմանի ցեղը այնտեղ բնիկ է, այդ բնիկներից առաջացած ցեղ, ցեղախումբ է եւ հնագոյն ժամանակներից տարածուել Հայկական Լեռնաշխարհում: Հայկի զարմից այդ արեւորդիներն են գրելու արմէն-հայերի Ասքը: Հայոց իմաստութեան աստուած Տիր աստծոյ զարմից բանաստեղծներ էին արարելու Արմա ցեղի ազգի "Ասք"-ի պոէմը, չթողեցին նրանց՝ Վարուժանին, Զարենցին, Սիամանթոյին, Շիրազին այն յօրինելու: Մայր Անահիտ դիցուհու արարչութեան հէքիաթով արմէն-հայ մայրերի "Ծիրանի ծովի" երկունքով եկած բոցավառ արեւորդիներ ողջունելու են գալու Միհր արեւ աստծոյն, որոնց հանճարներից ժայթքած շանթերի լոյսով արարելու են իրենց ցեղի դիւցազներգութեան "Ասք"-ը:*

*Արժանի է յիշատակելու նաեւ "Ար" բաղադրիչով սկսող, վերջացող տեղանուններ, ինչպէս.*

*ԱՐՄԱՒԻՐ, նշանակում է Արմա ցեղի քաղաք, կամ Արմա անունով "Արմէն" մարդու քաղաք: Պատմահայր Խորենացին վկայում է՝ "Արամայիսը շինել է Արաւիր քաղաքը, իր անունով այն այդպէս կոչել": Վկայում է նաեւ, որ Գեղամ, Արմաւիրում ծնել է Հարմային, թողել նրան Արմաւիրում եւ ինք գնացել: Ըստ այդ վկայութեան Արաւիր քաղաքի բնակիչները պատկանել են Արման ցեղին: Հարմայի "Հ" նշանագրի հնչիւնը օգտագործուել է, որպէս սաստկացուցիչ նախածանց:*

*ԹԱԳԱՐԱՄԱ, (Թեգ - ԱՐԱՄԱ): Այդ երկրանունը հայոց մատենագրութեան մէջ յիշատակուել է որպէս՝ "Տուն Թորգոմայ": Մովսէս Խորենացին Հայկ Նահապետին համարել Նոյ Նահապետի թոռան թոռ՝ Թորգոմի որդին եւ հայերն էլ Թորգոմից սերուած: Գ. եւ Դ. դարերի եկեղեցաքան պատմագիրները նաեւ հայերին համարել էին Թորգոմի սերնդից, իսկ "Տուն Թորգոմայ" ձեւը համարել էին Հայաստան դրախտավայր երկիրը:*

*Յետագայի "Երրորդ Հայք" անուանուած շրջանի տարածքը եղե է Նաիրեան - արմէնական ցեղախմբերի հնագոյն բնակավայրերից մէկը: "Թոգարմայ" կամ "Թեգ-Արամայ" կազմուած է՝ "Թոգ" - "Թեգ" եւ "Արմա" - "Արամայ" բառերից, որոնցից առաջինը նշանակում է "ազգ", "ցեղ", "տուն", "երկիր", իսկ երկրորդը՝ "Արմա"-Արամայ", "Արմէ", "Արմէն" ցեղանուն: Հետեւաբար "Թոգարմայ"- "Թեգ-արամայ" նշանակոմ է՝ "արմա-արմէններ", կամ "արմէնների" ազգ, ցեղ, տուն, երկիր: Այս եւ բազում այլ անուններից յայդնի է, որ "Արմա" ցեղանուան եւ "Արմանի" երկրանուան յիշատակը պահպանուել է Հայկական Լեռնաշխարհի տարածքում: Ինչպէս Արմինա-Հայաստան աշխարհի սիրտ, ոգի, հոգի, խաչ լինելիութեան խորհրդանիշ դարձած Արարատը, նրա փէշերին յառնած Արարատեան դաշտի Արմաւիրը, Ծաղկանց լեռների Արամալէն, Վասպուրական լեռների Արմունան, Բագրեւանդ գաւառի Արամանան, Հայկական Լեռնաշխարհի սրտով հոսող սրբազան Արածանին-Արայի գետ, քառագագաթ Արագած-Արայի Գահ լեռը: Արմանի, արմէնների երկրի բազում այլ անունները յառնել են "Հայկական Լեռնաշխարհ" բնօրրանում: Անունք այդպէս են կոչուած եղել, դեռեւս Արմինա-Ուրարտու երկրի արմէն-հայ գահատոհմի անկումից եւ յաջորդ արմէնական գահատոհմներից շատ հազարամեակներ առաջ:*

*"Ար", արմէն արեւի ցեղը, ցեղերը ծագել են Փոքր Ասիայի արեւելեան շրջաններում, Հայկական-Լեռնաշխարհի կանխապոյն բնակիչների "Ար" աստծոյ պաշտամունքից որպէս առանձնացած ցեղ: Այդ ցեղը, բազմանալով, բնակութիւն է հաստատել Հայկական Լեռնաշխարհի տարբեր շրջաններում, տարբեր պայմաններում տրոհուել առանձին մասերի, կազմել առանձին ցեղային միաւորներ: Այդ ցեղային միաւորները ունեցել են տարբեր անուանումներ, որոնցից մէկը որդեգրել է իրենց պաշտած "Ար" աստծոյ անունը: Լեռնաշխարհի այդ շրջաններում գոյատեւող առանձին ցեղեր, համաձայն իրենց հաւատքի աստուածների անունների, նաեւ որդեգրած պիտի լինէին տարբեր անուններ: Սակայն այդ արմէն ցեղերի մեծամասնութիւնը իրենց տարբեր անունների հիմքում ունեցել են իրենց "Ար" Արա աստծոյ անունը, իրենց կոչել "Ար", Արմա-արմէն: Ժամանակի ընթացքում "Ար" անուան հնչիւնային տարբերութիւններով, կամ առանձին ածանցներով կոչուել են տարբեր անուանումներով:*

*"Ար" Արմա ցեղի կրակի, արեւի, լոյսի պաշտամունքը չի առնչւում իրանական "Արեա" արեւապաշտութեան հաւատքի հետ, որի պաշտամունքը այնտեղ սկսել է Հայկական Լեռնաշխարհի "Ար-Արայի" պաշտամունքից շատ աւելի ուշ ժամանակներում: Ինչու՞, չէ որ Հայկական Լեռնաշխարհից հարաւ գնացած հնդեւրոպացի պարսիկ մարդիկ իրենց հետ տարած կը լինէին նաեւ բնօրրանի "Արեա"- արեւի պաշտամունքը: Դեռ մինչեւ հիմա էլ "արեւը" առիւծի բաշերին բազմած փողփողում իրենց դրօշին, բոցոտ լոյս ճառագում երկրին: Հայկական Լեռնաշխարհի հարաւ արեւմտեան շրջանների դրացի սումերներ, աքքատացիներ արմէններին կոչել էին Արմա-Արմանի: Իսկ բնօրրան հարաւից դէպի լեռնաշխարհ տարածուած արմէնները սկզբնական շրջանին կոչուած պիտի լինէին իրենց պաշտած աստծոյ անունով՝ "Ար", որը պահպանուել է իրենց լեռնաշխարհի ներքոյիշեալ անուններում, դեռեւս քանի հազար-հազար տարիներ առաջ:*

*ԱԼԶԻ- որտեղ գտնւում էր Արմանին: Ասորեստանցիները այն կոչել էին Ալզի, Արմինա-ուրարտական արձանագրութիւններում Ալզի-նի: Հայ մատենագիրները այն անուանել են Աղձնիք, նման Ալզինի անուանը: Այդ անուան "Ալ" մասը առաջացել է "Ար" բաղադրիչից, ինչպէս արաբները այն անուանել էին՝ Arzan, Ասորեստանը՝ Arzun; Հին ժամանակներում երկրների անունների ծագումը առաջացել է երկրի մայրաքաղաքի կամ գլխաւոր քաղաքի անուններից: Աղձնիքի գլխաւոր քաղաք Արծն-ը ապացոյցն է Ալ-զի անուան՝ "Ալ" բաղադրիչը "Ար" լինելուն, ինչպէս Ալագեազ-Արագած անուններում: Կարելի է հաստատել, որ Ալ-զի (Ալզին) անունը Արմա (Արմանի) անուան փոփոխակն է, որը Արմէն ցեղի բնօրրանի կարեւոր շրջաններից է:*

*ԱԼԶԻ, նշանակում է "Ար-ցեղ": Ալզի-Աղձնիքը որպէս ցեղանուն, հայոց մատենագրութեան մէջ յիշատակւում է առանձին ձեւերով որպէս տուն Աղձնեաց, երկիր Աղձնեաց: Ալզի-ի արմէնները, Ար-Արմէն ցեղի կանխագոյն ու կարեւոր հատուածն էին: Հայկական Թագաւորութիւնների ժամանակ Աղձնիքի բդեշխութիւնը հայկական չորս բդեշխութիւնների առաջինն էր համարւում, եւ այն մեր ժամանակների "խնամիական", պապի ու տատի կապերի հետեւանքով չէր:*


**«ՔԱՁ ՆԱԶԱՐ»**
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան**
**Ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

## ՆԵՐԳԱՂԹ

*Շարունակուածէջ 16-էն*

ղովրդի եւ ներգաղթածների միջեւ, որի հետեւանքը կործանարար եղաւ Հայաստանի համար. երբ բարենպաստ պայմաններ ստեղծուեցին ու արհամարհուած «խորթ» ու «ախպար» ժողովրդի մեծ մասը լքեց հայրենիքը, նա իր հետ տարաւ նաեւ սերտ խնամիական յարաբերութիւններով կապուած տեղացիներին, Հայաստանը կանգնեցնելով անդունդի եզրին:

Առանց զոհի յաղթանակ չի լինում: Զանց առնելով վերոյիշեալ մօտեցումները վստահ ենք, որ Հայաստանը եւ յատկապէս Երեւանը աննախընթաց զարգացաւ ներգաղթից յետոյ ու դարձաւ եւրոպական տիպի գեղեցիկ քաղաք իր երեւանասէր, հայրենասէր, նուիրուած բնակչութեամբ եւ երկար տարիներ վայելելուց յետոյ նրա՝ որպէս նորահարսի ծնունդը, ներգաղթածը աղի արցունքներ թափելով հեռացաւ իր ոստանից, որը զարգացրել էր իր անօթի կամ կիսակուշտ, կամ երբեմն կուշտ փորով, այդ ընթացքում յաղթահարելով բազմաթիւ խոչընդոտներ որպէս ներգաղթողի, որովհետեւ հիմնականում ենթակայ էր ժողովրդի եւ յատկապէս կառավարութեան բարեացակամութեանը, որ բազմաթիւ արգելքներ էր դրել նրա վրայ...:

Երկար կարելի է գրել այս մասին, բայց առայժմ ուզում եմ այսքանով սահմանափակել: Իմ կարծիքով, չնայած վերեւում թուարկուած բոլոր թերութիւններին, հայոց պատմութեան մէջ ներգաղթը ոսկէ տառերով կ՚արձանագրուի որպէս հայ ժողովրդին իր հայրենիքում հաւաքելու հայրենասիրական, հայրենիքի հզօրացման աննախընթաց երեւոյթ: Անկախ, հայրենիքում իմ եւ բոլոր ներգաղթածների նկատմամբ կատարուած անմարդկային վերաբերմունքին, որի մասին ժամանակին կը գրուի, ներգաղթածների մեծամասնութեան հետ ես եւս նուիրուեցի հայրենիքի վերականգնման գործին ու տեղացի ժողովրդի հետ ուս-ուսի մենք կերտեցինք մեր չքնաղ, մեզ համար աշխարհում անփոխարինելի Երեւանը, որը հայի համար, որտեղ էլ նա ապրելիս լինի, գոյատեւման յոյսն ու հզօր ապաւէնն է իր նպատակների իրականացման ճանապարհին, որ այսօր կայ եւ պիտի մնա որպէս այդպիսին մեր պետականութեան հետ, ամրապնդելով սփիւռքահայի հաւատքը, յոյսն ու ապաւէնը գոյատեւելու ու ՄԻ ՕՐ վերադառնալու նրա ծոցը:

Նաւի խցում, որպէս ծնողներիս հոգու հանգստութիւն, ընտանիքի բոլոր անդամներն արդէն միասին էին ու սպասում էին իրենց յետագայ ճակատագրերին: Կամաց-կամաց համակերպուեցինք խցիկի պայմաններին ու արդէն յոգնած լինելով ինչպէս ֆիզիքապէս, այնպէս էլ հոգեպէս, աշխատեցինք մի կերպ քնել ու հանգստանալ: Յայտարարուած երեք օրում նաւը չհասաւ Պաթում, իսկ ժողովրդի ուտելիքը վերջանում էր: Պաթում հասնելը տեւեց եօթ օր: Մինչ այդ նաւն անցաւ Դարդանելի նեղուցը, մտաւ Մարմարա ծովը: Նրա ընթացքի ժամանակ մեզ հիացմունք էր պատճառում առափնեայ գեղեցկութիւնը, որը լրացւում էր նաւին ուղեկցող հսկայ կէտերի եւ այլ ձկների վտառով: Այնուհետեւ նաւը մտաւ Բոսֆորի նեղուցը եւ երեկոյեան հասաւ Ստամպուլի նաւահանգիստն ու կանգ առաւ այնտեղ որոշ ժամանակով (ասում էին, որ թուրք ծովայինները պէտք է նաւը անցկացնեն նեղուցով): Մեր «սրտները այրած» այրերը, որոնք անցել էին ցեղասպանութեան գեհենով եւ նրանց դաստիարակած նոր սերունդը՝ երիտասարդութիւնը աջ եւ ձախ ձեռքերը երկարած դէպի Ստամպուլ քաղաքը, դրանց միաժամանակ շարժումներով արտայայտում էին իրենց վրէժի ցասումը. «Շուտով կը հասնենք հայրենիք եւ մենք ձեզ ցոյց կը տանք.... Խորհրդային Միութեան միջոցով կը լուծենք մեր անմեղ նահատակների վրէժը, վերատիրանալով նաեւ մեր հողերին...»:

Ահա թէ ինչպիսի հոգեբանութեամբ ու երազանքներով էին ներգաղթում մեր ծնողները եւ նրանց նոր սերունդը Խորհրդային Հայաստան, որ այսօրուայ այս տողերը ընթերցողների համար կարող է անիրագործելի իղձ՝ ուտոպիա թուալ, բայց ջարդ տեսած մեր ծնողների համար ապրելու, գոյատեւելու ու նոր սերնդին հայ մեծացնելու ոսկէ առիթ էր:

Իսկապէս, Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապէս յետոյ, հայ ժողովրդի երազանքը մօտ էր իրականացման՝ վերատիրանալու իր հողերին Ստալինի անմիջական յանձնարարութեամբ, բայց Խորհրդային Միութեան վրայ գերտերութիւնների՝ Ամերիկայի եւ Անգլիայի գործադրած ճնշումներից յետոյ (օգտագործելով ԱՄՆ-ում ստեղծուած եւ Ճաբոնիայի վրայ փորձարկուած ատոմային ռումբի գործօնը) չիրականացան մեր իղձերը: Շատ բնական է, որ այդ պետութիւնները երբեք չէին ցանկանայ տեսնել Խորհրդային Միութեան աւելի եւս հզօրացումը՝ վերատիրանալով Արեւմտահայաստանին եւ Կիլիկիային, որի հետեւանքով նա նաեւ նաւահանգիստներ կ՚ունենար Միջերկրական ծովի ափին ու պարտադրուած չէր լինի կապուած մնալու Բոսֆորի եւ Դարդանելի նեղուցներին:

Վերջապէս մի թուրք նաւի կապիտան իր ուղեկցողներով նաւ բարձրացաւ ու նաւի անձնակազմի հետ «ճեխքելով» տախտակամածի վրայ հաւաքուած բազմութիւնը, որն աչքերով ատելութեամբ էր ուղեկցում թուրքերին, նաւի ղեկավարման գործն իր ձեռքը վերցրեց եւ նաւը շարժուեց տեղից, կամաց-կամաց հեռանալով գիշերուայ լուսաւորութեան մէջ հրաշքացած գեղեցիկ Պոլիսից ու ի վերջոյ թաղուեց մթութեան մէջ: Նաւը ճեղքելով Սեւ ծովի ջրերը հասաւ Պաթում, մտաւ նաւահանգիստ ու գցեց խարիսխը: Մեր աչքի առջեւ բացուեց մօտքներովս չանցած տեսարան: Մեր նաւից առաջ «Պոբեդա»-ն բերել էր 5000 ներգաղթ, որոնց եւ դեռ նախորդ կարաւանով եկածների մի մասի փաթեթաւորուած ապրանքները բացօդեայ նաւահանգստում կուտակուած էին, իսկ հորդառատ անձրեւը մտնում էր դրանց «ուղն ու ծուծը», որից յետոյ արեւի ճառագայթների տակ սկսում էին չորանալ ու նորից էր կրկնւում պատկերը, որի հետեւանքով փտում կամ փչանում էին դրանք:

Մեզ դիմաւորեցին հայկական ու Խորհրդային Միութեան դրօշակներով ու ազգային հիմներով, որից յետոյ նաւից իջեցնելով տեղաւորեցին բարաքներում (ժամանակաւոր փայտէ շինութիւն՝ կառոյց, որի ծածկը նստում է սիւներին): Սեւ հաց եւ կարտոֆելով (գետնախնձորով) ճաշ տուեին: Ոմանք դժգոհեցին հացից, ոմանք էլ հակադարձեցին դժգոհողներին, թէ սեւ հացը բժշկական նպատակով են տալիս..., արդէն ախորժակ չունէինք, մի քիչ կերանք...: Տեսածներս ու զգացածներս տրամադրութիւններս գցեցին, կարիք ունէինք հանգստի: Հանգստանալուց յետոյ բաւական կ՚ազդուրուեցինք: Մի քանի հոգով դուրս եկանք եւ քայլեցինք բազմատեսակ փաթաթուած ապրանքների կողքերով, հանդիպեցինք Երեւանից եկած երկու հոգու, որոնք ապրանքներն էին փնտռում միաժամանակ դժգոհելով, որ անտեր-անտիրական երկիր ենք ընկել, շունը տիրոջը չի ճանաչում...: Շարժուեցինք առաջ, մօտեցանք հեռուից աչքի զարնող գոյնզգոյն գորգով փաթաթուած փաթեթին, հիացանք գորգի գեղեցիկ տեսքով ու շօշափեցինք այն, գորգի թելերը մնացին ձեռքներիս, այն փտել էր, շատ ապրանքներ էին փչացել, որոնց տերերին խոստանալով իրենց ետեւից բերել դրանք, նրանց տեղափոխել էին Երեւան: Այս տեսնելով մեր կարաւանի ղեկավարները հրաժարուեցին գնալ Երեւան առանց իրենց ապրանքների: Գնացք չլինելու պատճառով մի քանի օր մնացինք Պաթումում, սակայն ուտելիքի նեղութիւն էինք քաշում՝ տրուած ճաշերը չէին գոհացնում մեզ, ուստի արդէն Պաթումի շուկային ծանօթ հին ներգաղթածների հետ, որոնք գտնւում էին այնտեղ, սկսեցինք գնալ շուկան ու որոշ իրեր կամ ապրանքներ ծախելով անհրաժեշտ ուտելիք գնել: Յարութիւն եղբայրս ձեռքի գեղեցիկ ժամացոյց ունէր, որը մի քիչ առաջ էր ընկնում, այն ծախեց ու ուտելիք բերեց: Պաթումում ժողովրդին ցուցակագրեցին, ընտանիքներին բաժանելով Հայաստանի քաղաքների, շրջանների ու գիւղերի վրայ: Յարութիւն եղբօրս պաշտօնի շնորհիւ մեր եւ հարսնուկիս ծնողների ընտանիքներին նշանակեցին Երեւան: Գնացքը եկաւ: Ժողովրդին իրենց ապրանքների հետ միասին տեղաւորեցին բեռնատար վագոնների մէջ (մարդատար վագոն չկար) եւ գնացքը շարժուեց դէպի Երեւան: Շոգեքարշը, վառուող քարածխի ծուխն ու հոտը տարածելով իր ետեւից, մտաւ Հայաստան եւ բաւական առաջանալուց յետոյ սկսեց աւելի երկար կանգնել կայարաններում, այդ շրջաններում նշանակուած ընտանիքներին իրենց ապրանքներով իջեցնելով գնացքից: Վերջապէս հասանք Երեւան:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԱԼԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը եւ այժմ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: «Մասիս» շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ:*


### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104



ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՅՈՒՇԱՐՁԱՆ
ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ
ԲԵՆԻԱՄԻՆ
ԺԱՄԿՈՉԵԱՆԻ






Սրտաբուխ նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 797-7680 կամ
(818) 429-2322 թիւերուն

Լաբակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ՚ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

## Հ.Բ.Ը.Մ.Ի ԱՐՏԱՒԱԶԳ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

Շարունակուած էջ 6-էն

եւ դերասան Գրիգոր Սաթամեանի թատերական երկարամեայ ծառայութիւնն ու վաստակը՝ Հ.Բ.Ը.Մ. ի Արտաւազդ Թատերախումբը վերանուանեց Հ.Բ.Ը.Մ. ի ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ Թատերախումբ, ինչ որ մեծապէս արժանացաւ խանդավառ ծափողջոյններու եւ բարձրաձայն շնորհաւորանքներու:

Տիկ. Վարդուհի Գազանճեան կարդաց Փրոֆ. Օշին Քէշիշեանի՝ իրեն տրուած հրաւէրի առթիւ շնորհակալական եւ Արտաւազդ Թատերախումբի արձանագրած որակաշատ վաստակի մասին իր գնահատական խօսքը: Կը գրէր Օշին.

–Կեցցեն Գրիգոր Սաթամեանը եւ Արտաւազդ Թատերախումբի բոլոր անդամները: Մասնաւոր շնորհակալութիւն Թատերասէր հանրութեան որ կը գնահատէ ու կը վայելէ Արտաւազդ Թատերախումբի ներկայացումները

Սրտի խօսքով իր կրկնակի շնորհակալութիւնները յայտնեց մեծարեալ բեմադրիչ եւ դերասան Գրիգոր Սաթամեան իրեն անակնկալ այս մեծարանքին համար: Ան յուզուած չեշտով դիտել տուաւ, թէ ընդհանրապէս մարդիկ կը մեծարուին իրենց մահէն ետք, մինչդեռ ինք՝ իր կենդանութեան: Կրկին անգամ իր երախտագիտութիւնը յայտնելէ ետք, Սաթամեան հանգամանօրէն յայտարարեց թէ ինք աւելիով պիտի շարունակէ իր թատերական ծառայութիւնները՝ մեր ազգային թատրոնին ու այդ ճանապարհով, հայ նոր սերունդին:

Մտերիմ եւ ուրախ մթնոլորտի մէջ տեղի ունեցած տօնական հացկերոյթին յաջորդեց, իր տեսակին մէջ եզակի գեղարուեստական յայտագիր մը, որ գործադրութեան դրուեցաւ Հ.Բ.Ը.Մ. ի ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ Թատերախումբի շնորհազարդ դերասան դերասանուհիներու անձնական մտայղացումներով մշակուած ելոյթներով: Այս իւրայատուկ, այլապէս հաճելի յայտագրով հանդէս եկան սիրուած դերասան դերասանուհիներ՝ Արի Լիպարիտեան, Ալին Խանճեան, Գրիգոր Սիմոնեան, Արամ Մուրատեան, Արփի Սամուէլեան, Վիգէն Պալապանեան, Ալեքս Խորշիտեան, Նայիրի Էմիրզեան, Նարինէ Աւագեան, Ռուբէն եւ Անահիտ Հարմանտայեան, Վազօ Նազար, Մարօ Աճէմեան, Ռաքէլ Բարսեղեան, Ալիս Քէշիշեան:

Գեղարուեստական յայտագրի աւարտին՝ սրտի խօսքով հանդէս եկաւ Հ.Բ.Ը.Մ.ի ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ Թատերախումբի մշտական նուիրատու օժանդակներէն՝ Տիկ. Սէսիլ Քէշիշեան, որ յանուն ներկաներուն շնորհակալութիւն յայտնեց համանուն թատերախումբի վաստակաշատ վարչութեան՝ ներկայ ճաշկերոյթի հրաւէրներու կապակցութեամբ, ինչպէս նաեւ իր շնորհաւորանքները առաքեց Արտաւազդ Թատերախումբին՝ «ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ» թատերախումբ վերանուանման ուրախ առիթով եւ մաղթեց նորանոր յաջողութիւններ:

Արդարեւ, օրինակելի ձեռնարկ մը, որ արժանի է ամէն գնահատանքի:

Բարի երթ Հ.Բ.Ը.Մ. ի ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ Թատերախումբին:

## 80-ԱՄԵԱՅ ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

հանրածանօթ վիպակներէն մէկուն խորագիրը համարուելէ, ու վերադարձած իր հեղինակին: Ողբերգութիւնը սակայն, իր «չապրած տարիներ»ուն մէջ կը գտնուի: Իսկ գիրքերուն ճակատագիրը... նոյնքան դաժան իրականութեան մը դուռը կը բախէ մինչեւ այսօր եւ արդարութիւն կը պահանջէ իր ընթերցողէն:

Իր «ապրած տարիներ»ուն բեղուն հոսքը գրական ստեղծագործութեան վերածող գրագէտն էր եղած ան: Իր իսկ բանաձեւումով, զոր կը գտնենք «Հայկական էսքիզներ»ու Բ. շարքի վերջերգին, կը գրէ. «Այս գիրքը դու ես թելադրում, իմ երկիր, եւ ես պարզ մի գրամեքենայ եմ, ձայնագրող ժապաւէն: Ուրեմն, նորից ճանապարհ: Եւ նորից քեզ, Հայաստան»:

Արդի հայ գրականութեան մեծօրեայ ուսանողը, երբ կը ծանօթանայ Վ. Պետրոսեանի ստեղծագործական բեղուն վաստակին, անպայմանօրէն պիտի մտապահէ նաեւ յաջորդաբար լոյս ընծայուած իր վէպերն ու վիպակները, ինչպէս՝ «Վերջին Ուսուցիչը», «Մենաւոր Ընկուզենին», «Ապրած եւ Չապրած Տարիներ», «Դեղատուն Անի» եւ այլ երկեր, որուն նշանաւորագոյնը եղաւ «Կրակէ Շապիկ» եռամաս ընդարձակ վէպը (1986), հարուստ իր նկարագրային խծբծանքներով ու քննադատութիւններով, ուղղուած սփիւռքահայ մեր իրականութեան ծնունդը եղող երեւոյթներուն: Արդարեւ, հայրենիքի մէջ ղեկավար դիրքերուն վրայ գտնուող շատ քիչ անձեր կային, որոնք լաւապէս գիտակ էին հայութեան սփիւռքեան կառոյցին ու հոգեբանութեան: Վարդգէս այդ փոքր խումբին կը պատկանէր, ու ճիշդ այդ պատճառով ինքզինքին թոյլ պիտի չտար յորդահոս ընթացքը իր սլաքներուն: Ներքին գրաքննիչը գրագէտին, պարտուած դուրս կու գար միտքերու այս անհաւասար բախումէն, երկբեւեռ վերիվայրումներէն: Ու հակառակ իր այս «մարդկային թուլութեան», տարագիր Սփիւռքի մեր կեանքին, հոգեբանութեան, երազին ու տենչերուն, եւ ընկերային գաղափարախօսութեան նուիրուած «Կրակէ Շապիկ»ը կոթողային վէպ մը ըլլալէ չի դադրիր, ան՝ որ նախապէս իր ամսագրային առաջին տարբերակով կոչուած էր «Դատարկ Աթոռներ Ծննդեան Տօնին» (տես «Սովետական Գրականութիւն» ամսագիրի 1986-ի համարները), որուն վերամշակուած ու փոփոխութիւններու ենթարկուած տարբերակն էր նոյն տարին իսկ 600 էջի սահմանի մէջ լոյս տեսած ստուարածաւալ եռամաս այս հատորը, որ անվերջ մենախօսութիւնն էր հեղինակին, իր դրական թէ բացասական կերպարներով, բանավէճերով ու եզրայանգումներով: Ինք ներկայ է որ բոլոր «հերոս»ներուն մէջ, ինքն է բեմադրիչն ու բեմայարդարը, իր փափաքով է որ անոնք կը վիճին ու կը հաշտուին, կը սիրեն ու կը սիրահարին, կ'երգեն կամ կը մերժեն երգել («Քելէ լաօ, քելէ էրթանք մըր էրկըր...»):

Կարճ՝ այս վէպը, հեղինակին գիտակցական կեանքի ու գրական կենսափորձի ամբողջ ճանապարհին հանրագումարն է, իր ազգային գաղափարախօսութեան եւ հաւատքի քննութիւնն է, իր կեանքին վէպն է: Գրած է 1983-86 տարիներուն: Սակայն, գրելէ առաջ, ան ապրած է իր վէպը անձնապէս: Հոն արտայայտած գաղափարներուն մենք հանդիպած ենք ոչ միայն իր առօրեայ զրոյցներուն ընթացքին, այլեւ՝ «Հայկական էսքիզներ»ու մէջ եւ իր հրապարակային ելոյթներու ընթացքին: Պատահած է նաեւ, որ կրկնութիւններու տժգունութիւնը տկարացնէ թափը իր թռիչքին եւ ազդեցութիւնը խօսքին:

1986-ին իր զոյգ տարբերակներով, Վ. Պետրոսեանի այս եզակի գործը, նոյն եւ յաջորդ տարիներուն իսկ հայրենի եւ սփիւռքահայ գրական մամուլի էջերուն տուաւ առատ նիւթ թեր ու դէմ կարծիքներու շատրուանումով (տեսնել նաեւ սոյն տողերը ստորագրողին զոյգ յօդուածները՝ «Զարթօնք»ի 6 Մայիս եւ 21 Հոկտեմբեր 1987-ի համարներուն մէջ): Արդարեւ, 1986-ին իր աւարտին հասած այս վէպը, իսկական դիմագիծը կու տար իր ժամանակին ու մարդերուն: Մինչ հեղինակը կը սարքէր անհեթեթ բեմադրութիւններ, որոնք կը վնասէին իր իսկ ազգային-ընկերային վարքագիծին: Այդ յօդուածին մէջ, կը մատնանշէինք հետեւեալ կէտերը.

– Հայ ժողովուրդին ճակատագրական աշխարհագրամասը:

– Եղեռնը՝ իր արհաւիրքով:

– Հողային մեր անժամանցելի դատը:

– Հայ եւ թուրք մերձեցումներ, – անհաշտ պայքար, ներո՞ւմ, մոռացո՞ւմ, ուրացո՞ւմ:

– Հայրենիքի ներկայ իրականութիւնը:

– Սփիւռքը այնպէս՝ ինչպէս որ է:

– Հեռանկարներ եւ եզրակացութիւն:

Մեկնելով մեր այս հարցադրումներէն, կը հաստատենք, թէ պէտք է ընդունինք, թէ Վարդգէս Պետրոսեան իր ժամանակի քաղաքական մտածողութեան մէջ (ընկերակցութեամբ իր պատանեկան շրջանի դպրոցակից՝ պետական բարձրագդեցիկ գործիչ ու իրեն ճակատագրակից Կարէն Դեմիրճեանի), հանդիսացաւ բացառիկ երեւոյթ մը: Մտքի մաքառումներով գրեց իր տասնեակ մը վէպերը: Նո՛յն տաղանդով ու կիրքով՝ ստանձնեց ու վարեց բարձրագոյն պաշտօններ: Հասաւ արագածնման կատարներուն եւ այդ բարձունքէն երբ աչքերը յառեց անոնց ստորոտին, տեսաւ ու հաստատեց գոյութիւնը կեանքի առեղծուածային վիհերուն, որոնց մէջ օր մը թաւալագլոր պիտի գտնէր տարաբախտ գրագէտի իր վախճանը:

Իսկ այսօ՞ր, սիրելի ընթերցող, երբ ներկայ ժամանակը կը յուշէ մեզի իր կեանքին 80-ամեակը, եւ ինք կը բացակայի ֆիզիքապէս մեր տեսադաշտէն ու մեր գրական հանդիպումներէն, մեր ընդվզումը կը յայտնենք հետեւեալ բառերով.

Մարդ արարածը կը ծնի ու կ'ապրի իբրեւ բնութեան մէկ պարգեւը: Անոր կեանքի վախճանին տնօրինումը զոհ պէտք չէ դառնայ մարդասպանական եւ ահաբեկչական արարքներու: Յուեգոյնը դատական վճիռներուն՝ ցմահ բանտարկութիւնն է: Մանաւանդ, երբ հայանուն մարդերու եղբայրասպան գնդակներու զոհ կ'երթան Վարդգէսէն մինչեւ Կարէն, Վազգէն ու Վահէ:

Հայ մարդեր, վերանկախացած մեր մայր հայրենիքի հողին վրայ ... դժբախտաբար կը վայելեն պաշտպանութիւնը անձեռնմխելիութեան եւ անպատժելիութեան: Յանուն պատմական ճշմարտութեան, վերջին 20 տարիներուն հայրենի հողին յանձնուած զոհերուն ու դահիճներուն ցուցակագրումը կը պահանջենք, առ ի դատապարտութիւն արարքին եւ կանխագուշացում՝ անոնց կրկնութիւններուն:

Արդա՞ր է մեր պահանջքը:

Ամէն ոք՝ թող հարց տայ իր խղճմտանքին:

**REQUEST FOR PROPOSALS (RFP #7567) WORKERS' COMPENSATION THIRD PARTY CLAIMS ADMINISTRATION**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified Third Party Administrators to administer the Authority's Self-Insured Workers' Compensation Program. A copy of the RFP may be obtained beginning August 20, 2012 at http://www.hacla.org/ps/ or call 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., by September 21, 2012 at the Authority's General Services Dept., 2600 Wilshire Blvd., 4th floor, Los Angeles, CA 90057.**

8/30, 9/6/12
CNS-2363994#
MASSIS WEEKLY

**VA Print Media**

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
**626-354-5924 • vamedia@yahoo.com**


ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
Փառատօն
FESTIVAL
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER
16, 2012
VERDUGO PARK
GLENDALE
1621 Canada Blvd., Glendale, CA, 91206
Starting at 11:00 am
Special Performances by:
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
Live Music
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
Dancing
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
Hosted by:
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938
Sponsors
amga
ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC
C1
MGN Paradise, Inc.
HIGH VISION
MISSION
WINE & SPIRITS
WELLS FARGO
Glendale West Pharmacy and Medical Supply
ZONE CEDARLANE TO-GO
Great Tasting Natural & Organic Foods
AABC
Մասիս
Vrej Pastry
www.massispost.com